This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

GRAD
EREN
705
BUHR

B 1,215,392

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
Համարը [illegible]
1328/1329

Basmajean, Karapet H.
Tospakan bewerадzew ardzan. agrut...

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

(18) 63 p.

ՏՈՍՊԱԿԱՆ

ԲԵՒԵՌԱՁԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ

ԳՐԵՑ

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊԱՃԵԱՆԻ
Կարգաթիւ ~~689~~ 1328

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ
1897

...ARIES

Grad
ERFN
705
E04R

ՏՈՍՊԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՆԱԶԿԵՐՏԻ

ՔԱՆԻ մ'ամիս յառաջ, Բազմավէպ, հանդէսի մէջ հրատարակուած (Յուլիս, 1896, երես 325–329) մէկ գրութիւնս՝ — «Յաւելուած եւ քննութիւն ցուցակի տոսպական կամ հայկական բեւեռաձեւ արձանագրութեանց (Հիւբշման)» — այսպէս կը վերջացընէի․ «Այսօր այսչափ։ Պատեհ առթիւ նորէն կը դառնանք այս խնդրոյն»։

«Պատեհ առիթ»ը ներկայացած կը կարծեմ, տեսնելով որ ուսումնասէր և գիտնական բարեկամներ կը քաջալերեն զիս և յորդոր կը կարդան շարունակելու համար ընտրած մասնաճիւղս։ Յայտնելով շնորհակալութիւնս նոյն յարգելի բարեկամաց՝ կը շարունակեմ ըստ խոստմանս։

Նախ՝ վերնագրիս առաջին բառէն սկսինք։

Ասորեստանաբանութեան (*assyriologie*) կրկին ուսուցիչներուս երէցն J. Oppert, որ Եւրոպիոյ մէջ բեւեռագիտութեան առաջին հիմնադիրն եղած է իւր երկու ընկերակցաց — Dr. Hincksի և Sir H. Rawlinsonի — հետ, կը հակառակի այս անուանակոչութեան՝ առարկելով, թէ «Այս ձև գրութիւնները *vannique* կոչելու համար պէտք էր որ միայն Վանայ մէջ գտնուէին ասոնք, մինչդեռ Հայաստանի շատ տեղերը կը գտնուին․ ուստի անիրաւութիւն չընելու համար՝ պէտք պիտի ըլլայ միւսներն ալ իրենց գտնուած տեղերուն անուններովը կոչել, ուսկից պիտի ծագի խառնաշփոթութիւն մը։ Ըստ իս՝ լաւագոյն է ընդհանրական և յարմար ուրիշ անուն մը տալ, քան թէ *vannique* կոչելով մասնաւորել»։

Յարգելի ուսուցչիս այս դիտողութիւնն իրաւացի գտնելով հանդերձ, դիտել տուի թէ՝ *vannique* անունն անոր համար տրուած է, որ առաջին անգամ Վանայ մէջ գտնուած են ասոնք, և թէ այս անունը կը գործածուի ոչ թէ իբրև գոյական՝ այլ իբրև ածական, որով *vannique* անուան մէջ պէտք է զօրութեամբ հասկնալ «Վանայ բերդին վրայի արձանագրութեանց տեսակէն» իմաստն։ Ասոր ալ պատասխանեց, թէ «Վանայ բերդին վրայ աքեմենեան, մարական և ասորեստանեան արձանագրութիւններ ալ կան»։ Ուրեմն, ըսի, *arméniaque* (= հայաստանեայ, հայաստանեան) անունը պահենք, ինչպէս որ գործածական դարձած է, և ինքն ալ գործածած է։ Աւելցուցի նաև՝ թէ կրնանք կոչել *urartienne* (= ուրարտեան) (1) ևս, քանի որ Սարգոնի արձանագրութեանց մէջ "Ուրարտի" անուամբ յիշատակուած է իրենց երկիրն, և ինքն ալ թարգմանած է "Հայաստան"․ ասով դարձեալ կը մօտենանք *arméniaque* անուանակոչութեան։ Իսկ Հերոդոտէն աւանդուած "Ալարոդ" անունն, որուն հետևելով Լընորման "Ալարոդեան" կը կոչէ այս ժողովուրդն և իրենց արձանագրութիւններն, (Lettres assyriologiques, Հտ. Ա. երես 119, 132 և 133), պարզապէս Արարատի մէկ տարբեր արտասանութիւնն է՝ հին Պարսից ձայնական գործարանին մէջ լ և ր արտաբերութեանց տարբերութիւն չդրուելովն. Ալարոդ ալ՝ Ս. Գրոց "Արարատ" և Ասորեստանեայց "Ուրարտի" ձևերուն միջին մէկ կերպն ըլլալը կը հաստատուի, որպէս կը պնդէ Րօլինսոն. (Herodotus, Հտ. Դ. երես 250–254)։ Թէև Ուսուցչապետն *proto-arméniaque* (= նախահայ) անունն ևս առաջարկեց այս կարգի արձանագրութեանց համար, սակայն առարկեցի թէ Քետացիք (Hétéens, Hittites) արդէն այսպէս կոչուիլ սկսած են գիտնականներէ. Հետևաբար՝ որոշեցինք հետևիլ հոսանքին և գործածել անխտրաբար թէ "հայաստանեան" և թէ "տոսպական" անունները, — «մինչև ցնոր տնօրինութիւն»։

Գալով վերնագրիս միւս բառին, — Մանազկերտ կամ Մելազկերտ անուան, — մեծահմուտ գիտնականն Սէյս կը համարէ թէ նոյն է ընդ "Մանաւազ-կերտ = Մենուաշի քաղաք (?)"․ (Journal of the Royal Asiatic Society, 1882, երես 540)․ իսկ Լընորման այս վերջին անունը (Մենուաշ) կը մերձեցունէ Ս. Գրոց מניին և Նիկողայոսի Դամասկացւոյ (տե՛ս Յովսեփ. Հր. Հն. Ա. 3, 6) Μινυάςին, որ գործածուած են Հայաստանի մէկ մասը նշանակելու համար (2)։ Գլ. Երեմ.

---

1. Ասորեստանեայ տառերն հայկական այբուբենով գրելու համար՝ կը հետևիմ Եւրոպացի գիտնականներէն ընդունուած կանոնին, և կը որոշագրեմ մինչև հիմայ անուշադրութեամբ ըրած մէկ սխալս՝ գրելով "Ուրարտի", փոխանակ գրելու "Ուրարդի"։ Ասորեստանեայ տառերն եբրայական այբուբենով ներկայացընելով՝ կ'ունենանք, ד = դ, ט = տ, ת = թ։ Այսպէսով Ուրարտի աւելի կը մօտենայ մեր "Արարատ" սովորական ձևին։

2. Անշուշտ մեր Մանաւազէն և Մենուաշէն

ԾԱ, 27, «արարատեան թագաւորութեան և աքանազեան գնդին» յիշատակութիւնը կ'ընէ, ըստ Եօթանասնից Թարգմանութեան (¹), մինչդեռ ըստ եբրայական և ճշդագոյն բնագրին է՝ מַמְלְכוֹת אֲרָרַט מִנִּי וְאַשְׁכְּנָז (մամլխոթ արարատ միննի ուաշքնազ) = "Արարատայ, Միննւոյ և Աքանազայ թագաւորութիւնք,,։ Երեմիայ սոյն համուածն՝ Ս. Գրոց ասորական թարգմանութեան մէջ դրուած է, ըստ հրատարակութեան Տ. Leeի, Լոնդոն, 1823 :ܘܕܐܫܟܢܙ ܘܕܐܪܡܢܝܐ (²) ܕܐܪܪܛ ܡܠܟܘܬܐ (մալքութօ դարարատ՝ ուէդարմէնի, ուէդաշքանազ) = "Արարատայ և Հայաստանի և Աքանազայ թագաւորութիւնք,,. ուստի Միննի կը նշանակէ "Հայաստան,,, ինչպէս կը մեկնեն նաև եբրայական բառագիրք. բայց աւելի ճիշդը՝ Միննի կը նշանակէ Հայաստանի մէկ մասը միայն, և ի մասնաւորի Ուրմիոյ լճին հարաւային կողմի երկիրն, ըստ նորագոյն հետազօտութեանց Բելքի, (Աշխարհագրական Հանդէս, 1896, Ա. երես 27-36), և ոչ "Վան՝,, ինչպէս կը կարծէ Լնորման. (Lettr. assyr. Ա. երես 22, 148, եայլն)։ Գեսեննիուս ալ իւր եբրայերէն հոյակապ բառագրքին մէջ Միննին նոյնացընելով "Հայաստանի,, հետ, "Մանաւազ = Մանուազ,, անուան և անոր միջև խնամութիւն մը կը նկատէ։ Նոյն համուածին մէջ Գեսեննիուս այսպէս կը մեկնէ նաև *Armenia* բառն, հետևելով Bochartի(³). — եբր. הַר (հար) կը նշանակէ "Լեառն,,, מִנִּי = "Միննի = Հայաստան,,։ Ուրեմն *Armenia* = הַרמִנִּי (հարմիննի) կը նշանակէ բառ առ բառ՝ "լեառն Միննւոյ,, = լեռնային Հայաստան = Բարձրաւանդակ Հայաստանի (¹)։

⁂

Հիմայ գանք մեր բուն նպատակին։

Ներկայ արձանագրութիւնը՝ զոր անցեալ անգամ յիշած էի ԼԳ թուահամարին տակ, (Բազմ. հանդ. 1896, երես 328), 1մ,20հմ երկայնութեամբ և կէս մետր լայնութեամբ ու նոյնքան բարձրութեամբ քարի մը վրայ գրուած է, որ կը գտնուի բաւական լաւ վիճակի մէջ։ Օրինակած է տեղւոյն (Մանազկերտի) երկրաչափն, իսկ հրատարակած և մեկնած է Ասորեստանաբանութեան կրտսեր բայց հմուտ ուսուցիչը Վեր. Հ. V. Scheil, ի թերթին Recueil de Travaux relatifs à la Philologie et à l'Archéologie égyptiennes et assyriennes, Հտ. ԺԸ, (1896), երես 75-77։

տարբեր է Հրէական Հնութեանց մէջ Յովսեպոսէն յիշուած Μονόβαζος թագաւորն Ադիաբենի, թէ և ըլլայ նոյն լեզուաբանական տեսակէտով։

1. Ս. Գրոց Եօթանասնից թարգմանութիւնն, որ իբրև բնագիր ծառայած է մեր նախնեաց, շատ աղաւաղութիւններ կրած է. այսպէս՝ Երեմիայ յիշեալ կտորը կը գտնենք օրինակի մը մէջ, — βασιλεῖς ἄρατε παρ' ἐμοῦ, καὶ τοῖς Ἀχαναζέοις — "պատրաստեցէք զթագաւորս որ առ իս, և Աքանազեանց,,։ Այս օրինակին մէջ Արարատ անուան տեղը բռնած է ἄρατε հրամայականն՝ αἴρω = "պատրաստել, գըրգռել,, և այլն բայէն, որ յառաջ եկած է Արարատ անունը սխալ կարդալէն. նոյնպէս սխալ ընթերցման արդիւնք է նաև Աքանազեանց ձևն՝ որ թերևս ըլլայ հայցական, փոխանակ տրականի։ Ուրիշ աւելի ընտիր օրինակի մը մէջ կը գտնենք — βασιλειαις αραρεθ... ασχαναζεοις (Երեմ. ԻԸ. 27)։

2. Տպագիրն ունի ܕܐܪܪܕܛ (դարարդատ), որ անշուշտ տպագրական սխալ է՝ ր և դ տառերը շփոթելով։

3. Bochart, *Phaleg* Ա. Գլ. Գ. երես 19-20, ուր կ'ըսէ նաև թէ Ս. Գրոց "Աքանազ,,ն՝ Փռիւգիան է, ինչպէս կ'ընդունէին նոր բանասէրք ևս։

1. Հ. Ղևոնդ Վ. Մ. Ալիշան ալ տարբեր մեկնութիւն կու տայ՝ ըսելով, – «կարծիք է Ս. գրոց մեկնչաց՝ թէ նոյն իսկ մեր ազգի կամ երկրի անունն ըստ օտարաց, Ար-մենի կամ Ար-միննի, եբրայերէն՝ Լեառն Լուսնի նշանակէ, իբր թէ լերանց վրայ լուսնի դիտողք եղած ըլլան՝ յիշեալ դրակից Քաղդէից նման». (Հին հաւատք Հայոց, երես 100)։ — Միննի "եբրայերէն... Լուսին,, չի նշանակեր. եբր. «լուսին» է לְבָנָה (լըբանահ = լվանա) և שַׂהַר (սահար), արամերէն סַהַר (սահար). իսկ հնդեւրոպական լեզուաց մէջ միննի ձևին մօտ բայց "ամիս,, նշանակող բառեր չեն պակսիր, զոր օրինակ. յն. μήν, լիթ. mênu, լտ. mensis, ն. բ. գերմ. Monat, անգղ. month, եայլն. սանսկրիտ մաս՝ թէ "ամիս,, կը նշանակէ և թէ "լուսին,,։ Եթէ հնդեւրոպականով լուծել ուզենք՝ ուրիշ ճամբայ մը կը բացուի մեր առջև. — Իրանեան լեզուաւ Արմէնիայի մօտ բառ մը պէտք է գոյութիւն ունենայ և նշանակէ "արևմուտք,,, ինչպէս վրացերէնը կը նշանակէ "հարաւային,,. այս բառը թերևս ըլլայ "Խարաման,,, որ կը հաստատուի Եզնըկայ սա համուածով. "Այլ թէ Արհմն չար կարծիցի նոցա, վասն զխաւարամանի անունն յանձին կրելոյ՝ առ ի յարևէ զարեգակնատեսնե-ցիկսն արկանելոյ, ուստի և զանունն իսկ ըղ-

Ահաւասիկ արձանագրութեան ընթերցումն, ըստ Հ. Շէյլի.

1. (Յ. աստուծոյ). Խալ-դի-ի-նի-նի ուշ-մա-ա-շի-ի-նի [յ. աստուծոյ.] Խալ-դի-ե ե-[ուրիյե]

2. [յ. մ.] Մե-ի-նու-ա-ու-շէ (յ. մ.) Իշ-պու-ու-ի-նի-ե-խի-նի-շէ

3. ի-նի սու-սի-ե շի-դի-իշ-թու-ու-նի Է-ԳԱԼ. [շի]-դի-իշ-թու-ու-նի

4. թա-ա-դու-ու-սի-ի-ե (յ. մ.) Մե-նու-ա-նի (յ. մ.) Իշ-պու-ու-ի-նի-ե-խե

5. երիլաշ թար-ա-ի-ե երիլաշ ալ-ա-սու-ու-ի-նի-ե երիլաշ (յ. ե.) Շա-ու-րա-ա- ու-ե

6. երիլաշ (յ. ե.) Բի-ի-ե-ի-նա-ա-ու-ե երիլաշ ե-րի-ե-լա-ա-ու-ե ա-լու-սի

7. [յ. ք.] Տու-ուշ-պա-ա պա-ա դուպ-րի (յ. աստուծոյ.) Խալ-դի-ի-նի-նի ուշ-մա-ա-շի-նի

8. (յ. աստուծոյ.) Խալ-դի-ի-ե ե-ու-րի-ի-ե (յ. մ.) Մե-ի-նու-ու-ա-շէ

9. [(յ. մ.) Իշ-]պու-ու-ի-նի-ե-խի-նի-շէ ի-նի սու-սի շի-դի-իշ-թու-ու-[նի] (1)

Զոր կը թարգմանէ.

« Ա՛ռ մեծ Խալդեանս, առ տէրն Խալդիս, Մենուաշ,



խարամանեայ առ ,,: (Եղնիկ, Բ. Ժ): Գիտենք նաև թէ Շապուհ ինչ պատասխանեց առ Թագաւորն Ճենաց՝ երբ այս վերջինս փախստական Մամգունը կը պահանջէր. “ Մի թուեսցի քեզ դժուար,... վասն անխառն զքեզ առնելոյ՝ հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզր երկրի և ի մուտս արևու, որ հաւասար է նմա մահու ,,. (Խոր. Բ. Ա). վասն զի զՄամգուն ղրկած էր Հայաստան. “ առաքէ զնա, ըսէ վտարանդի, առ գործակալս իւր որ ի Հայս ,, (Անդ):

1. Անկիւնաւոր փակագիծն [ ] կը նշանակէ կորած և կամ Շէյլէն ընթերցուած. իսկ աղեղնաձև փակագիծն ( ) կը նշանակէ յայտարար նշանն յաջորդ յատուկ անուան, այսպէս (յ. աստուծոյ.) = յայտարար աստուծոյ. (յ. մ.) = յայտարար մարդոյ. (յ. ե.) = յայտարար երկրի. (յ. ք. = յայտարար քաղաքի:

որդի Իշպուինեայ, Նորոգեաց զայս սուսի. Նորոգեաց աւերեալ պալատն վասն (?) Մենուաշի, որդի Իշպուինեայ, արքայ հզօր, արքայ մեծ, արքայ երկրին Շաուրացւոց, արքայ երկրին Բիէյնացւոց, արքայ արքայից, իշխան Տուշպայ... Առ մեծ Խաղտեանս, առ տէրն Խալդիշ, Մենուաշ, որդի Իշպուինեայ Նորոգեաց զայս սուսի »:

Այս արձանագրութեան հետեւեալ տողերն կը կարդամ ես, ըստ հրատարակեալ բնագրին,

2. [յ. մ.] Մէ–ի–նու–ու–ա–շ(է) (յ. մ.) իշ–պու–ու–ի–նի–է–խի–ի–նի–շ(է)

7. [յ. բ.] Տու–ուշ–պա–ա պա–ա–ում–րի.....

9. [յ. մ.) իշ–]պու–ու–ի–[նի–]է–խի–նի–շ(է).....

Իսկ ամբողջ արձանագրութիւնը կը թարգմանեմ այսպէս.

1. « Խաղդեան աստուածոց շնորհիւն, Խաղդեա՛ց իշխանք,

2. « Մենուաշն Իշպուինեան,

3. « Նորոգեաց զայս տաճար. Նորոգեաց (նաեւ) զպալատն,

4. « զհնացեալն, Մենուաշի Իշպուինեայ,

5. « (որ է) արքայ հզօր, արքայ մեծ, արքայ երկրին Շաուրացւոց,

6. « արքայ երկրին Վանեցւոց, արքայ արքայից, պետ

7. « քաղաքին Տոսպայ: Խաղդեան աստուածոց շնորհիւն:

8. « Խաղդեա՛ց իշխանք, Մենուաշն

9. « Իշպուինեան Նորոգեաց զայս տաճար »:

*
* *

Արդ սկսինք տող առ տող լուծել և քննել, ինքզինքս արդարացընելու և պաշտպանելու համար, թէ ինչո՛ւ դասատուէս և ուրիշ ասորեստանագէտներէն տարբեր կերպով կը մեկնեմ:

1. Այս աստուծոյ անունն ասորեստանեան արձանագրութեանց մէջ ես կը գտնենք. զոր օրինակ, Խորսաբադի պալատին մեծ արձանագրութեան համեմատ՝ երբ Սարգոն կ՚ըսէ, թէ՝ աւերեց Մուցացիր (= Արճէշ) քաղաքն ու գրաւեց մէջի բոլոր մարդիկն և հարստութիւնն, գրաւուած նիւթոց մէջ կը գտնուէին նաև Խալ–դի–ա և Բա–ագ–բար–տում կամ Բա–ագ–մաշ–տում աստուածոյ կուռքերն ու նուիրական անօթներն. " Ուր–ար–տի, Ուրար–տի երկրին (= Արարատեան) Թագաւորն իմացաւ Մու–ցա–ցիր քաղաքին աւերիլն և իւր Խալ–դի–ա աստուծոյն գրաւումն՝ „ ու բարկութենէն " անձնասպան եղաւ դաշունի մը հարուածով „: (Les Fastes de Sargon, տող 76–77: Համմտ. նաև Inscription des Annales, *Khorsabad*, սրահ Բ, Տխտ. 13, և Բոտտա 77):

Ինչպէս տեսնուեցաւ օրինակէս՝ երկու տեղ ալ Խալդիա ձևով կը ներկայանայ այս աստուածն, զոր Քէլիշինի արձանագրութիւնն կը յիշէ Խալ–դի–է ձևով (1). բայց բնիկ (տոսպական) արձանագրութեանց մէջ Խալ–դի կը կոչուի նա: Ուրեմն կրնանք հայերէն " Խաղդիա „ կամ " Խաղդի „ ըսել, անշուշտ նախապատուութիւնը տալով երկրորդ ձևին: Այս " Խաղդի „, ինչպէս անցեալ անգամ ըսինք, Ուրարտեանց " գերագոյն աստուածն է և հայր ամենեցուն „. հաւանականութենէ զուրկ է բոլորովին՝ և նոյն իսկ սխալ կարծելն թէ՝ Խալդի յատուկ անուն մը չէ, այլ հասարակ անուն մըն է, և կը նշանակէ " աստուած „, որպէս կը պնդեն Սայսեր (Zeitschr. für Assyr., 1887, Բ, երես 104 և այլն), և Riabinin (Mém. de la Société de ling. de Paris, 1894, տետր Ե, երես 381), այն Սայսեր՝ որ ընկերակցութեամբ Ménantի Խորսաբադի վերոյիշեալ մեծ արձանագրութիւնը լուծած ատեն՝ Խալդիա աստուծոյ համար սա ծանօթութիւնը կու տար. — " Nous retrouvons, dans les inscriptions de Van, le dieu *Haldia* comme dieu des Arméniens... „ (անդ, երես 7, ծանօթ. 1). և մինթէ նոյն Սարգոնի արձանագրութեան 76րդ տողին մէջ որոշակի չ՚երեւիր թէ Խալդիա և Բագբարթու " Հայոց „ աստուածներ են: Թէ և հարկ չմնաց այլ ևս ուրիշ ապացուցի դիմելու՝ յիշեալ երկու գիտնականաց առարկութիւնները ջրելու համար, սակայն ի ծանօթութիւն բանասիրաց կրնանք յաւելուլ միայն՝ թէ Բեհիստունի արձանագրութեանց մէջ ալ հայ անձնաւորութիւն մը կը յիշուի, որուն անունը թերևս առնուած ըլլայ Խաղդիա աստուծոյ անունէն. այսպէս՝ ըստ աքեմենեան բնագրին՝ Հա–ղ–դ–ի–տա (2), (Տխտ

---

1. Քէլիշինի արձանագրութեան մէջ երեք անգամ բարմնի շա (ԽԼՈԽ) Խալ–դի–է (= " ըլբունք Խաղդէ աստուծոյ „) յիշատակութիւնը կ՚ըլլայ, (տող 19, 27–28 և 34, ըստ ասորեստանեայ բնագրին), որ անշուշտ մեր ազգային մատենագրաց " Դրունք Խաղտեաց „ կոչածն է, ո՛չ թէ " չենք „, " տաճար „ և կամ " արձանագրեալ կոթող „, ինչպէս կը կարծեն Հէվեանս (Du Cauc. au Golfe pers. երես 526) և Շէյլ (Rec. des trav. égyp. et assyr., 1893):

2. Ինչպէս Spiegel առաջին անգամ սխալած է, նոյնպէս Kossowicz և այլք կը սխալին Հա–նի–դ–ի–տա կարդալով:

Գ, տող 78), և ըստ մարական բնագրին՝ խալ-դի-դա. (Տխտ. Գ, տող 36)։

Բայց ի՞նչու խալ-դի-ի-նի-նի ձևը թարգմանել "Առ խալդեանս" (Տէյլ, վերը), "Առ որդիս Խալդիի" (Սէյս, Cun. Insc. of Van; և Լէման-Բելք, Zeit. f. assyr.), "Խալդիի որդւոց համար" (Սէյս, անդ) և վերջապէս "Խալդեաց համար" (Լէման-Բելք, անդ)։ Կը թողում մէկդի միւս ասորեստանաբաններուն տուած քմահաճ մեկնութիւններն, և կը բացատրեմ իմ տարբեր թարգմանութեանս պատճառն. — Ասորեստանաբանք ընդունած են թէ տոսպական արձանագրութեանց լեզուն կապակցութիւն ունի կովկասի բարբառներէն միոյն հետ, որ անժխտելի է։ Այս բարբառներէն մասնանիշ կ'ըլլուին լազերէնն, աբխազերէնն, ուտերէնն([1]) և ի մասնաւորի վրացերէնն։ Արդ նկատելով որ վրացերէնի մէջ վերջադիր մասնըկան կրկնութիւնն յոգնականացուցիչ զօրութիւնն ևս ունի, և այս ձևն աւելի որոշ կը տեսնուի ...Ն(ի)Նի վերջաւորութեան մէջ, զոր օրինակ՝ სომხეთისანნი (սոմխեթիսան-նի) = "Հայք", ուստի մեր ծանօթ խալդինինի բառն պէտք է նշանակէ "Խալտի-ք", որուն սկիզբը գտնուած աստուածութեան յայտար արնշանն միասին առնլով՝ ինչպէս կը տեսնուի բոլոր այս կարգի արձանագրութեանց մէջ կ'ունենանք «Խալդեան աստուածք»([2]), և քովի ուշ-մա-ա-շի-ի-նի բառին պատճառաւ — Խալդինինի ուշմաշինի = «Խալդեան աստուածոց շնորհիւն», բառ առ բառ։ Ուշմաշինի երբեք չի նշանակեր "մեծ", որուն կը համապատասխանէ աղուզ կամ աղուզինիշ բառն, այլ՝ ինչպէս 1873ին Պարիսի մէջ գումարուած Արևելագիտաց Համաժողովոյն մէջ յայտնած է մերազգի մեծ բանասէրն Պատկանեան, կը նշանակէ "շնորհիւն". իսկ ըստ Դ. Հ. Միւլլերի "*gnädigen*" (Die Keilinsch. v. Aschrut-Darga) և ըստ Սէյսի "propitious, gracious" (JRAS), որոց երկուքն ալ կը նշանակեն "Նպաստաւոր, շնորհալի"։ Ոպպեր բոլորովին տարբեր կերպով կը թարգմանէ — "j'ai consacré", որով քերականական սխալ մ'ալ կ'ընէ. վասն զի տոսպական արձանագրութեանց մէջ կատարեալ առաջին դէմքն կը վերջանայ բիով. զոր օրինակ՝ մեր անցեալ անգամուան թարգմանութեան համեմատ, — խաուբի = "նուաճեցի"([1])։

Քանի մը տարի յառաջ "Աքադերէն և հայերէն" վերնագրին տակ՝ ի մէջ այլոց սա տողերը գրած էի Մասիս հանդէսին մէջ (Թ. 3988, 24 ապրիլ 1892). «Աքադերէնը կը պատկանի տուրանեան լեզուաց կարգին, զոր կը խօսէին առաջակողման Ասիոյ մէջ սկիւթական ցեղեր, Արիական և Սեմական ժողովուրդներէն յառաջ։ Ապա սոյն ցեղերը տարածուեցան երկրին արեւմտակողմն, և անտի հարաւ։ Ըստ իս՝ այս միջոցին էր որ "Խալտիք" անունը տրուեցաւ Պոնտոսի եզերաց մէկ մասին, իրենց Խալդի դից անուանէն։ Այս կարծիքը Լէման Գերմանացիէն շատ յառաջ յայտնած էի բարեկամացս, — հակառակ Կոստանդին Պերֆեռուժենի կարծեաց, որ Խալտեաց ժողովուրդը Քաղդէացի գաղթականներ կ'ընդունի, — սակայն նոցա հմտագոյնին իսկ ծիծաղն և եթ շարժած էի, որով չէի համարձակած ի հրապարակ հանել. արդ նկատելով որ այժմ Լէման և իրմէ յառաջ Գուդշմիդ ևս իմ կարծիքըն

---

1. Այս առթիւ անգամ մ'ալ հրապարակաւ կը յայտնեմ շնորհակալութիւնս նախ՝ առ Ուտէացի բարեկամս իմ Պրն. Գր. Նիկողոսեան, որ ուտերէնի վերաբերեալ բաւական նոր մըթերք մը շնորհեց ինձ՝ յատկապէս ի գիր առնըլով, և ազնուաբար նուիրեց Շիֆների Versuch über die Sprache der Uden գործն ևս. իսկ երկրորդ շնորհակալութիւնս կը պարտիմ առ Մխիթարեան բարեկամս իմ Վեր. Հ. Եսայի Վ. Տայեցի*, որ Վիեննական Մխիթարեանց Մատենադարանին Ձեռագրաց մէջէն ինձ համար օրինակեց "Փոքր Քերականութիւն Ուտեաց լեզուի" եւայլն գրութիւնը ամբողջապէս, ի սէր բարեկամութեան և ազգային բանասիրութեան։

2. Ասորեստանեայ լեզուն ալ ունի առոր մօտ յոգնակի մը, բայց առանց կրկնութեան, զոր օրինակ՝ եզ. շար, իլ, ալ. յգ. շար-անի = "արքայ-ք", իլ-անի = "աստուած-ք", ալ-անի = "քաղաք-ք"։

* Կը փոխադարձենք մեր խորին շնորհակալիքը. առ յարգոյ Ցօղուածագիրն, որ ի փոխարէն մեր առ ինքն յղած ընդօրինակութեան, կրկին աշխատութիւն յանձն առնելով բաղդատեր էր զայն իւր քով ունեցած ուրիշ օրինակի մը հետ, և մանրամասնօրէն նշանակելով տարբերութիւնները հաներ էր զայն ազնուութեամբ առ մեզ յղել։

Ն. Խմբ.

1. Անցեալ անգամուան թարգմանութեանս իբրև փոքրիկ ծանօթութիւն կը յաւելում՝ թէ այս խաուբի բառն իրարմէ բոլորովին տարբեր և սխալ կերպով թարգմանած են Լենորման և Մորթման. այսպէս՝ առաջինն թարգմանած է "չինեցի", իսկ երկրորդն թարգմանած է "այրեցի"։ — Ուտերէնի մէջ ալ կատարեալը կը կազմուի փիով կամ բիով, իսկ լազերէնի մէջ բիով։

ունեցած են, այլ ես չեմ վարանիր յայտա-
րարել զայն »: Ուրեմն մեր արձանագրու-
թեան առաջին տողին մէջ կրկնուած Խալդիէ
անունն իրաւամբ կրնանք թարգմանել "Խալ-
դի աստուծոյ պատկանող երկիր և ժողովուրդ
= Խալդիք,, , որուն կից եռջրիյէ = " իշ-
խան ,, բառին հետ կ'ունենանք բառ առ բառ
" Խալդիք իշխան = Խալդեաց իշխան =
Խալդեայց իշխանք ,, , վերջին ձևով իբրև
կոչական : Էոջրիյէ կը նշանակէ " տէր ,
պետ , քրմապետ , իշխան՝ ,, համեմատելով ա-
սորեստաներէն բէլ բառին հետ . սակայն նը-
կատելով որ Խալդեաց երկիրն կամ Ուրար-
տիի թագաւորութիւնն այլ և այլ փոքրիկ
իշխանութեանց կը բաժնուէր՝ յարմարագոյն
համարեցի " իշխան ,, թարգմանել , ու քանի
որ Մենուաշ խօսքն իրեն հպատակ իշխան-
ներուն կ'ուղղէ՝ յոգնակիի վերածեցի ես ալ :
Դ . Հ . Միւլլեր " տիկին կամ տիրուհի ,, կը
թարգմանէ այս բառն (անդ) . իսկ Ոպպեր
կը թարգմանէ " բոլոր , ամէն ,, և Հալէվի
" մեծ , հզօր ,, :

2 . Աւելորդ է նորէն կրկնելն թէ ...խի-
նիշ վերջաւորութիւնն " ...եան ,, պէտք է
թարգմանել . ուստի՝ " Իշպուինեան ,, , և ո՛չ
" որդի Իշպուինուայ ,, :

3 . և 9 . Հ . Տէյլ նոյնութեամբ թողած է
ռռշափ բառն , զոր Դ . Հ . Միւլլեր Աշրուտ-
Դարգայի արձանագրութեան մէջ կը թարգ-
մանէ " մատուռն , վիմափոր տաճար ,, , որուն
հետևելով Սէյս ալ կը սրբագրէ իւր " պատ ,
որմ ,, թարգմանութիւնն ի " մատուռն , տա-
ճար ,, : Շատ իրաւացի կը գտնեմ Միւլլերի
թարգմանութիւնն , քանի որ Ոպպեր կը կար-
ծէ թէ ռռշափ ասորեստանեայց ռշրանոց բա-
ռին կը համապատասխանէ և է գաղափարա-
նշանն " սար ,, ի կամ " գագաթան լերին ,, :
Բայց պէտք է յիշեցընել յարգոյ Ուսուցչա-
պետիս թէ՝ " սար ,, ի գաղափարանշանն ե-
ղող ասորիստանեայց ռշրանոց բառն աքադե-
րէն կամ սումերերէն (1) ՇՈՒ—ՍԻ բառն է ,
և ո՛չ ռռշափ : Միւլլերի " վիմափոր տաճար ,,
թարգմանութեան պատճառն այն է՝ որ Վիւնչ
վիմափոր խորշի մը մէջ գտած է նոյն արձա-
նագրութիւնն , և թէ երկրորդ տողին մէջ

1 . Աքադերէն կամ սումերերէն , կամ սու-
մեր—աքադերէն , է այն լեզուն՝ որ կը խօսուէր
Բաբելոնի նախնական ժողովրդեան մէջ , և որով
գրուած են Բաբելոնի ամենահին արձանագրու-
թիւնք : Ասորեստանաբանք սումերերէնը կը
ներկայացընեն գլխագիր՝ երբ պէտք ունենան
գրել լատինական տառերով : Ես ալ կը հետե-
ւիմ ընկալեալ սովորութեան :

կ'ըսուի որ Իշպուինիշ իւր Մինուաշ որդւոյն
հետ " Նորոգեց Խալդի աստուծոյ ռռշափն =
տաճարն ,, :

4 . Մենուա—նի անուան վերջի մասնիկն
նի՝ սեռականի հոլովանիշ համարելով կը
թարգմանեմ " Մենուաշ—ի ,, , այսինքն " Մե-
նուաշի պալատն ,, , փոխանակ թարգմանելու
" վասն ,, , մանաւանդ որ տարակուսանօք կը
դնէ Տէյլ . Այս մասնիկն Սէյս և Լէման կը
թարգմանեն " պատկանեալ ,, , որ հաւանակա-
նութենէ զուրկ չէ բոլորովին՝ եթէ համե-
մատուի իմ թարգմանութեանս հետ :

5 և 6 . Այս երկու տողերուն՝ մանաւանդ
6րդ տողին մէջն է՝ որ ըրած է իւր գիւտն
Հ . Տէյլ : — Մինչև ցայսօր անծանօթ մնա-
ցած էր տօսպական արձանագրութեանց " ար-
քայ ,, գաղափարանշանին բնիկ լեզուաւ ըն-
թերցումն , և կը կարդային շար՝ հետևելով
ասորեստաներէնի . բայց նկատելով որ ամէն
անգամ գաղափարանշանով ներկայացուած՝
" Ք . արքայ հզօր , արքայ մեծ , ... արքայ
արքայից ,, սովորական բանաձևն այս արձա-
նագրութեան 5րդ և 6րդ տողերուն մէջ նոյ-
նութեամբ կը գտնուի , և 6րդ տողն " արքայ
արքայից ,, գրելու տեղ՝ շար ե—րի—ե—լա—ա—
ու—ե ունի , կը ստիպուինք ընդունել թէ ե-
րիլաուե կը համապատասխանէ " արքայից ,,
բառին , որուն եզակին ալ կ'ըլլայ երիլաշ =
" արքայ ,, : Այս մի և նոյն բանաձևը կը
գտնենք նաև Սարդուրիշի մէկ արձանագրու-
թեան մէջ (Շուլց , Թ . ԽԱ 3) այսպէս .

8 . (յ . մ .) Սար—դու—րի—նի [(յ . մ .) Ար-
գիշ—տի—]խի

9 . շար թարաիե շար ալ—սու—ի—նի [շար ե-
րաեաուե Շու—]րա—ու—ե

10 . շար երաեաուե Բի—ա—ի—նա—ու—ե [շար]
ե—րի—լա—ու—ե (1)

1 . Սէյս կը սխալի երկուքի բաժնելով այս
բառն (Թ . ԾԱ3) — շար—ե խու—լա—ու—ե , որմէ
կը հետևեցընէ թէ՝ ուրարտեան լեզուաւ " ար-
քայ ,, կը կոչուէր խուլաշ . բայց Սէյսի խու
ընթերցումն ալ ուղղելի է ի րի , վասն զի այս
տառին մէկ գիծը կոտրած կը ներկայացընէ
Շուլց : — Վերջին պահուն կ'իմանամ Հ . Տէյ-
լէն թէ Լէման նամակ մը գրելով իրեն՝ հեր-
քած է " արքայ ,, բառին երիլաշ ըլլալն , և
Սէյսին կարծիքն հաստատելով կը պնդէ թէ
Շուլցի օրինակին մէջ խու—լա—ու—ե ձևով է :
Բայց՝ ինչպէս վերն ըսի , նորէն կը կրկնեմ՝
թէ յիրաւի Շուլց թէև խու ունի , բայց օրի-
նակութեան մէջ նոյն տառին մէկ մասը կո-
տրած նշանակած է . արդ կոտրած մասն ուղ-
ղահայեաց սեպի մը յաւելմամբ ամբողջացը-
նելով մեր կողմանէ՝ կ'ունենանք ՐԻ , որուն
ճշդութիւնը կը հաստատուի Մանազկերտի ներ-

11. ա-լու-ու-սի-է պատուժրի Տու-ուշ-պա-է (յ. ք.)

Աւելի հաստատ ապացուցի համար դիմենք Հ. Ներսէս Սարգիսեանի Նոր արձանագրութեան, զոր արդէն օրինակած է Շուլց (Թ. ԼԸ), որուն հետևեալ տողերը նոյնութեամբ կրնանք համեմատել մեր 4–7 տողերուն հետ.

5. (յ. մ.) [Սար-դու-րի-նի] (յ. մ.) Ար-գիշ-տի-է-խի
6. [շար ալ-սու-ի-]նի շար էրանաուէ Շու-րա-ու-է
7. [շար էրանաուէ Բի-ա-ի-նա-ու]ւ-է շար շարրանի-ու-է (1)
8. [ա-լու-ու-սի-է պատուժրի] Տու-ուշ-պա-ա-է (յ. ք.)

Հ. Շէյլ էրիլաշ = "արքայ,, բառէն կազմուած կը կարծէ տոսպական քանի մը անուններ, ինչպէս՝ Էրիախնի, Էրիմենաշ, Էրինաշ, և այլն. որոց վրայ կը յաւելու նաև մեր ազգային մատենագրաց "Արալէզ,,ն՝ զոր կը մեկնէ "արքայաստուածք, արքայք աստուածոց,,, հակառակ մեր մատենագրաց և բանասիրաց՝ որք կը կարծեն թէ ուղղագոյն ձևն է "Յարալէզք = յար լիզողք,, (2):

Շէյլ կը համեմատէ նաև Պղատոնի Հանրապետութեան մէջ յիշուած Էր անունն Էրիշի (1) հետ: Այս Էր՝ Արմենիոսի որդին է, զոր Մ. Էմին Խորենացւոյ ռուսերէն թարգմանութեան մէջ (երես 254 և 255) նոյն կը համարէ Արայ Գեղեցկին հետ: Հմմտ. նաև կիլիկեան Տարկոնդարիս, Տեզիարիս, Ուարիս անուններն ի Sachaù.

7. Ուրարտացի դպիրք սովորութիւն ըրած են տոսպական արձանագրութեանց ամէնուն մէջ ալ, առանց բացառութեան, Տուշպա = "Տոսպ,, անուան սկիզբն ու վերջը կրկնել "քաղաք,,ի գաղափարանշանն, որ ուրիշ

կայ արձանագրութեամբ՝ ուր բացարձակ կերպով կը տեսնուի թէ ՐՒ է, ոչ թէ խու:

1. Քիչ մը վերը՝ երես 5, 2րդ ծանօթութեան մէջ ըսինք թէ շար = "արքայ,, բառին յոգնակին կ՚ըլլայ շարրանի. բայց հոս գրիչն ու-է մասնիկն աւելցուցած է՝ որպէս զի ընթերցողն ուշադրութիւն ընէ "արքայ,, գաղափարանշանին յաջորդող ՄԷՇ տառին, որ յայտարար նշանն է յոգնակիի, և կարդայ էրիլա-ուէ: Տես նաև վարը, ծան. 1:

2. Եզնկայ "իբրև զծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն, և զպայն իմն ի մարդկանէ, և զառլեզն ի շանէ,,... "և ոչ ի շանէ ինչ ելեալ, եթէ...,, (Ա, ԻԴ) խօսքերէն կրնանք հետեւցընել թէ Յարալէզք տեսակ մը աստուածացեալ շուներ էին: Այս տեսակ աստուածացեալ շունք են նաև Մարդուկի հետեւորդ չորս շները — Ուկկումու = "յափշտակիչն,,, Ակկուլու = "ուտիչն,,, Իկշուտա = "կորզիչն,, և Իլթէբու = "յագեցուցիչն,,. (Հմմտ. Rawlinson. *The Cuneiformes Inscriptions of Western Asia*, Բ, երես 56, տող 22–25): Պրն. Սերովբէ Ալիշանին քով գլանիկ մ՚ալ կը գտնուի, որուն վրայ քանդակուած է Մարդուկ աստուածն գահի մը վրայ բազմած և առջևը շուն մը: Անշուշտ այս Մարդուկ աստուածն և իրեն շներն են որ կը յիշէ Յակոբ Սրճեցի իւր "Ի վերայ անկման կռոց,, բանաստեղծութեան մէջ՝ ըսելով թէ կը պաշտէին ի Խառան "Տէր (?) ընդ շունս,,. (ZDMG, ԻԹ, երես 110): Արդ՝ չե՞նք կրնար Մարդուկի շանց հետ նոյն համարել մեր "Յարալէզք,,ն:

1. Շէյլ կը կարծէ թէ էրիլա-ուէ յոգնակի սեռական ձևն եզակի ուղղականն ըլլայ էրիլ, և թէ լաուէ նաուէին հետ՝ յոգնականացուցիչ վերջաւոր ըլլայ: Բայց իմ խոնարհ կարծեօք՝ յոգնականացուցիչ վերջաւորն է միայն — սեռականի համար — ուէ կամ թերևս աուէ. այսպէս, եզակի ուղղ. էրիլաշ, յգ. սեռ. էրիլա-ուէ. ինչպէս նաև 5րդ տողին մէջ յիշուած Շուրա-ուէ՝ յգ. սեռականն է Շուրաշ կամ Շուրաշ անուան, և 6րդ տողին մէջ յիշուած Բիայնա-ուէ՝ յգ. սեռականն է Բիայնաշ = "Վան,, անուան: Jensen ևս քետացի արձանագրութեանց մասին գրած հմտական ընդարձակ ուսումնասիրութեանը մէջ կ՚ընդունի թէ ուէ՝ յոգնակի սեռական կը կազմէ աով վերջացած բառերու մէջ, ի տոսպական բեւեռագրական արձանագիրս. (ZDMG, 1894, ԽԸ, երես 434–436). ասով կը հաստատուի իմ կարծիքս: Նաուէ՝ սխալ ընդհատում մ՚է, նկատելով որ նա բառերու մէջ կը նշանակէ "քաղաք,,. ուստի նաուէ, ոչ թէ յոգնականացուցիչ մասնիկ է, այլ նա-ուէ = "քաղաք-ք,,: Լէման Բերլինի Մարդաբանական Ընկերութեան առջև (1892 ապրիլ 30ի և 1893 հոկտ.ի 19ի նիստերուն մէջ) հաստատած է թէ նա կը նշանակէ "քաղաք,,. այսպէս, Տուշպա-նա = "Տոսպայ քաղաք,, իբրև "Տոսպապոլիս,,, Ռուսախի-նա = "Ռուսաշին քաղաքն,,, և այլն: Նա վանկին յոգնականացուցիչ ուէ մասնկան հետ անշուշտութիւն չունենալն աւելի որոշ կերպով կը տեսնուի՝ մեր օրինակին Բիայնա-ուէ անունէն, որ ուրիշ արձանագրութեանց մէջ իբրև եզակի գրուած է Բի-ա-ի-նա-է, Բի-ա-ի-նա-դի, Բի-ի-ա-ի-նա-ի-դի, Բի-ա-ի-նա-աշ-թէ, և այլն ձևերով, որոնցմէ կրնանք հետևցընել թէ՝ նա արմատական է այստեղ; ինչպէս կը հաստատուի նաև արդի "Վան,, ընթերցման հետ համեմատելով: Ենթադրելով որ նաուէ յոգնակի սեռական կազմող մասնիկ մ՚է, այն ատեն պէտք էր որ ունենայինք *Բիայնա-նաուէ, որ երբեք գոյութիւն չունի. այսպէս նաև մեր արձանագրութեան Շուրաշ անունն՝ փոխանակ ունենալու Շուրա-ուէ, պէտք էր որ ունենայինք *Շուրա-նաուէ:

տեղ՝ սկիզբը միայն կը դրուի, ըստ սովորութեան։ Բայց այս անգամ դպիրը կը խոտորի իւր և իւր պաշտօնակցաց ուղղութենէն, և մեր արձանագրութեան մէջ Ցուշպա անուան սկիզբը ծանօթ յայտարար նշանը դնելէն յետոյ՝ Ցուշպաէն անմիջապէս ետքը փոխանակ նորէն կրկնելու նոյնը, կը դնէ բոլորովին նոր բան մը՝ ամբողջ գրերով գրուած, որ կը կարդացուի պա—ա—դուպ—րի կամ պա—ա—ռամ—րի։ Շէյլ ասկէ կը հետևցնէ թէ " քաղաք " կը կոչուի ուրարտեան լեզուաւ պա—ա—դուպ—րի. և սակայն կասկածելով՝ որ թերևս առաջին երկու տառերն (պա—ա) ընդօրինակողին մէկ սխալն ըլլայ, նախորդ Ցու—ուշ—պա—ա յատուկ անուան վերջին երկու տառից կրկնութեամբն, կ'առաջարկէ ընթեռնուլ միայն դուպրի։ Թող ներուի համարձակութեանս՝ թէ ես այս կարծիքէն չեմ. վասն զի, նախ՝ արձանագրութեան այս մասն քարին երկու երեսին վրայ տարածուած է այսպէս — Ցու—ուշ—պա— (և շարունակութիւնը միւս երեսին վրայ անցընելով) ա պա—ա....., որ անկարելի է չփոթութեան և կամ կրկնութեան տեղի տայ, մանաւանդ այնպիսի անձի մը՝ ինչպէս օրինակող պաշտօնէին՝ որ ասորեստանաբանութեան տեղեակ չըլլալուն համար, ստիպուած էր տառերուն վրայ նայելով գծագրել հաւատարմաբար, պատկերահանի մը դերը կատարելով պարզապէս։ Եթէ այս կտորը մի և նոյն տողի վրայ գրուած ըլլար՝ քիչ մը կասկածելի կրնար ըլլալ, ենթադրելով որ օրինակողն անուշադրութեամբ երկու անգամ գծած է պա—ա տառերն. բայց ոչ, ինչպէս տեսանք, մէկ մասը քարին մէկ երեսին վըրայ գրուած է, և միւս մասը քարին յաջորդ երեսին վրայ գրուած։ — Երկրորդ դիտողութիւնս այն է՝ որ Շէյլին դուպ կարդացած տառը պէտք է կարդալ ՈՒՄ։ Այս փոքրիկ շփոթութիւնն յառաջ եկած է՝ ԴՈՒՊ և ՈՒՄ տառից իրարու հետ ունեցած նմանութենէն. ԴՈՒՊ ունի չորս ուղղահայեաց սեպ, իսկ ՈՒՄ ունի երեք հատ միայն. և մեր օրինակին մէջ ալ ճիշդ երեք հատ է։ Ուստի ուրարտեան լեզուաւ " քաղաք " պէտք է կոչուի պա—ա—ռամ—րի կամ պառումրի։

Պարիս, 20 դեկտ. 1896.

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

Յ. Գ. — Արմաւրի մէջ վերջերս գտնուած և կոտրած աղիւսի մը կտորի վրայ գրուած (Սմբատեանց Բ. 23, Ցեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, 1896, երես 777) " կեղծ ու չինծու " արձանագրութեան (Բազմ. 1896, երես 328) հարազատութիւնը կը պաշտպանէ Բելք վաւերական համարելով զայն, առաջի Բերլինի Մարդաբանական Ընկերութեան. (Նիստ 16 մայիսի 1896. Հմմտ. (Zeitsch. f. Ethuologie, 1896, երես 315) [1]։

Նոյն

1. Կրկին անգամ կը խնդրեմ մեր ազգային բանասէրներէն որ եթէ սեպական նոր արձանագրութեան մը հանդիպին՝ բարեհաճին անոր նմանահանութիւնն ինձ յղել, այս հասցէով.

Basmadjian

108, Avenue de Neuilly.

PARIS - NEUILLY.

ԲԵՒԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

ԲԵՒԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՔԱՂՈՒԱԾՈՅ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

«ՆԻԿՈԼՍԿՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲԵՒԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ» ԳՐՔԻՑ

ՎՐԹ. ԽԱՉԱՏՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՎԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ
1897

ԲԵՒԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄՈՍԿՎԱՅԻ կայսերական Հնագիտական Ընկերութիւնը չորս տարի յառաջ, այն է 1893 թ. բարձրագոյն շնորհաց տառա դրամական օժանդակութեամբ, իւր անդամակիցներից երկուսին՝ պ. պ. Ա. Իվանովսկուն և Մ. Նիկոլսկուն՝ ուղարկեց Ռուսաց Հայաստան, յանձնելով նոցա հնագիտական խուզարկութիւններ ու պեղումներ կատարել այնտեղ. իսկ ձեռնարկութեան արգասեաց մասին՝ իւր ժամանակին մանրամասն զեկուցումն տալ ընկերութեան նիստերում։ Յիշեալ գիտնականները մեծ յաջողութեամբ կատարեցին իւրեանց վրայ առանձնած ծանր գործը, և ընկերութեան հրապարակական նիստերում, ի ներկայութեան Մոսկվայի կուսակալ՝ Նորին Կայսերական Բարձրութեան Սերգէյ Ալէքսանդրովիչի, կարդացին իւրեանց նշանաւոր զեկուցումները՝ Ռուսաց Հայաստանի մասին։ Այնուհետեւ նոյն երկու պարոնները զբաղեցան Հայաստանից բերած նիւթերի մշակութեամբ, որպէս զի մի օր ընկերութիւնը կարողանայ լոյս ընծայելու նոցա երկերը։ Ահա, վերջապէս, անցեալ 1896 թ. լոյս տեսաւ այստեղ Պ. Մ. Նիկոլսկու ուսումնական գործը, որի խորագիրն այս է. **Клинообразныя Надписи Закавказья. Изслѣдованіе М. В. Никольскаго. Москва 1896.** «Անդրկովկասի բեւեռագիր արձանագրութիւններ. — Հետազօտութիւն Մ. Վ. Նիկոլսկու. Մոսկվա, 1896 թ.»։

Դա մի շքեղ հրատարակութիւն է, բաղկացած 133 էջերից. գիրքը զարդարուած է Հայաստանի զանազան տեղերի ու վայրերի տեսարաններով, որոնց մէկն "Նաւանց Երասխայ" արտատպած է Հ. Ղ. Ալիշանի Սիսականից (տես. Սիսական էջ 415). բաց ի դորանից, այստեղ կան նաև բևեռագրեր, նոցա լուսատիպը, վերծանութիւնը ու ռուսերէն թարգմանութիւնը։ Իւր երկասիրութեան սկզբում հեղինակը զետեղել է մի ընդարձակ ներածութիւն, որ բաւականին լոյս է սփռում Հայաստան աշխարհի հնագոյն պատմութեան վրայ, և արժանի է հայ բանասիրաց խորին ուշադրութեան։ Այս պատճառաւ մենք պատշաճ համարեցինք քանի մի քաղուածքներ անել յիշեալ գրքից ու հաղորդել մեր ընթերցողներին։

Ութը դար նախ քան Քրիստոսի ծնունդը, գրում է պ. Նիկոլսկի, մեր Կովկասեան երկիրների յետին ծայրում, Երևանի, Կարսի և մասամբ Ելիսաբեթպոլի սահմաններում, կատարւում էր մի շատ խոշոր արշաւանք, որ ձեռնարկել էին Վանի քաղաքի թագաւորները հարաւից դէպ ի հիւսիս. դորա յիշատակներն բևեռագիր արձանագրութիւններն են, որոնք փորագրուած են մասամբ ժայռերի, մասամբ էլ Անդրկովկասի հինաւուրց շինուածոց վրայ, և կամ գտնւում են նոցա աւերակների մէջ։ Հարաւում՝ երկար տարիներ յամառութեամբ պատերազմ մղելով Ասորեստանեայց հզօր միապետութեան դէմ, որից նոքա ճզմում էին կորզել համաշխարհային տէրութեան գերիշխանութիւնը, Վանի թագաւորները մի և նոյն ժամանակ անխոնջ եռանդով ու մեծ յաջողութեամբ իւրեանց արշաւանքը ուղղում էին դէպ ի հիւսիս, յաղթելով բոլոր խոչընդոտ-

ներին, որ ներկայացնում էին նոցա բարձր լերանց զօտիքը, մեծ գետերի հոսանքը և հեռաւոր տարածութիւնները։ Ասորեստանեայց—Բաբելացւոց հետ նոքա տոհմային ազգակցութիւն չունէին, բայց Երասխի հովտի և նորան շրջապատող փոքր Կովկասի լերանց բնակիչների հետ նոքա, ըստ երեւոյթին, տոհմակից էին։ Միայն երկու Թագաւորների օրերում նոցա յաջողեցաւ նուաճել փոքր Կովկասի բոլոր գաւառները. և մենք պարզ նկատում ենք նոցա նպատակն — տարածել իւրեանց զինու զօրութիւնը աւելի հեռու՝ դէպ ի Մեծ Կովկասի բարձունքը. սակայն Ասորեստանի դէմ սկսած մահու կամ կենաց պատերազմը՝ անյաջող ելք ունեցաւ նոցա համար, և վերջ դրեց նոցա տիրապետութեան աճմանը հիւսիսում։

Հնախօսութեանը միայն վերջին ժամանակներս յաջողեցաւ գտնել ու մեկնել տիեզերական պատմութեան այս միանգամայն մոռացուած, բայց շատ նշանաւոր էջը։ Ասորեստանից դէպ ի հիւսիս եղած մի զօրեղ թագաւորութեան գոյութեան մասին, որ և նորա մշտական հակառակորդն էր, մենք առաջին անգամ տեղեկանում ենք նոյն Ասորեստանի թագաւորների տարեգրերից, ուր այդ թագաւորութիւնը Ուրարտու անունն է կրում, որ համապատասխանում է Աստուածաշունչ գրոց Արարատին։ Ասորեստանի թագաւորների արշաւանքները դէպ ի Ուրարտու, սկըսվեցան դեռ ԺԲ դար նախ քան Քրիստոս, Տիգլաթ — Պիլեսեր առաջին թագաւորի օրերում. սակայն Ասորեստանի միապետների տարեգրերը միայն Թ դարուց սկսվում են լցուիլ պէսպէս տեղեկութիւններով և հաշիւներով Ուրարտուի դէմ մղած անընդհատ և արիւնահեղ պատերազմների մասին, և այդ յատկապէս Սալմանասար երկրորդի ժամանակից (885–860 թ.)։ Ուշադրութեան արժանի է մանաւանդ Տիգլաթ—Պիլեսեր երրորդի (745 —723 թ.) արշաւանքը, որ շատ ծանր հարուած հասուց Ուրարտուին. և Սարգոն առաջնի (722–705 թ.) արշաւանքները, որոնք պսակվելով Ուրարտուի կատարեալ պարտութեամբ, միանգամայն վերջ դրին դարևոր կռիւներին, որ Սարգոնի օրերում յետին ծայրայեղութեան էր հասել։

Յիշեալ Սարգոն թագաւորի տարեգրերը (յայտնի բան է գրուած քարերի կամ աղիւսների վրայ, վասն զի մագաղաթի գործածութիւնը այն հին ժամանակներում տակաւին յայտնի չէր,) լի են յատկապէս այդ դիւցազնական զօռ պատերազմների նկարագրութեամբ, որ երկու ազգերի ու պետութեանց համար՝ մահու կամ կենաց հարց էր. կռիւների դիւցազն Ուրարտեան կողմից՝ Ուրծա էր կամ Ռուզա, որ կարողացաւ գրգռելով յարուցանել Սարգոնի դէմ բոլոր հիւսիսային ազգութիւնները ու ցեղերը։ Դա երկու ազգայնութեանց՝ Սեմական և Ուրարտեանի մենամարտութիւնն է, մղուած այն ժամանակուայ աշխարհի տիրապետութեան և գերիշխանութեան համար. իւրաքանչիւրը նոցանից ցանկանում էր իւր տեսակէտից ուղղութիւն տալ պատմութեան ընթացքին։ Սեմական ազգայնութիւնը յաղթանակեց. իսկ Ուրարտեանը պարտութիւն կրելով՝ դորանից յետոյ շուտով անհետացաւ պատմական ասպարէզից, և մոռացութեան մատնուեցաւ հազարաւոր տարիների ընթացքում։

Սակայն Ուրարտուի թագաւորները ամենայն դէպքում մրցելով Ասորեստանեայց հետ, յետ չէին մնում նոցանից՝ իւրեանց սխրագործութիւնները յաւէրժացնելու գործում են, մանաւանդ արշաւանքների և աշխարհակալութիւնների, կանգնելով յուշարձաններ և փառաւոր շէնքեր, ժայռերի ու պէսպէս շինութեանց վրայ արձանագրութիւններ փորագրելով, որոնք աւանդում են նոցա գործերի մասին։ Ուրարտեան թագաւորների կառուցած շէնքերը գտնւում են, յատկապէս, նոցա մայրաքաղաքի տեղում, այժմեան Վանում, ուր ամբողջ ահագին ժայռը մինչև ցայժմ կրում է իւր վրայ այս տիրապետողների հըսկայական աշխատանքի հետքերը, որոնք ճգնում էին ստեղծել այստեղ մի անմատչելի ամրոց։ Այստեղ իսկ, բուն ժայռի երեսին, որպէս և շէնքերի մէջում, որ Վանի քաղաքամասն են կազմում, գտնուած են ոչ սակաւ բեւեռագիր արձանագրութիւններ, որ պատկանում են այս թագաւորներին։ Եւ քանի որ գիտութիւնը տակաւ առ տակաւ սկսաւ հե-

տաքրքրուել այս յիշատակարաններով և ժողովել այն, երեւեցաւ որ նոյն տեսակի ու ծագման արձանագրութիւններ գտնւում են Վանի մօտ և նորանից հեռու ամենայն ուղղութեամբ։ Մինչև այժմ Վանի թագաւորներից մնացած արձանագրութիւններից հարիւրի չափը արդէն յայտնի են և նոցանից 87ը գիտութեան սեպհականութիւն են կազմում։

Այս յիշատակարանների և արձանագրութիւնների գտնելու պատիւը պատկանում է գերմանացի ուսումնական Եդ. Շուլցին, որ 1827 թ. ուղարկուած էր ֆրանսիական կառավարութեան կողմից հետազօտելու Վան քաղաքը՝ հնագիտական տեսակէտից, և ընդօրինակելու այնտեղ եղած արձանագրութիւնները (տե՛ս. *Journal Asiatique* (1840 թ.) Sur le lac de Van et les environs). Իսկ վերծանելու նախաձեռնութեան պատիւը՝ ֆրանսիական արեւելագէտ Ստանիսլաս Գիյեարին (Stanislas Guyard) 1880թ. (տե՛ս *Journal Asiatique*, 1880 էջ 540–543)։ Այս գործը շարունակեց յայտնի լեզուագէտ և ասորիոլոգ* Օքսֆորդի համալսարանի ուսուցչապետ Սէյսը (A. H. Sayce), որ, Գիյեարի մեթոդի շնորհիւ, վերլուծեց և 1881 թ. առաջին անգամ լոյս ընծայեց գիտութեան յայտնի բոլոր բեւեռագիր արձանագրութիւնները, և ապա մինչև այսօր էլ հրատարակում է այն՝ ըստ չափու երեւելոյն նիւթերի լոյս աշխարհ[1]։ Սակայն ներկայումս, բաց ի Սէյսից, արեւմտեան Եւրոպայում կան քանի մի ուսումնականներ, որոնք նուիրում են իրանց այս բնագրերի հետազօտութեանը, և այն մեծ յաջողութեամբ. զոր օրինակ, Վիեննայի համալսարանի ուսուցչապետ (D. H. Müller) Հ. Միւլլերը, որ շատ նպաստեց արձանագրութիւնների վերծանութեան գործին, Բեռլինի ուսուցչապետ Լեմանը, որ աշխատում էր ընկերակցութեամբ բնագէտ Վալդիմար Բելկի. վերջինս մինչև անգամ մի ճանապարհորդութիւն կատարեց Ռուսաց և Տաճկաց Հայաստանում՝ յատկապէս այս արձանագրութիւնները հետազօտելու դիտաւորութեամբ. Յենսէն, որ հրատարակեց քանի մի նշանաւոր նկատողութիւններ յիշեալ արձանագրութիւնների մասին։

Բայց չնայելով սոյն արձանագրութիւնների վերծանութեան մեծ յաջողութեանը, գիտութեան չյաջողեցաւ նմանեցնել Վանի արձանագրութիւնների լեզուն՝ ոչ մէկին լեզուաբանական յայտնի խմբերից, ոչ էլ բացատրել Վանեան կամ Ուրարտեան ժողովրդի ազգագրութեան խնդիրը։ Մինչև այժմ եւ գիտնական տերմինոլօգիան այս մասին չափազանց տատանւում է։ Մենք չգիտենք, թէ ինչպէս էր իրան կոչում ժողովուրդը, որի լեզուաւ գրուած են Վանի բեւեռագիր արձանագրութիւնները։ Գերմանացի հետազօտողների Վ. Բելկի և Կ. Լեմանի փորձը՝ Վանի ժողովուրդը Պոնտոսի Խաղտիք կոչելու, առ այժմ չպսակւեցաւ յաջողութեամբ. վասն զի յիշեալ ուսումնականների պնդումն, թէ այդ ժողովուրդը իրան իբր թէ անուանում էր Հալդինի՝ այսինքն Խաղտիք, շատ կասկածելի է։ Սակայն մենք չենք ժխտում այն կարծեաց մօտաւոր հիմնաւորութիւնը, թէ լատին և յոյն հեղինակների Χάλδοι, Χάλδιοι նոյն են Վանի կամ Ուրարտուի ժողովրդի հետ։ Երկրի բուն անունների մէջն էլ կան շատ մութ կէտեր, ըստ որում ըստ Ասորեստանեայց տերմինոլօգիայի այս երկիրը կոչւում է Ուրարտու (Արարատ), այն ինչ նոցա բուն յիշատակարաններում Բիայնա (Վան)։ Ի՞նչ կապակցութիւն ունին այս անունները միմեանց հետ, և ինչո՞ւ Ասորեստանեայց կոչումը չէ գտնւում Վանեան աղբիւրներում և ընդհակառակն Վանեանը Ասորեստանի. այս հարցերը առ այժմ չեն կարող ճշդիւ որոշուել։ Սակայն վերջին հանգամանքի հաւանական մեկնութիւնը, մեր կարծիքով, կարող է լինել այն, որ սոյն թագաւորութեան կենդրոնը Թ դարում, երբ Ուրարտեան ցեղերը առաջին անգամ համակերպւում էին մի տէրութեան, սկզբում հիւսիսումն էր, լեռնային աշխարհում, եթէ ոչ

* Ասորեստանի ու Բաբելոնի բեւեռագիր արձանագրութիւնների վերծանող։ — Ծան. թարգ.։

1. Տե՛ս The cuneiform inscriptions of Van. և այլն։

Մեծ Մասիսի մօտ, Երևանի դաշտավայրի սահմաններում, գոնէ, յամենայն դէպս, Վանի լճից դէպի հիւսիս։ Ասորեստանի Թագաւոր Սալմանասարը, Սուգունիա ամրոցն հասնելու համար, որ յիշեալ Թագաւորութեան կենդրոնատեղին էր, պէտք է լեռներ բարձրանար Վանից դէպի հիւսիս, և ապա կատարած յաղթութիւններից յետոյ իջնել ցած, Վան լճի ափերը։ Ի նկատի առնելով որ երևանեան դաշտավայրը, Արարատ և Արագած լեռների մէջ, հին ժամանակներից մինչև այսօրս Հայերից Այրարատեան նահանգ է կոչւում, շատ հաւանական է, որ այս դաշտավայրում, յիշեալ լեռներից անջրպետեալ սահմաններումն էր գտնւում ի հնումն Ուրարտուի Թագաւորութիւնը։ Բայց յետոյ, Ը դարու առաջին կիսում, այս Թագաւորութեան կենդրոնը, հաւանական է, որ ռազմագիտական գիտումների շնորհիւ, տեղափոխւում է հարաւ, Վան լճի արևելեան ափերը, ուր ներկայումս Վան քաղաքն է գտնւում։ Վանի ահագին անմատչելի ժայռը նորան շրջապատող լեռնաշղթաներով, առաջաւոր պատուար էր նոր աէրութեան համար սորա պատերազմների միջոցին Ասորեստանցւոց դէմ։ Այստեղ, հարիւր տարուայ ընթացքում, Թագաւորում էր վեց Թագաւորներից բաղկացած մի հարստութիւն, յաջորդաբար ստանձնելով իշխանութիւնը հօրից որդուն. յանձին այս խեղ հարստութեան համաշխարհային — պատմական ասպարէզ հանդէս է գալիս մինն հզօրագոյն ախոյեաններից, որոնց նմանը հազիւ ունեցել է երբ և իցէ Ասորեստանի մեծ միապետութիւնը։ Հաւանական է կարծել, որ նոր հարստութիւնը նոր տեղում իւր տէրութեանը տուաւ նոր պաշտօնական անուն, բայց Ասորեստանցիք շարունակում էին գործածելու առաջին աշխարհագրական տերմինները։ Այս ամենը հարկաւ կարօտ է վաւերացման, որ հազիւ թէ երկար կքաշէ. վասն զի մի արձանագրութեան վրայ (Զախալու Սեւանի լճի ափին), ինձ յաջողեցաւ կարդալ մի անուն, որ հնարաւոր է նմանեցնելու Ասորեստանցւոց Ուրարտու կոչման։ ինչ որ վերաբերւում է արձանագրութիւնների վերծանութեանը, պէտք է նկատել, որ այդ գործում մենք դեռ եւս հեռու ենք այն ճշգրտութիւնից, որով կարդացւում են Ասորեստանի արձանագրութիւնները. որովհետեւ Ուրարտեան բեւեռագրերի ընթերցանութիւնը, չնայելով առհասարակ իւր անպայման ճշգրտութեանը, տակաւին չէ կարելի ստուգել մի այլ լեզուով գրած բնագրից։ Միակ, նորերումս գտած երկ եզու արձանագրութիւնը Վանեան և Ասորեստանցւոց լեզուաւ, այնպիսի ողորմելի դրութեան մէջ է, համեմատութեան համար այնքան չնչին նիւթ է բովանդակում, որ մի քայլ անգամ յառաջ չմղեց արձանագրութիւնների վերծանութեան գործը, թէ և միւս կողմից նպաստեց այն համոզմունքին, թէ վերծանելու մեթոդը ճիշդ է, ճանաչուած գիտութիւնից և գործադրութիւնից ստացած արգասիքից։ Շատ բառեր ու քերականական ձևեր՝ Վանի արձանագրութիւնների բնագիրներում դեռ եւս անբացատրելի են մնում, և մենք քիչ յոյս ունենք, որ դոքա մեկնուին ապագայում, եթէ նորանոր և նշանաւոր գիւտեր չլինեն։ Բարեբախտաբար այսպիսի գիւտերում պակասութիւն չէ նշմարւում, և տարի չէ անցնում, որ գիտութիւնը չհարստանայ նոր յիշատակարաններով, նոր բնագիրներով հանդերձ, որոնք լոյս են սփռում նախկին բնագիրների մութ տեղերի վրայ։ Գուցէ, վերջ ի վերջոյ, նոր գիւտերի շնորհիւ՝ պարզուի Ուրարտացւոց ազգայնութեան խնդիրը, բայց ներկայումս գրականապէս կարելի է ասել, որ դա հասարակաց ոչինչ չունի Հայոց ազգութեան հետ, որ փոխարինել է Ուրարտացւոց այն երկրում, ուր դոքա էին բնակւում։ Շատ կարող է լինել, որ բազմաթիւ ցեղերի մէջ, որոնք ապրում են Կովկասեան լեռներում, գտնուին պատմական ասպարիզից անհետացած այս ցեղի ժառանգորդները, և լեզուաբանական համեմատութիւնները այդ տեսակէտից յամենայն դէպս ցանկալի են։

Այս արձանագրութիւնների, նոցա բովանդակութեան ու լեզուի, որպէս նաև այլ՝ նոցա ժամանակակից՝ յիշատակարանների հետազօտութեան շնորհիւ յարուցած խորին հետաքրքրութիւնը, ըստ մեծի մասին կա-

խօսել է այն հանգամանքից, որ այդ յիշատակարանները, բաց ի իրանց հնութիւնից ու բարձր նշանակութիւնից այն ազգի պատմութեան համար, որին դոքա պատկանում էին, ծառայում են մեզ իբր ուղեցոյցներ Ասորեստանցւոց — Բաբելացւոց քաղաքակրթութեան տարածելոյն դէպ ի հիւսիս։ Այս քաղաքակրթութիւնը, ստեղծուած միջագետեան թագաւորութիւնների մէջ, որոնց հնութիւնը հինգ հազար տարուց աւելի էր նախ քան Քրիստոս, ստացաւ շատ ընդարձակ տարածութիւն հին աշխարհում։ Առաջաւոր Ասիայի բոլոր ազգերը զանազան ժամանակ և զանազան չափով ընդունեցին Բաբելացւոց քաղաքակրթութեան բարիքները։ Յետին ժամանակը դորան նպաստեցին Ասորեստանցւոց արշաւանքները ու աշխարհակալութիւնները. բայց ներկայումս քաջ յայտնի է, որ 15 դար Քրիստոսից առաջ, այսինքն նախ քան Ասորեստանի հանդէս գալը, երբեւ համաշխարհային պետութիւն, բաբելոնեան կուլտուրան շատ տարածուած էր Ասորւոց, Պաղեստինէի, և հիւսիսային Միջագետաց ազգերի մէջ։ Բաբելոնեան լեզուն բեւեռաձեւ նշանագրերով այն գործիքն էր, որով կատարում էին փոխարինի յարաբերութիւններ առանձին, անկախ ազգերի մէջ. զոր օրինակ, Եգիպտոսի և Բաբելոնի. որպէս նաեւ դիւանագիտական լեզու էր օտար պետութիւններում. զոր օրինակ, Եգիպտոսում, ուր փարաւոնները բաբելոնեան լեզուն էին գործածում իւրեանց Ասորւոց և Պաղեստինէի նահանգների հետ գրաւոր յարաբերութեան մէջ։ Ասորեստանի — բաբելոնի լեզուն ամենայն տեղ հասկանալի էր, և երբ ուսումնասիրում էր նորան բաբելոնեան ցեղից օտար մի ազգ, բեւեռաձեւ նշանագրերի դժուարին սիստեմը ակներեւ է, որ մի առանձին խոչընդոտներ չէր ներկայացնում։ Միով բանիւ, նա էր այն՝ ինչ որ այժմ ֆրանսիական լեզուն է, և եթէ արդի ուսումնականներից մէկն՝ Էրնեստ Ռընանը ֆրանսիական լեզուն անուանեց տիեզերական և քաղաքակրթութեան մշանջենաւոր լեզու, 15 դար Քրիստոսից առաջ բաբելոնեան ուսումնականները աւելի մեծ իրաւունքով կարող էին ասել նոյնը՝ իւրեանց լեզուի մասին։ Ժամանակակից կուլտուրան չէ կարելի ֆրանսիական անուանել, այն ինչ Առաջաւոր Ասիայի կուլտուրան այն հնագոյն ժամանակներում Ասորեստան — բաբելոնեան էր ամենայն մասամբ, և Բաբելոնի լեզուն միանգամայն յարմարացրած գործիք էր այդ կուլտուրայի տարածելոյն համար։ Ահագին գրականական գանձեր բաբելոնեան ծագումից արտագրւում էին կաւային տախտակների վրայ և տարածւում էին ի սփիւռս աշխարհի. և հարկ է ենթադրել, որ Միջագետաց հեռաւորագոյն տեղերում, օտարացեղ ազգերի մէջ հիմնըւում էին ուսումնարաններ, դպրոց, ուր աւանդւում էին ասորեստանեան դժուարագոյն գրագիտութիւնը նշանագրերի անվերջ ադիւսակների, սիլլաբարների և այլեւայլ ձեռնարկ պատագրքերի վրայ, որոնց անհուն օրինակները ներկայումս պահպանուած են Բրիտանական Թանգարանում (Անգլիա)։

Ակադեմիաներ, մատենադարաններ, որոնք այս գիտութեան վարժարաններն էին, անկասկած գետնի տակ թաղուած մնացած են, ոչ միայն Ասորեստանի և Բաբելոնի սահմաններում, այլ և Ասորիքում, Պաղեստինէում, փոքր Ասիայում, Եփրատի վերին հոսանքներում և մինչեւ անգամ, գուցէ, մեր Երեւանեան նահանգում և Կարսի գաւառում։

Բաբելացւոց լեզուի հետ տարածւում էին նաեւ բաբելոնեան արհեստը, և կենցաղավարութեան համար անհրաժեշտ առարկաներ, և որ գլխաւորն է, այն իրաւաբանական կացութեան ձեւերը, որ ստեղծուած էին հին—միջագետեան աշխարհում։ Բաբելոնեան կուլտուրան մշակեց քաղաքացու իրաւանց մասին այնքան ճիշդ և կատարեալ գաղափար, որ Բաբելոնի և Ասորեստանի անհուն իրաւաբանական յիշատակագրերի շնորհիւ, վաղ ընդ փոյթ, հնարաւոր կ՚լինի վերականգնել բաբելոնեան իրաւանց գիտութիւնը, որի մէջ Ֆրանսիայի և Գերմանիայի ականաւոր իրաւաբանները չեն դանդաղում ճանաչելու հռովմէական իրաւանց նախատիպն. (*J. Kohler* und *F. E. Peiser*. Aus dem babylonischen Rechtsleben. I-II *1890–1891*). Միջազգային առեւտրական և այլ յարա-

բերութեանց վրայ՝ հին աշխարհում գրուած է այն համաշխարհային մտքի, այն բարձր մարդասիրական ուղղութեան դրոշմը, որով որոշւում են զուտ բաբելոնեան քաղաքակրրթութեան բոլոր արտադրութիւնները։ Միայն յետին ժամանակը Ասորեստան իւր աշխարհակալական ձգտումներով և զինուորական ճնշումներով՝ մտցրեց միջազգային յարաբերութիւնների մէջ բարբարոսութեան տարերք, և թոյլ էր տալիս իրան դէպ ի զայն գործածելու հզօրի իրաւունքը։ Բայց հնագոյն ժամանակը, 15 դար նախ քան Քրիստոս, մենք տեսնում ենք ազգերի մէջ ջերմ եղբայրութիւն, կենդանի փոխարինումն քաղաքակրթութեան բարիքների և բարձր նիւթական բարեկեցութիւն Առաջաւոր Ասիայի ազգերի մէջ։

Մարդկութեան զարգացման այս ժամամանակամիջոցին, երբ աշխարհս կրում էր իւր վրայ բաբելոնեան կրթութեան առաւելութիւնները, մեր ուշադրութեան ենթակայ են ոչ միայն խոշոր մեծութիւններն, որպիսիք են Ասորեստանը, Բաբելոնը, Եգիպտոսը, այլ և այն փոքր պատմական ազգութիւնները, որոնք այն ժամանակը պատկանում էին կուլտուրական ազգերի գերդաստանին, և բաբելոնեան կուլտուրայի տարածողներն էին կենդրոնից մօտ թէ հեռու երկիրներում։ Առանձին ուշադրութեան արժանի են Ասորւոց և Պաղեստինէի յիշատակարանները, որոնք մեծ քանակութեամբ սկսում են երեւան գալ։ Բայց ոչ պակաս ուշադրութեան արժանի է նաև այն ազգութիւնը, որ Ասորեստան—բաբելոնեան ժամանակամիջոցին ապրում էր այն ժամանակուայ աշխարհի հեռաւորագոյն հիւսիսում, Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքներում, Արաքսի հովտում՝ Վան, Ուրմիա և Սեւան լճերի մօտ, և թողեց մեզ իւր կենաց յիշատակարաններ։ Թէ՛ այս ազգը, որ ազգակցութեան կապեր չունէր Միջագետաց և Ասորւոց սեմական ցեղերի հետ, և գտնւում էր Ասորեստանցւոց—բաբելացւոց կուլտուրայի անմիջական հզօր ազդեցութեան ներքոյ, թէ նորա կուլտուրան միանգամայն պիտի կրէր իւր վրայ բաբելական դրոշմը, դորա մասին ակներեւ կերպով վկայում է արդէն այն հանգամանքը, որ Ուրարտեան թագաւորների արձանագրութիւնների ընագիրը գծագրուած է ասորեստանեան բեւեռաձեւ նշանագրերով։ Բաց ի դորանից՝ Վանի հնագոյն թագաւորներից մէկի՝ Ա. Սարդուրի երկու արձանագրութիւնները գրուած են ասորեստանեան լեզուաւ։ Բեւեռաձեւ նշանագրերի չափազանց դժուարին սիստեմը թեթեւացրած էր, բազմաթիւ նշանագրերից ընտրուած էին միայն մի քանիսը՝ հասարակները, և յարմարացրած էին Ուրարտեան լեզուի հնչումներին։ Արձանագրութիւնների ոճը ներկայացնում է նոյնպէս Ասորեստանի թագաւորների արձանագրութիւնների նմանութիւնը, որ և շատ նըպաստեց նոցա վերծանութեանը։ Եւ առհասարակ մենք տեսնում ենք, որ Վանի թագաւորները ամենայն բանում աշխատում են նմանել Ասորեստանցւոց, իւրեանց աշխարհակալութիւնների միջոցում, զինուորական ճնշումներում, ապարանքներ ու տաճարներ շինելում, արձանագրութիւններ էին կանգնում ամենուրեք, ուր մտնում էին զինու զօրութեամբ և ուր որ առժամանակ յաջողութիւն էին ունենում կամ մնում էին։

Բում Ուրարտեան ժողովրդի մէջն էլ մենք պէտք է ենթադրենք Ասորեստան—բաբելոնեան քաղաքակրթութեան լայն տարածութիւնը, ծանօթութիւն Ասորեստանի լեզուի և գրականութեան և կեանքի անհրաժեշտ առարկաների հետ։

Որովհետեւ այս ազգի յիշատակարանները գտնւում են Կովկասում, Ռուսիայի սահմաններում, և վկայում են թէ ասորեստան.բաբելոնեան կուլտուրան հասել էր մինչեւ Փոքր Կովկասի բարձունքը, այն ժամանակ հասկանալի է այն նշանակութիւնը, որ ունին ռուս գիտութեան համար այդ յիշատակարանները։

Վանի բեւեռաձեւ արձանագրութիւնները Ռուսաց սահմաններում առաջին անգամ, 1862 թուականին, գտաւ ս. Էջմիածնի աբեղայ Մեսրոպ Սմբատեանցը՝ այժմ արքեպիսկոպոս, Թէփէ—Տիպի գիւղի մօտ, Հայոց կարծեցեալ մայրաքաղաք Արմաւրի տեղում։ Երեսուն և երեք տարուայ ընթացքում արք-

եպիսկոպոս Մեսրոպը շարունակում էր և մինչեւ այժմ էլ շարունակում է որոնել և աշխարհ հանել այս նիւթերը՝ լոյս ընծայելով այդ ամենը ս. Էջմիածնում հրատարակուող «Արարատ» ամսագրում։ Արեւմտեան ուսումնականները երախտագիտութեամբ օգտւում էին քաղում նորա հրատարակած բնագրերից, թէպէտ և շատ անբաւարար էին համարում։ Ի 1892 թ. Մոսկվայի կայսերական Հնագիտական Ընկերութիւնը միտք յղացաւ ի մի հաւաքելով այս բոլոր նիւթերը՝ ենթարկել ուսումնական հետազօտութեան, և այդ նպատակով բանակցութեան սկսեց Մեսրոպ արքեպիսկոպոսի հետ։ Հայաստանեայց եկեղեցու այս պատկառելի պաշտօնեայն, սիրով ու յօժարութեամբ Ընկերութեան տրամադրութեան տակ դրեց իւր ունեցած բոլոր նիւթերը՝ արտատպած յօդուածները, լուսանկարները, ձեռքով ընդօրինակածները. այս ժողովածուին մէջ կային բաց ի հրատարակուածներից, նաեւ անտիպները։ Յիշեալ նիւթերի մշակութիւնը Ընկերութիւնը ինձ յանձնեց, և այս գործը ես կատարեցի՝ լոյս ընծայելով այն՝ Ընկերութեանս «Արեւելեան Մասնախմբի Հրատարակութիւնների» էջերում (հատոր Ա, մասն Գ), հետեւեալ խորագրով՝ «Վանի թագաւորների բեւեռաձեւ արձանագրութիւնները, որ գտնուած են Ռուսիայի սահմաններում» (էջ 375–453). «*Клинообразныя надписи ванскихъ царей, открытыя въ предѣлахъ Россій*»։ Այդ երկասիրութեան մէջ ես առաջին անգամ հրատարակեցի Ռուսաց սահմաններում գտնուած արձանագրութիւնները՝ բեւեռաձեւ նշանագրերով, նոցա փոխագրութիւնը (*) լատին գրերով ու թարգմանութիւնը. նոյն տեղում ամփոփեցի նոցա գտնուելու տեղն և առաջին հրատարակութեան վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները։ Այս գործս գնահատուեցաւ արեւմտեան ուսումնականներից, մանաւանդ պրոֆ. Կ. Լեմանի կողմից Բեռլինում, և պրոֆ. Սէյսի Օքսֆորդում։ Բայց իմ երկի երեւելուն շնորհիւ՝ Մոսկվայի կայսերական Հնագիտական Ընկերութիւնը հարողացաւ համոզուիլ, թէ ո՛րքան կցկտուր են այս արձանագրութիւնների մասին տեղեկութիւնները, և ո՛րչափ թերի են Մեսրոպ արքեպիսկոպոսի՝ Ընկերութեանը հասցրած արտահանածները, որով ըստ մեծի մասին ընդօրինակուած են ձեռքով, եթէ ի նկատի առնելու լինիք, որ սրբազանը ծանօթ չէ ոչ ասորեստանեան արձանագրութեան սիստեմին, ոչ էլ Վանի սիստեմին. բացի դորանից, թէ որչափ մեծ է պահանջը արեւմտեան գիտութեան կողմից դոցա փոքր ի շատէ բաւարար հետազօտութիւնը, ճիշդ նկարներ ու աւելի ստոյգ տեղեկութիւններ նոցա տեղագրութեան մասին։

Այդ էր շարժառիթներից մէկն Ընկերութեան համար, որ նա ձեռնարկեց Անդրկովկասում բեւեռագիր արձանագրութիւնների յատուկ հետազօտութիւնը։ Միւս ոչ պակաս նշանաւոր շարժառիթն այն էր, որ վերջին ժամանակս օտարերկրեայ ուսումնականները յաճախակի ճանապարհորդում էին Ռուսաց և Տաճկաց Հայաստանում՝ յատկապէս Վանի արձանագրութիւնների հետազօտելու նպատակով. օտարների այդպիսի մի ձգտումն՝ ռուս ուսումնականի գիտակցութեան մէջ յարուցանում էր անդառնալի պարտականութեան զգացումն, ցոյց տալ և իւր գործունէութիւնը այս դէպքում, որ ամենից մօտ յարնչութիւն ունի ռուս հնախօսութեան հարցերի հետ, որպէս և մրցակցութեան զգացումն այնքան նշանաւոր ասպարիզում։ Ես կ՚ակնարկեմ այս տեղ Մ. Սիմօնիսի և Հիւվերնայի 1888–1889 թ. կատարած ձեռնարկութեան վրայ Կովկասում, Ռուսաց և Տաճկաց Հայաստանում, որի գլխաւոր նպատակներից մէկն եւ էր՝ ժողովել Վանի բեւեռագիր արձանագրութիւնները և ուսումնասիրել։ Չնայելով նոցա գործի անյաջողութեանը Ռուսաց Հայաստանում, յիշեալ ուսումնականները հաւաքեցին մեծ քանակութեամբ նորանոր արձանագրութիւններ և ներկայացրին աւելի ճիշդ տեղագրական տեղեկութիւններ գիտութեան արդէն յայտնի արձանագրութիւնների մասին (*). «Relation des missions scienti-

---

* *Транскрипція.*

* Իւր ժամանակին մենք հաղորդեցինք Ար-

fiques de MM. *H. Hyvernat* et *P. Müller-Simonis*, (1888-1889)». «Du Caucase au Golfe persique à travers l'Arménie, le Kurdistan, և այլն. Washington, 1892»։ Բայց աւելի նշանաւոր և արդասաւոր արդիւնաւոր էր գերմանացի գիտնական Վ. Բէլկի 1891 թ. կատարած ճանապարհորդութիւնը Տաճկաց և Ռուսաց Հայաստանում, ուր 22 բեւեռագիր արձանագրութիւններ կամ նորից գտնուած էին և նոր ի նորոյ հետազօտուած ընդօրինակուած էին (տե՛ս. Archäologische Forschungen in Armenien. Յունվ. 1893) այս գիւտերը նա արել էր յատկապէս Տաճկաց Հայաստանում. բայց Ռուսաց Հայաստանումն էլ նա յաճախեց համարեա թէ այն բոլոր վայրերը, ուր գտնւում են բեւեռագիր արձանագրութիւններ, և այս՝ նախապէս հետազօտելու և ուսումնասիրելու համար այն սահմանները, մինչեւ ուր որ տարածւում էին հիւսիսում Վանի թագաւորների աշխարհակալութիւնները։ Նորա փորձերը՝ հանելու Ալուչալուի (Գոլանը—գըռանի) արձանագրութիւնը, գործի դժուարութեան պատճառաւ, չպսակվեցան յաջողութեամբ. բայց Օրգակլուինը նա բաւականին ճշդութեամբ ընդօրինակեց, իսկ պրոֆ. Կ. Լեմանը լոյս ընծայեց ինքնագրի (autographie) միջոցով։ Այսքան լուրջ, թէպէտ և ոչ բոլորովին յաջող (գոնէ Ռուսաց Հայաստանի վերաբերութեամբ), օտար ուսումնականների արած ջանքերը՝ ակամայ հարկադրեցին Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերութիւնը շտապել հետազօտելու այս նիւթերը, և պարանով ի կատար ածել ռուս ուսումնականների ջանիւք այն, ինչ որ պատշաճ է ռուս գիտութեան ըստ պարտուց և իրաւանց, այսինքն է այս յիշատակարանների վայելուչ հրատարակութիւնը, որքան որ գտնուած են դորա Ռուսաց սահմաններում։

Ուսումնական ճանապարհորդութեան դըժուարին և վսեմ գործը՝ Ընկերութիւնը բարդեց իւր և գործ. անդամ Ընկ. Ա. Իվանովսկու վրայ։ Իմ մասնակցութիւնը իբրեւ արձանագրութեանց հետազօտողի և հրատարակչի՝ օգտաւէտ համարվեցաւ այն պատճառաւ, որ ինչպէս Հիւբշմանի և Բէլկի փորձը ցոյց տուաւ, արձանագրութիւնների հետազօտութիւնը բուն տեղում ֆիզիքական և հնախօսական պարագաներով հանդերձ, որոնք շրջապատում են յիշատակարանը, նըպաստում են նոցա իմաստի մեկնութեանը։ Որովհետեւ արձանագրութիւնների լեզուն, ինչպէս արդէն յիշեցինք, անյաղթելի դժուարութիւններ են յառաջացնում հետազօտութեան համար, ուստի հասկանալի է, թէ որպիսի՞ օգուտ կարող են բերել նոցա մեկնութեան համար յիշատակարանի վայրերի վրայ կատարած անձնական դիտումներն և խորհրդածութիւնները, թէ ի՞նչ պայմաններում, ի՞նչ դիտաւորութեամբ կանգնած էր այն (յիշատակարանը)։ Բաց ի դորանից, բեւեռագիր արձանագրութիւնները ծառայում են իբրեւ յիշատակարաններ Վանի թագաւորների աշխարհակալութեանց Կովկասում, և բովանդակում են իւրեանց մէջ մեծաքանակ նշանաւոր աշխարհագրական գիտելիքներ, որ կարելի է յարմարացնել արդի վայրերին և հաղորդակցութեան ճանապարհներին։ Ժայռերի ու հին շինութեանց վրայ եղած արձանագրութիւնները՝ մեզ ճանապարհ են ցուցանում, որով յառաջ էին ընթանում Վանի աշխարհակալները դէպ ի հիւսիս, ծառայում են, այսպէս ասած, իբրեւ վերստերի սիւներ. նոցա մէջը ուղղակի յիշւում են երկիրների ու քաղաքների անունները, որոնք նուաճուած են եղել այն վայրերում, ուր գտնւում է արձանագրութիւնը. խօսում է տաճարների, պալատների, ջրմուղների կառուցման մասին, և արձանագրութեան բովանդակութեան քըննութիւնը՝ տեղի պարագաներով հանդերձ, ուր որ դա գտնուած է, շատ դէպքերում հնարաւորութիւն է տալիս ճշդութեամբ, կամ գոնէ, շատ հաւանական կերպով յարմարացնել հին երկիրները, քաղաքները եւ և շէնքերը այժմեան տեղերին։ Կ'ասենք աւելին. տեղի պայմանների ուսումնասիրութիւնը՝ արձանագրութիւնների մէջ եղած աշխարհագրա-

Ձագանքում քանի մի տեղեկութիւններ այս նշանաւոր ճանապարհորդութեան մասին։
Ծան. թարգմ.։

կան գիտելիքների հետ ի միասին՝ յաճախակի կարող է տալ շատ օգտաւէտ ցուցումներ այն փոքրիկ քաղաքական միաւորների կազմակերպութեան պայմանների մասին, որ կոչւում են Թագաւորութիւններ, որոնց վրայ բաժանւում էր այս նահանգը, որպէս և նոցա փոխարինի յարաբերութեան մասին։ Կշռադատելով այս ամենը, ես չհրաժարվեցայ ինձ առաջարկած բարձր պատուից՝ մասնակցելու ձեռնարկութեան, լաւ հասկանալով իմ անփորձութիւնը հնագիտական հետազօտութիւններ կատարելում՝ բառիս բուն նշանակութեամբ։ Սոյն դէպքում իմ յարգելի ընկերակից պր. Ա. Իվանովսկուն տուած հրահանգն աւելի ընդարձակ էր. հնագիտական և մարդաբանական նպատակաւ կատարելի ճանապարհորդութեանց հմուտ պարոնը, բաց ի մեր հասարակ գործից՝ այն է՝ արձանագրութիւններից, ընդօրինակել կարելւոյն չափ ճիշդ էստամպաժներ ու հետազօտել վայրերը, իւր վրայ առանձնեց հնագիտական և աշխարհագրական հետազօտութիւններ լայն ծրագրով, որպէս և պեղումներ ու լուսանկարներ հանելն։ Հրատարակութեանս կցած լուսանկարների մեծագոյն մասն նա ինքն անձամբ է հանած Ընկերութեան պատկանեալ գործիքով։

Շրջանի ընդարձակութիւնը, ուր մեզ վիճակուած էր գործել (Երեւանի և Ելիզաւեթպոլի նահանգ) և ժամանակի տևողութիւնը (յունիսի 20-ից մինչեւ սեպտեմբերի 5-ն 1893 թ.) մեզ հարկադրեցին ձեռնարկութեան առաջին նուագին բաժանվել միմեանցից, և հետազօտութիւններ կատարել զանազան տեղերում. Ա. Իվանովսկին դիմեց դէպ ի Սեւանայ լիճն. իսկ ես դէպ ի Էջմիածին՝ այնտեղ պահած արձանագրութիւններն հետազօտելու համար. այն տեղից անցայ Արագածի վրայ, յաճախեցի Ղուլիճանը և հանեցի այն գիւղում եղած արձանագրութիւնը, յետոյ իջայ Ալէքսանդրապոլի գաւառակայրը և հետազօտեցի Գանլըճան։ Միայն օգոստոսի 10-ին մենք միացանք Էջմիածնում, որ միասին սկսենք մեր հետազօտութիւնները Արագածի հովտում. ժամանեցինք, այսպէս ասած, Արմաւիրը, անցանք Սարդարապատ յետոյ Դաշպուռուն և Արարատի նախալեռները, ուր քանի մի տեղերում պեղումներ կատարեցինք։ Հետեւեալ 1894 թ. ճանապարհորդութիւնը նոյն տեղերում ընդգրկելով նաև Կարսի երկիրը, կատարեց Ա. Իվանովսկին մենակ և դա շարունակութիւնն էր մեր սկսած աշխատանքների՝ և իրագործումն դիտաւորեալ ծրագրի։

Ձեռնարկութեանս գլխաւոր նպատակն, այն է՝ վայրերի հետազօտութիւնը, ուր գտնւում են բեւեռագիր արձանագրութիւններ, նոցա արտահանումն լուսանկարչութեան միջնորդութեամբ և էստամպաժով, մենք ըստ կարելոյն կատարեցինք։ Ճշմարիտ է, երկու արձանագրութիւններ մենք չկարողացանք գտնել ամենեւին (Յորդ Դաշպուռունեանը [N. III] և Ղազանչու [N. IV]), բայց դորա փոխարէն յայտնուեցան չորս գիտութեան համար տակաւին անյայտ արձանագրութիւններ, շատերից առաջին անգամ հանուեցան բաւարար էստամպաժներ (զոր օրինակ Ալուչալուի արձանագրութիւնը, որ մեծ դժուարութեամբ հանեց Ա. Իվանովսկին, ենթարկվելով վտանգներին, արձանագրութիւն Ջաղալու գիւղում). Թացեալ բոլոր արձանագրութիւնները լուրջ կերպով ուսումնասիրվեցան և նոցանից առնուեցան լաւագոյն լուսանկարներ և էստամպաժներ։ Պեղումներ կատարուեցան Սեւանայ լճի հարաւային ափերում, Գանլըճայում Ալէքսանդրապոլի մօտերքում և Դաշպուռունի մօտ երկու տեղում։ Բաց ի պեղումներից ստացած հետաքրքիր առարկաներից, որոնց մասին հաղորդելու է Ա. Իվանովսկին, մեր ճանապարհորդութեան միջոցին, մանաւանդ պր. Իվանովսկու ձեռքով հաւաքուած են շատ նիւթեր մասամբ հնագիտական, մասամբ էլ աշխարհագրական, որոնք վերաբերւում են համեմատաբար այս վայրերի պատմութեան յետին (հայկական) ժամանակամիջոցին. ամենից շատ նա տեղեկութիւններ է ժողովել ճարտարապետական յիշատակարանների, հին եկեղեցիների և վանքերի մասին (*)։

(*) Ա. Իվանովսկու հետազօտութիւնները տակաւին հրատարակուած չեն։ Ծան. թարգ.։

Բեւեռագիր արձանագրութիւնների մասին մեր հաւաքած նոր նիւթերը նշանաւոր կերպով պիտի ընդարձակէին մեր տեղեկութեանց սահմանները այս առթիւ, ուստի յառաջ քան լոյս ընծայելն սոյն մանրամասն հաշուէս, որ բաւականին ուշացաւ զանազան հանգամանքների շնորհիւ, ես հրատարակեցի քանի մի համառօտ գիտելիքներ, որպէս զի կարողանամ հաղորդել մեր նոր գիւտերի մասին նոցա, ով որ հետաքրքրւում է այս տեսակ հետազօտութիւններով: Հնագիտական ընկերութեան հանդիսի էջերում (*Археологическихъ Извѣстіяхъ и Замѣткахъ*, 1893, N. 12. — «Հնագիտական լուրեր ու նկատումներ») ես զետեղեցի հետեւեալ յօդուածը. *Клинообразная надпись Русы I въ Келаны-Кирланы (Алучалу) на берегу Гокчи въ Эриванской губерніи* «Բեւեռագիր արձանագրութիւն Ռուսա (Ուրսա) առաջինի Գօլանը—Գըրլանում (Ալուչալու) Սեւանայ ափերում, Երեւանի նահանգում,» որին կցած է բնագիրը, տառադարձութիւն, և հինգ արձանագրութիւնների թարգմանութիւնը, նաեւ մի նկատողութիւն քանի մի ընթերցուածներից մասին առաջ հրատարակուած բնագիրներում: Արեւմտեան գիտութիւնը երախտագիտութեամբ ընդունելով մեր այս գործը՝ ըստ արժանւոյն գնահատեց և օգուտ քաղեց դորանից: Պրօֆ. Սէյսը մեր հրատարակութեանը նուիրեց հետեւեալ յօդուածը: *The Cuneiform Inscriptions of Van* (*), «Վանի բեւեռագիր արձանագրութիւնները», պրօֆ. Լեմանը *Ein neuer Herrscher von Chaldia*, Բելկը և այլն: Բաց ի այս նոր տեղեկութիւններից, որ նշանակութիւն ունին Ասորեստանի ու Բաբելոնի ուսումնասիրութեան և տիեզերական պատմութեան համար, մեր հաւաքած նիւթերը հնարաւորութիւն տուին աւելի ճիշդ գաղափար կազմել Ուրարտեան ժամանակի՝ մեր հետազօտած վայրերի աշխարհագրական և քաղաքական պարագաների մասին, որպէս և այն ճանապարհների (մասին), որով յառաջ էին շարժւում Վանի աշխարհակալները: Նոր նիւթերի համառօտ նկարագրութիւնը կարելի է գտնել իմ մի նախընթաց յօդուածում, «Հին աշխարհ Ուրարտու (Արարատ) և ասորեստան — բաբելոնեան կուլտուրայի հետքերը Կովկասում»: «*Древняя страна Урарту (Арарать) и слѣды ассиро-вавилонской культуры на Кавказѣ* въ *Землевѣдѣніи* (*Періодич. изд. Географическаго Отд. Имп. О. Л. Е. А. Э.*) 1895. *Кн. I*». Աւելի մանրամասն և գրաւոր յիշատակարանների վրայ յենուած բացատրութիւն՝ Անդրկովկասի աշխարհագրական ու քաղաքական պայմանների մասին, ընթերցողները կը գտնեն մեր ներկայ աշխատութեան մէջ: Այս վերջնից պարզ կարելի է տեսնել, որ Անդրկովկասի ազգութիւնները կամ աւելի ճիշդ ասելով, արդի Երեւանի, Գանձակի և Կարսի նահանգների, պատկանելով մի և նոյն ցեղին, չէին կազմում բնաւ մի սերտ կապուած քաղաքական մարմին: Այստեղ, ընդհակառակն, մենք տեսնում ենք բազմաթիւ բաժան բաժան, միմեանցից անկախ տէրութիւններ, որոնք կառավարւում էին առանձին թագաւորների ձեռքով: Արձանագրութիւնների լեզուաւ՝ նոցանից ամենայն մէկն՝ աշխարհ էր կոչւում կամ երկիր. ինչպէս, օրինակի համար, Ասորեստանեայց աշխարհ, Բիայնայի (Վանի) և այլն. իսկ կառավարիչներն՝ թագաւորներ, բայց իրօք դոքա ոչ այլ ինչ էին, բայց եթէ գերմանական կոմսութիւններ, և թագաւոր կոչումն պէտք է հասկանալ գերմանական *König* բառի մտքով միջին դարերում (*): Այդպիսի աշխարհներ վերոյիշեալ նահանգների սահմաններում՝ կարելի է հաշուել մի քանի տասնեակ: Իրաւ է, հիմք կայ կարծելու, որ նոցանից մի քանիսը, զոր օրինակ, *Etiuni*=Էտիունի, *Eriahi*=Էրիախի համեմատաբար աւելի մեծ նշանակութիւն ունէին, քան թէ ուրիշները, բայց ինչումն էր կայանում նոցա անդրանկութիւնը կամ

(*) Տես The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, october 1894, Part. V.

(*) Այդ խօսքերը մասամբ, կարծես, պատասխանում են Ա. Վաղարշակի հարցերին. այսինքն «Ուստի՞ նախարարութիւնք՝ որ աստ կան» (Մ. Խորեն. Պատմ. Գիրք. Ա. գլ. Թ): Ծան. թարգ.

առաւելութիւնը մյուսներից, դժուար է ասել։ Վանի Թագաւորների աշխարհակալութեանց ժամանակամիջոցին, ակներեւ է, որ նոցա քաղաքականապէս միացնում էր միայն Վանի արքայի իշխանութիւնը, որից նոքա, անկասկած, աւանդական կախումն ունէին։ Բայց Վանի Թագաւորներին հեշտ չէր ենթարկել ու պահել նոցա այդպիսի նուաճեալ դրութեան մէջ։ Նման Ասորեստանեայց Թագաւորներին, որոնք հարկադրուած էին անդադար արշաւանքներ կատարել հնազանդութեան մէջ պահելու համար Միջագետքի, Ասորւոց և Պաղեստինէի բազմաթիւ՝ իրանց ցեղակից, սեմական ազգութիւնները. նոյնպէս և Վանի Թագաւորներն էլ պէտք է անընդհատ արշաւանքներ կատարէին դէպ ի այս հիւսիսային աշխարհը, որ ամենայն հաւանութեամբ, նոցա նախնական հայրենիքն էր, ուր ապրում էին նոցա հետ մի և նոյն ծագումից յառաջացած ազգութիւններ, նոցա սահմաններում ամուր քաղաքներ շինէին, և փոխարքայութեան նման մի իշխանութիւն հաստատէին։

Այստեղ մենք ընդհատում ենք մեր քաղուածքները Պ. Նիկոլսկու ներածութիւնից և անցնում ենք բուն երկին, ուր իւրաքանչիւր բեւեռագիր արձանագրութիւնը ունի իւր տրանսկրիպցիան, թարգմանութիւնը և գիտնական մեկնութիւնը. մենք դիտաւորութիւն չունինք տալ հայ ընթերցողին ամբողջ գրքի թարգմանութիւնը, այլ շատանալու ենք նորա համառօտ բովանդակութեամբ։

ԳԼՈՒԽ Ա.

ԴԱՇՊՈՒԹՈՒՆ

(Luhiunini - Menuahinili)

ՎԱՆԻ Թագաւորներից առաջինը, որ մտել էր Երասխի հովիտը և թողել այնտեղ իւր աշխարհակալութեանց կոթողներն, Մենուա էր[1] Իշպուինի որդին, որ ապրում էր Ը դարի սկզբում նախ քան զՔրիստոս. յառաջ քան այս հիւսիսային աշխարհը միջամուխ լինելն և ամուր ոտքով այն տեղ հաստատուիլն, նա պիտի նուաճէր Վանի և Երասխի հովտի մէջ եղած երկիրները։ Դաշ–Թէփէի արձանագրութիւնից[2] երեւում է, որ Մենուան իւր իշխանութեան տակ նուաճեց Մանանի երկիրը, որ Վանի արեւմտեան կողմումն էր գտնւում, Ուրմիա լճի մօտ և տարածւում էր հեռու հիւսիս դէպ ի Երասխը Մանանի երկիրը. և Մաննէացւոց ժողովուրդը (Ասորեստանեացւոց — *Mannai*) հանդէս են գալիս նաեւ իբրեւ հակառակորդներ Ասորեստանի աշխարհակալների՝ սկսեալ Սալմանասար երկրորդից (1830 տ. նախ քան ըզՔրիստոս) մինչեւ Ասսուրբանիպալ (սկիզբն Է դարու նախ քան զՔրիստոս), ուստի կարելի է եզրակացնել, թէ այս ժողովուրդն կենսունակ էր և ընդունակ իւր անկախութիւնը պաշտպանելու։ Մի այլ տէրութիւն, որ տարածւում էր Վանի լճից դէպ ի հիւսիս և հաւանական է կարծել, թէ սահմանակից էր Մանանու, *Daiaeni*–ն էր ըստ Ասորեստանեայց, և *Diauhini* ըստ Վանի արձանագրութեանց։ Երեսուն և վեց տողերից բաղկացած արձանագրութիւնն, որ Մենուան

1. Այս անունը մեզ յիշեցնում է Մ. Խորենացու պատմութեան Մանաւազն.

Ծան. Թարգ.

2. Գտել է Վ. Բելկը Ուրմիա լճի հարաւային ափերում։

Թողել է Դիլի—Բաբա գիւղում, Արզրումից դէպ ի արեւելեան—հիւսիս, ոչ հեռու Երասխի աջ ափերից, Ռուսաց սահմաններից մօտ 40 վերստ հեռաւորութեամբ, աւանդում է Diauḫini աշխարհի նուաճման մասին և վկայում է՝ թէ Մենուան հասել էր մինչեւ Երասխի վերին հոսանքը, և բոլոր երկիրը Արզրումից մինչեւ Ուրմիա լճի արեւմտեան կողմն՝ նորա իշխանութեան ներքոյ էր։

Շատ բնական է կարծել, որ Մենուա Diauḫini երկրի նուաճումից յետոյ, հասնելով Երասխին այն տեղում, ուր գտնւում է վերոյիշեալ արձանագրութիւնը, փորձեց անցնել Աղրի—Տաղի* շղթայից, որ անջրպետ է կազմում արեւելեան Եփրատի և Երասխի մէջ։ Նա կանգնած էր Այրարատեան նահանգի բնական դռների առաջ կամ հին Ուրարտու աշխարհի, որ անտարակոյս նորա դէպ ի հիւսիս արշաւելու նպատակն էր։ Յառաջ ընթանալով Երասխի ափերով, նա չորս հինգ օրից յետոյ կարող էր հասնել Երեւանի դաշտավայրը և գտնուիլ Մեծ Արարատի ստորոտում, ուր ներկայ ժամանակս գտնւում են նորա այնտեղ թողած հետքերը։ Բայց եթէ Երասխի աջ ափը, Արարատի մօտերքում, նորա գլխաւոր նպատակն էր Երեւանի դաշտավայրը արշաւելու, այն ժամանակ մեր գծագրած ճանապարհը կարող է շատ երկար ու դժուարին երեւել։ Այդ ճանապարհը Վանից մինչեւ Դաշբուրուն տարած ուղիղ գծից երեք անգամ աւելի երկար է։ Սակայն շատ հաւանական է ենթադրել, որ Մենուան միանգամ հասնելով Երասխին՝ դորա վերին հոսանքին, յառաջ շարժվեցաւ գետի ընթացքով, մանաւանդ այն պատճառաւ, որ Երասխի ձորը՝ մինչեւ Երեւանի դաշտը մտնելն՝ թէ և դժուարակոխ է, բայց այնու ամենայնիւ անցանելի է։ Արդ՝ որովհետեւ Դիլի—Բաբայից մինչեւ Դաշբուրուն մենք չենք գտնում Մենուայի հետքերը, այդ հանգամանքը հարկադրում է մեզ որոնել ուրիշ աւելի կարճ ու յարմար ճանապարհներ դէպ ի Երեւանի դաշտավայրը։

Վանից դէպ ի Երեւանի դաշտավայրը տանող ճանապարհը սկսվում է Վանայ լճի հիւսիս—արեւելեան ափից ուղղակի դէպ ի հիւսիս կամ հիւսիս—արեւելք՝ Մեծ Արարատի ուղղութեամբ։ Նախ եւ յառաջ ճանապարհը անցնում է Բենդիմագու գետի ձորով, ապա ընթանում է Պայազիտի դաշտով դէպ ի Զինգիլեան բարձունքը՝ Աղրի—Տաղի վրայից այն տեղում, ուր այս շղթան միանում է Մեծ Արարատի հետ։ Դուրս գալով հովիտ, ճանապարհը ներկայումս դիմում է Իկդիր, ուստի 18 վերստ է դէպ ի արեւելք մինչեւ Դաշբուրուն։

Ներկայ ժամանակս դա չորս օրուայ ճանապարհ է, և յարմար է նաեւ կառքերի համար։ Դժուար է ենթադրել, որ այս ճանապարհը յայտնի չլինէր ի հնումն, քանի որ դա անցնում էր համարեա թէ Մեծ Արարատի վրայից, որի դռները չէին կարող յայտնի չլինել հին աշխարհին։ Այդ բանում մեզ համոզում է այն հանգամանքը, որ Պայազիտը, ինչպէս երեւեցաւ Գ. Իվանովսկու 1894 թ. կատարած հետազօտութիւններից, տակաւին Վանի Թագաւորների օրերում ամրացրած քաղաքի դիրք ունէր։ Պայազիտի ժայռերի վրայ նորա գտած քանդակները, որոնք զարդարում են ժայռերի մէջ փորած անձաւների մուտքը, անշուշտ Ուրարտեան ծագումից են և պարզապէս վկայում են, որ յիշեալ ճանապարհը ոչ միայն յայտնի էր Վանի Թագաւորներին, այլ և ամրացրած էր նոցա ջանիւք։ Պայազիտը այն ժամանակն էլ կարող էր բանալիք լինել այրարատեան դռների, և ընդ սմին, որպէս և այժմ պահպանել մեծ ճանապարհը արեւելքից արեւմուտք դէպ ի մեծ գետերի աղբիւրները։ Այս ճանապարհով, ինչպէս մենք տեսանք, Մենուան հասնում էր մինչեւ Դիլի—Բաբա Արզրումի մօտ. իսկ նորա յաջորդ Արգիշտի առաջինը անցաւ աւելի առաջ Կուրս—չայի հովիտը։

Այն աշխարհը, ուր միջամուխ եղաւ Մենուան, մտնելով Երասխի հովիտը, Դաշբուրունի արձանագրութեան վրայ կոչւում է Eriduaḫi կամ Eriduaḫini = Էրիդուահի, Էրիդուահինի, իսկ դորա մայրաքաղաքը Luḫiunini = Լուհիունինի։ Անցնենք այժմ

* Ըստ Հ. Ալիշանի՝ «Հայկական լերինք». տե՛ս. Այրարատ։

արձանագրութիւններին և տեսնենք՝ թէ նրանք ինչ են վկայում։

Ահա Դուշպուասոնի առաջին բեւեռագիր արձանագրութեան թարգմանութիւնը. «Խալդի (չաստուածին) ես աղօթում էի, կարող տիրապետողին, որ տուեւ երկիրն Էրիդուահի, որ տուեւ քաղաքն Լուհիունինի ընծայ Մենուային։ Խալդի տուողին, Խալդի հզօրին, պարգեւողին, ողորմած Խալդիացւոց ես աղօթում էի Մենուայի՝ Իշպուինու որդու համար։ Ես մօտեցայ ընծաներով Խալդիին։ Մենուա ասում է՝ ես եկայ երկիրն Էրիդուահի, քաղաքն Լուհիունինի, քաղաքն արքայական

. . . .

այց ելաւ Խալդի Մենուային, Իշպուինու որդուն։ Ես տիրապետեցի քաղաքին Լուհիունինի, ես փոխեցի քաղաքի Լուհիունինի նորա անունը։ Մենուա ասում է՝ ով այս արձանագրութիւնը կ'հեռացնէ, ով կը ջնջէ անունը, ով երկիր դորան կը կործանէ, ով մի ուրիշը (անձն) կը սեպհականէ՝ ես քաղաքն Լուհիունինին նուաճեցի, — այդպիսի մարդուն Խալդի, Թէիշբա, Արդինի չաստուածները, նորա աչկարայ, անունն նորա, ընտանիքը նորա քաղաքն նորա կրակին, ջրին կ'մատնեն»։

Դուշպուասոնի երկրորդ արձանագրութիւնը աւելի ևս քայքայուած է և թերի.

«Ողորմած Խալդիացւոց Մենուա Իրկուանի երկիրը քաղաքը աշխարհին Լուհիունին.... այս Մենուա վերականգնելուց զկնի դռները Խալդինիլի արքունիքն կործանուած Մենուա ասում է՝ վերանորոգեցի (?) շինեցի Մենուա (որդի) Իշպուինու.....։

Դուշպուասոնի երրորդ անձանագրութիւնը այս է. «Զաստուածին Խալդի, տիրոջ այս տունն քանդուած Մենուա որդի Իշպուինու վերականգնեց, արքունիքը վերականգնեց կործանուած, շինեց, Մենուայի տեղի բնակութեան կոչեց, — մեծ Խալդիացւոց, Մենուային, որդուն Իշպուինու, արքային հզօրին, արքային երկրի Բիայնայի (Վանի), բնակողին քաղաքում Տուշպա»։ Բոլոր վերոյիշեալ թարգմանութեանց մէջ մենք ճշդիւ պահպանեցինք անպաճոյճ բնագրի բառերի դասաւորութիւնը, որպէս զի կարողանանք պարզ գաղափար տալ ընթերցողին բեւեռագիր արձանագրութիւնների մասին։ Դարձեալ՝ առաջին երկու արձանագրութիւններում յիշւում է Լուհիունինի քաղաքը, որի անունը Մենուա թագաւորը փոխելով իւր երրորդ արձանագրութեան մէջ կոչում է Մենուահինիլի (այսինքն տեղի բնակութեան Մենուայի)։

Արդեօք ո՞ր տեղ պէտք է որոնել այս քաղաքի տեղն, հարցնում է ռուս գիտնական Պ. Նիկոլսկին և ապա շարունակում է. Նախ և յառաջ մեր ուշադրութիւնը գրաւեցին Արարատի այն առաջաւոր բլուրները, որոնց մօտակայքում գտնւում է Դուշպուասոնի առաջին բեւեռագիր արձանագրութիւնը, ուր աւանդում է Լուհիունինի քաղաքի նուաճման մասին։ Ի մօտոյ հետազօտելով այդ բլուրները, մենք համոզվեցանք, թէ դոքա մեծ նշանակութիւն ունեցած են Ուրարտեան տիրապետութեան ժամանակ։ Լեռնաշղթայի ամբողջ մասն, որ եռանկիւնի ձեւով դուրս է ցցուած դէպ ի Երեւանի դաշտավայրը, ակներեւ է, որ ի հնումն խիստ ամրացրած էր։ Լերին վերջին ծայրը, դարձրած Դուշպուասոնի կողմն, առաջին անձանագրութեան մօտ, երկայնաձիգ բլրի նման է. նորա գագաթի վրայ գտնւում են ամրութեանց հետքեր, որ մենք հետազօտեցինք պեղումներ անելով։ Մենք գիտաւորութիւն չունէինք երկար խօսելու կատարած պեղումների արգասեաց մասին, սակայն այսքանս կ'ասենք, որ մեր առաջ խոր գետնի մէջ մերկացան շինուածոց հիմունքը, մակարդակը, նիւթերը, որոնց դասաւորելու ու կանգնելու եղանակը յիշեցնում է մեզ Արմաւիրի բլրի շէնքերն։ Պատերի կոփածոյ քարերը նոյն տեսակիցն են, ինչ որ երկրորդ արձանագրութեան քարն, որ գտնուած է աւերակների մէջ, հովտում, Դուշպուասոնի մօտ. բաց ի դորանից յիշեալ շինուածոց քարերի վրայ, որպէս և երկրորդ արձանագրութեան և Արմաւիրի քարերի մի կողմում՝ նկատւում են փոսեր, գուցէ գերաններ զետեղելու համար։ Ինչ և իցէ ճարտարապետութեան հետքերը դոցա վրայ անուրանալի են Ուրարտեան ժամանակից։

Բայց ամենամեծ և նշանաւոր ամրութիւնը

Արարատի դաշպուրունեան սարաւանդի վրայ գտնուած է՝ նորա արեւելեան կողմում, որ նայում է դէպ ի Գուլագ—պաշի լիճը։ Արարատի բլուրները լճի մօտ շատ բարձր չեն. բայց լճի ամենալայն տեղերի մօտ կայ մի բարձր բլուր, որի վրայ ելնելով մենք նկատեցինք, որ մի ահագին ամրոցի պատերի մէջն ենք գտնւում, որ ստեղծել է ինքն բնութիւնը, ուր նշմարւում են նաեւ մարդկային աշխատանքի մեծամեծ հետքեր։ Բլուրը շրջանի ձեւ ունի, որի տրամագիծը հաւասար է մէկ վերստին (այսինքն 1500 կանգուն). մեծ ծործորը համարեա ամենայն կողմից անջրպետում է դորան Արարատի միւս բլուրներից, որոնց մէջ տեղն է ընկնում նա։ Բլրի կատարը չորս կողմից շրջապատած է ըստ մեծի մասին անտաշ ահագին քարերի շարքով, բայց մի քանի տեղերում երեւում են պարիսպներ կոփածոյ քարերից։ Պարիսպների ներսում նկատելի են կործանուած աշտարակների մնացորդքը. անհարթ հողի երեսին, որ ծածկուած է մանր քարերի թանձր խաւերով, անկասկած, մնացած պիտի լինին ճարտարապետական շէնքերի հետքեր։ Դուրս գալով ծործորից դէպ ի Գուլագ—պաշի՝ մենք նկատեցինք կանոնաւոր, կրկնակի և բաւականին լայն վերելքի հետքեր. ճանապարհը մի ժամանակ գեղեցիկ կերպով սալայատակուած է եղել և պատուարներով պաշտպանուած։ Իսկ ինչ որ վերաբերւում է ծործորին, պէտք է նկատել, որ դա ամրոցի յետեւում ճիւղաւորվելով տանում է զանազան կողմեր. հասկանալի է, որ այդ ծործորների միջնորդութեամբ հնարաւոր էր հաղորդակցել միւս ամրոցների հետ՝ որոնք սարաւանդի միւս կողմումն են, ուր որ առաջին դաշպուրունեան արձանագրութիւնն է գտնըւում։

Հանգամանքները չներեցին մեզ այստեղ եւս պեղումներ անել, ինչպէս որ Դաշպուրունում, ասում է Պ. Նիկոլսկին, վասն զի նախ՝ այս աւերակները հեռու են գիւղերից, երկրորդ՝ որ զուրկ են կենսական յարմարութիւններից, և բաց ի դորանից, դժուար է կազմել այստեղ մի ժամանակաւոր գաղթականութիւն. դորա համար հարկաւոր է մի առանձին մեծածախս ձեռնարկութիւն։ Սակայն ամրոցը իւր մեծութեամբ և պատկառելի շէնքով գերազանցում է բոլոր մեր տեսած ամրոցները Երասխի հովտում։ Մենք, յայտնի բան է, գրաւոր յիշատակարաններ չունինք ապացուցանելու՝ թէ ամրոցի պարիսպները Ուրարտեան ժամանակներիցն են, վասն զի այս վայրերում տակաւին չեն գտնուած բեւեռագիր արձանագրութիւններ. սակայն յօգուտ Ուրարտեան ծագման վկայում են քարերի տաշելու ձեւը և պարիսպների կանգնելու եղանակն, որ նոյնն են, ինչ որ տեսնում ենք Արմաւրում։

Բայց եթէ Դաշպուրունին կից բոլոր արհեստական ամրութիւններն Ուրարտեան ժամանակներին վերագրելու լինէին, դարձեալ դժուար կ՚լինէր յարմարացնել դոցա Լուհիունինի քաղաքի դրից. այս ամրութիւններից մէկն կարող էր շուտով քաղաքիս միջնաբերդն լինել, չէ թէ բուն քաղաքը։ Վերջինս իբրեւ բնակութեան տեղի, հաւանական է որ լեռներում չէր, որոնք անյարմար են կեցութեան համար, այլ հովտումն էր և յատկապէս արձանագրութեան մօտակայքում, այն բլրի ստորոտում, ուր որ մենք պեղումներ կատարեցինք. իսկ այդ բլրի վրայ եղած ամրոցը կարող էր քաղաքի միջնաբերդն լինել։ Սակայն հովտի մի մասն, որ մօտենում է յիշեալ բլրին ու արձանագրութեան, ներկայումս հերկուած է և այնտեղ ցանուած են ցորեան և վարսակ. հնութեան հետքեր չեն մնացել. երբեմն գուցէ կային, բայց մարդուս կուլտուրական ազդեցութեան ներքոյ իսպառ անհետացել են։ Շատ կարող է լինել, որ քաղաքը մի այլ տեղումն էր. և արդարեւ, Դաշպուրունից երեք վերստ հեռու, նոյն ճանապարհի վրայ մենք գտանք հարթ հաւասար գետնի (Դաշպուրունի և Հառանհլուի միջում), ընդարձակ տարածութեան վրայ հին բնակութեանց մնացորդներ, որոնք շարունակւում էին մինչեւ մեծ Արարատ։ Ճանապարհի մօտ հողին հաւասար կարելի է տեսնել մի շարք կոփածոյ քարեր, որոնք, անկասկած, հնագոյն շէնքերի հիմունքն են։ Տեղական բնակիչները չհաղորդեցին մեզ ո՛չ անորոշ տեղեկութիւններ, ո՛չ էլ աւանդու-

թիւններ այդ հին ժամանակներից մնացուած և գետնի՛ն հաւասարած բնակութեան վայրերի մասին, այլ անդադար կրկնում էին, թէ դա Ցոլակերտն է, որ ակներև է, որ յարմարեցրած է այս տեղերին Մ. Խորենացւոյ Պատմութիւնից (Գիրք Ա. գլ. ժԲ)։

Բայց թէ սոյն տեղում հնարաւոր է որոնել Լուհիուխինի քաղաքը, դորա մասին վկայում է երկրորդ արձանագրութեան այս իսկ տեղում գտնուելը, ինչպէս միաբերան ասում էին տեղական բնակիչները։ Ցամենայն դէպս, եթէ այժմ ճշգիւ չենք կարող ցոյց տալ յիշեալ քաղաքի տեղն, այնու ամենայնիւ կասկած չէ կարող լինել, որ այս վայրերը Ուրարտեան տիրապետութեան ժամանակը շատ նշանաւոր դեր կատարած են։ Անմիջապէս արձանագրութեան մօտակայքում մենք գտնում ենք մի շարք ամրութիւններ, որոնց մէկն կրում է իւր վրայ Ուրարտեան ծագման ակներև կնիքը. այդ ամրոցները թւով առ այժմ երեք են և յարնչութիւն ունէին քաղաքի հետ հովտում, որ անջատուած էր նոցանից Գուլադ—պաշի լճով։ Այս ամենը միասին առած, ամրոցները լեռներում, քաղաքը հովտում, նոցա անջատող լիճն, կազմում էին մի ամբողջութիւն, կուլտուրական և ռազմագիտական մի շատ նշանաւոր կենդրոն։ Հայոց ոչ գրաւոր, ոչ էլ բանաւոր (բերանացի) աւանդութեանց մէջ մենք չգտանք ոչինչ արձագանգ կամ ակնարկներ այս յիշատակարանների անցելոյն մասին, և միայն այս աւերակներում գտնուած երեք բևեռագիր արձանագրութիւնները լոյս են սփռում այն նշանակութեան վրայ, որ յիշեալ տեղն ունէր ութ դար Քրիստոսից առաջ, այն է, թէ դա Վանի թագաւորների համար բանալի էր Երևանեան դաշտավայրի, թէ այստեղ առաջին անգամ հաստատուն ոտքով կանգնեց Վանի թագաւորներից առաջինն, որ մտել էր Երասխի հովիտը՝ Մենուան. այս վայրերի նուաճումն թեթևացնում էր ու ապահով կացուցանում նորա յաջորդների համար և մանաւանդ անմիջական յաջորդ Արգիշտի առաջինի համար, Երևանի ամբողջ դաշտավայրի և մօտակայ Արագածի ու Գեօկ—չայի բարձանց տիրապետութիւնը։ Կանոնաւոր և լուրջ պեղումների շնորհիւ այս աւերակներում հնարաւոր կ՚լինէր ձեռք բերել աւելի շօշափելի ու նիւթական փաստեր այդ հին ժամանակներից, որոնք կը պարզէին մեր առաջև արձանագրութիւնների յարնչութիւնը շինուածոց հետ։

ԳԼՈՒԽ Բ

ԱՐՄԱՒԻՐ

(Argištiḫinili)

Արմաւիրը, իւր անուամբ ու յիշողութիւններով, գրում է պ. Նիկոլսկի, մինչև ցայժմ զուտ հայկական էր համարւում։ Մ. Խորենացւոյ վկայութեամբ, նա շինուեցաւ Հայկի թոռի, Հայաստանի նահապետ, Արմայիսի ձեռքով, որ Արմենակի որդին էր և իւր հիմնադրի անուամբ կոչուեցաւ Արմաւիր։ «Արմայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերբ գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր. և զանուն գետոյն թոռին իւրոյ Արաստայ՝ Երասխ. (տե՛ս Պատ. Հայոց՝ Մ. Խոր. Գիրք Ա. գլ. ժԲ)։ Այսպէս, ուրեմն, Արմաւրի հիմնարկութիւնը, ըստ Հայոց աւանդութեանց, Ասորեստանեայ թագուհի՝ առասպելական Շամիրամից առաջ էր, և տեղի ունեցաւ 2000 տարի նախ քան Քրիստոսի ծնունդն։ Այս քաղաքի ծագման մասին յերիւրած առասպելախառն զրոյցների բնաւորութիւնը ապացուցանում է, թէ նորա հիմնարկութեան իրական պատմութիւնը Մովսիսի Խորենացւոյ օրերում միանգամայն մոռացուած էր, և անուան բուն նշանակութիւնը (այսինքն բառազննութիւնը) յայտնի չէր։ Շատ հաւանական է ենթադրել, որ Արմայիսի անունը ծագում է Արմաւրից*, և ոչ թէ ընդհակառակն այսինքն Արմաւիրը Արմայիսից։

---

* Ափսո՜ս որ ռուս գիտնականը չէ բացատրում թէ լեզուագիտական ո՞ր կանոններին համաձայն Արմաւիր անունը դարձել է Արմայիս։

Ծան. Թարգ.

Առաջին, ստոյգ պատմական տեղեկութիւն Արմաւրի մասին, իբրև Հայաստանի մայրաքաղաքի, մենք հանդիպում ենք նոյն Մ. Խորենացւոյ գրքում տրդէն Քրիստոսից յառաջ. այն է 79որդ տարին Երուանդ թագաւորը իւր արքայանիստը Արմաւրից փոխադրեց Երուանդաշատ, ուր Արփա—չայը (Ախուրեանը) թափվում է Երասխի մէջ և այդ իսկ ժամանակից սկսվում է քաղաքի անկումն (Գիրք Բ. գլ. ԼԹ)։ Ինչ որ կարելի էր Արմաւրից տանել, տեղափոխվեցաւ նոր մայրաքաղաք Երուանդաշատ, բացի սակայն կուռքերից, որ տարան ու զետեղեցին մի այլ քաղաքում՝ Բագարանում, շինուած յատուկ այդ նպատակի համար, ոչ հեռու առաջինից։ Երուանդի յաջորդ Արտաշէս շինեց նոր մայրաքաղաք Արտաշատն, «ուր խառնին Երասխ և Մեծամօր «(Գիրք Բ. գլ. ԽԹ) և իւր կարգին տարաւ Երուանդաշատից բոլոր այն իրեղէնները, որ բերուած էին Արմաւրից։ Իւր պատմութեան ընթացքում Մ. Խորենացին դարձեալ մի անգամ յիշում է Արմաւրի մասին, ուր Արշակ «կոչեալ առ ինքն ի լքեալ արքունիսն Արմաւիր իբր զազգականսիւր ... հրամայեաց կատարել» (Գիրք Գ. գլ. ԼԱ)։

Այսպէս փոքր ի շատէ պատմական տեղեկութիւններ Արմաւրի մասին իբր Հայաստանի մայրաքաղաքի վերաբերւում են այն ժամանակին, երբ նա լքեալ դրութեան մէջ էր և կորցրել էր իւր քաղաքական նշանակութիւնը սկսեալ առաջին դարու երկրորդ կիսից։ Թէ ինչ էր նա աւելի հին ժամանակ, մենք ճշգիւ չգիտենք. բայց նորա բուն գոյութիւնը հնագոյն ժամանակ անհերքելի է. յօգուտ դորա վկայում են ոչ միայն առասպելական հռչակը, որով քաղաքը օժտուած է Հայոց յետին ժամանակների աւանդութեանց մէջ, այլ և զուտ պատմական ակնարկութիւններն։ Այսպէս՝ Պտղոմէոսը իւր աշխարհագրութեան էջերում յիշում է *Armauria* քաղաքը որ գտնւում էր Հայաստանի կենդրոնում (Geogr. lib. V. cap. 13)։ Անտարակոյս, այդ *Armauria* նոյն է մեր Արմաւրի հետ։ Այստեղից հաւանական է կարծել, որ Մ. Խորենացւոյ այն զրոյցը, ուր յիշուած է՝ թէ Պարթևաց արքայ Արշակ Զ Միհրդատ Ա եկել է Արմաւիրն այցելելու (*160–136* նախ քան զՔրիստոս), հիմնուած է պատմական աւանդութեան վրայ։ Այստեղ, Հայաստանի կենդրոնում, նա հաւաքում է բոլոր աշխարհից զօրք և արշաւում է* դէպ ի հիւսիսային արեւմուտք մինչև Պոնտոս։ Նորա եղբայր Վաղարշակը Հայաստանի կառավարիչ կարգուած, Պարթևական հարստութեան հիմնադիր դառնալով Հայաստանում, Արմաւրում մեհեան է շինում, ուր հաստատում է արեգական, լուսնի և նախնեաց անդրիքը (Գիրք Բ. գլ. Ը)։ Սակայն Պարթևական հարստութեան թագաւորների արքունիքն Արմաւրում չէր, այլ աւելի հարաւ էր՝ Մծբինում։ Արմաւիրը երբ Հայաստանի մայրաքաղաքն դարձաւ յատկապէս, մենք չգիտենք. բայց հաւանական է, որ դեռ եւս Երուանդի նախորդների ժամանակ։

Ջննելով այն աղբիւրները, ուստի Մ. Խորենացին քաղել է Հայաստանի՝ նախ քան զՔրիստոս՝ հնագոյն պատմութեան վերաբերեալ տեղեկութիւնները և միջոց չունենալով ստուգելու այն, մենք չենք կարող երաշխաւոր լինել նորա աւանդած իրողութեանց ճշմարտութեանը. սակայն հաւատալի ենք, որ համաձայն այդ տեղեկութիւններին, նախաքրիստոնէական դարերում Արմաւիրը Հայաստանի մայրաքաղաքը չէր, վասն զի Արշակունի հարստութեան թագաւորները նըստում էին Մծբինում, հիւսիսային Միջագետքում։ Բաց ի դորանից՝ Արմաւիրը չէր կարող այն ժամանակները պարթևական հարստութեան մայրաքաղաքն լինել, վասն զի նա շատ հեռու էր Պարթևաց տիրապետութեան կենդրոնից։ Միայն Երուանդից փոքր ինչ առաջ նա թագաւորական հարստութեան արքայանիստ դարձաւ կամ, բառիս բուն նշանակութեամբ, մայրաքաղաք։

Արդ՝ ինչպէս պէտք է բացատրել այն փառահեղ հռչակը, որ Հայոց աւանդութիւնը

---

* Այս արշաւանքը Մ. Խորենացին վերագրում է Վաղարշակին, չէ թէ Արշակ-Միհրդատին։
Ծան. Թարգ։

վերագրում է Արմաւրին, համարելով դորան Հայաստանի հնագոյն մայրաքաղաք, հիմնարկուած 2000 տարի Քրիստոսից առաջ։ Եթէ ի նկատի առնենք, որ Հայոց Իրանական ցեղն չէր կարող երեւիլ Եփրատի ափերում Է-րդ դարուց առաջ նախ քան զՔրիստոս և իւր գալուց զկնի հաստատուիլ այնպիսի հեռաւոր տեղում, ինչպիսի Երասխի հովիտն է, ոչ էլ ստեղծել այնտեղ իւր ազգային հարստութիւնը, պարթեւականից առաջ, որ գուցէ բռնութեամբ էր մտցրած, Արշակունեաց կողմից, այն ժամանակ դիւրաւ կարելի է եզրակացնել, որ Արմաւրի հնութեան ու նորա բարձր նշանակութեան վերաբերեալ աւանդութիւնք՝ արմատանում է յիշատակարանների մէջ, որոնք մնացել են այս երկրի պատմութեան այն վաղ ժամանակից, երբ այստեղ բնակում էին դեռ եւս Ուրարտեան ցեղերը, որոնց գլխաւոր քաղաքական կենդրոնը Տուշպա (Վան) էր, իսկ տեղական կենդրոնն Արմաւիր էր։ Տիրելով Այրարատեան նահանգին, նոքա (Հայերը), իրանց ցեղակից Իրանական իշխանների ազդեցութեան ներքոյ, ընդունեցին միանգամայն ուրիշ կուլտուրա, ջնջեցին իւրեանց նախորդների յիշատակը նուաճեալ երկրում, և մոռացութեան տալով նաեւ իւրեանց այստեղ հաստատուելու ժամանակամիջոցը, երկրիս բնիկներ համարեցին իրանց, նուաճեալ քաղաքների հիմնարկութիւնը վերագրեցին իւրեանց առասպելական Թագաւորներին, և նոցա անուանց կորուսեալ նշանակութիւնը սկսեցին մեկնել իւրեանց լեզուաւ։

Որտեղ էլ լինին Արմաւրի աւերակները, որոնել նոցա մէջ, 2000 տարի Քրիստոսից առաջ եղած, Հայաստանի մայրաքաղաքի մնացորդքը, անհնարին է։ Այս տեղերի պատմութեան մէջ, Հայոց տիրապետութեան օրերում, Արմաւիրը երբէք քաղաքական կեանքի նշանաւոր կենդրոն չէ եղել. նա Երուանդաշատից գերազանց չէր, և աւելի անշան էր քան թէ Արտաշատը, Գառնին և Անին։ Եւ որովհետեւ կարճ ժամանակ, առժմեայն հաւանութեամբ, նա մայրաքաղաք էր Երուանդից առաջ, այդ պատճառաւ նա չէր կարող շատ հռչակուել և ամենից առաջ ենթարկվեցաւ մոռացութեան և աւերակ դարձաւ։ Միայն Մ. Խորենացւոյ արձանագրած աւանդութեանց շնորհիւ, նա ժողովրդի յիշողութեան մէջ գերազանցեց Հայաստանի բոլոր միւս քաղաքները։ Բայց այդ աւանդութիւնները, ինչպէս տեսցինք, ոչ այլ ինչ են, եթէ ոչ նախահայկական Ուրարտուի արձագանգներ միայն։

Այսուհետեւ զարմանալի չէ, որ, չնայելով փոքր ի շատէ նշանաւոր յիշատակների բացակայութեան Արմաւրից, աւանդութիւնը Արմաւրի մասին յարմարեցրած է մի յայտնի տեղին, որ մինչեւ այժմ ուրիշ անուն չունի եթէ ոչ Արմաւիր։ Դա ոչ այնքան մեծ, երկայնաձիգ, 300 ոտնաչափ բարձրութեամբ մի բլուր է, Թափա—Տիպի և Գուրտուգուլի գիւղերից դէպ ի արեւմուտք, 25 վերստ հեռաւորութեամբ ս. Էջմիածնից դէպ ի արեւմտեան հարաւ, 4 վերստ Երասխից դէպ ի հիւսիս։ Այս տեղի յարմարեցնելն Արմաւրին՝ յենուում է ոչ թէ որ եւ իցէ աշխարհագրական կամ պատմական յիշատակարանների վրայ, այլ լոկ ազգային աւանդութեան վրայ, որ տարածուած է Երասխի հովտի բոլոր բնակիչների մէջ։ Այդ բանում ես ինքս անձամբ համոզվեցայ։ Բուն բլուրը բնակիչները կոչում են Արմաւիր, իսկ նորա մօտ եղած երկու գիւղերը Թափա—Տիպի և Գուրտուգուլի համարում են հին քաղաքի տեղն, որի բերդն գտնւում է բլրի վրայ։ Այս համոզումը այնքան խոր արմատացած է յիշեալ գիւղերի բնակիչների գիտակցութեան մէջ, որ նոքա իրանց երբեմն արմաւիրցի են անուանում։ Դորանով, ահա, բացատրվում է այն իրողութիւնը, որի վրայ ուշադրութիւն դարձրեց կոմս Ա. Ս. Ուվարովը*, թէ բոլոր նորագոյն աշխարհացոյցերի և աշխարհագրական հրատարակութեանց մէջ Արմաւիրը միշտ սոյն տեղին են յատկացնում։ Այստեղից արդէն պարզ է, թէ ինչու գիտնական ճանապարհորդները, զոր օրինակ Dubois de

---

* Հանգուցեալ հիմնադիր Մոսկվայի կայսերական Հնագիտական ընկերութեան։
Ծան. Թարգ։

Monpéreux *այնպիսի հեշտութեամբ բացատրում են քաղաքիս տեղն։ Արմաւրի բլրի դիրքը ինքն ըստ ինքեան շատ աչքի է ընկնում և կարծել է տալիս, որ ի հնումն այստեղ կարող էր լինել նշանաւոր քաղաքական և կուլտուրական կենդրոն։ Նա ճիշդ այն տափարակի միջումն է, որ հիւսիսից ու հարաւից շրջապատուած է Արարատի և Արագածի լանջերով. իսկ արեւմտքից ու արեւելքից Բարձր Հայոց և Գեօկ—չայի լեռներով։ Նորա տեսարանը երեւում է հեռուից և հազիւ թէ մենք դուրս եկանք ս. Էջմիածնից, իսկոյն եւեթ նկատեցինք նորան։ Նա երեւում է նոյնպէս Երասխի աջ ափերից, համարեա՝ հովտի վերջին ծայրից։ Ելնելով բլրի գագաթը, հանդիսականը զգում է, որ ինքն գտնւում է այն լայնատարած տափարակի կենդրոնում, որ չորս կողմից պատած է լեռներով. բլուրը իւր դիրքով թագաւորում է տափարակի վրայ։ Զննելով տեղւոյս կուլտուրայի սառը աստիճանին ներկայումս, բլուրը շրջապատող վայրերը անջնջելի տպաւորութիւն են գործում մարդուս վրայ։ Երասխի տօթ հովիտը, որ ըստ մեծի մասին մերկ անապատ է, արեւից տոչորուած, այնքան նորա ճառագայթներից այրուած, որ հազիւ կարելի է հասկանալ, թէ ինչպէս այնտեղ կարող են բնակիլ կենդանի արարածներ, այս տեղից, բլրի գագաթից մեզ երեւցաւ իբրեւ մի ճոխ այգի, չորս կողմը գիւղեր, որոնք թաղուած են ծառաստանների և պարտէզների մէջ, մեկուսի վեհ Արարատը և Արագածը։ Այս բոլորը լուսաւորուած էր հարաւային արեւի ճառագայթներով, կանանչում էր, փայլում էր և հըրճուանք էր ազդում հանդիսականին։ Ի հընումն երկրիս տեսարանը անհամեմատ փառահեղ էր։ Երասխը, որ չորս վերստ հեռաւորութեամբ հոսում է Արմաւրից, երբեմն անցնում էր բլրի ստորոտով, այնպէս որ այժմ էլ կարելի է տեսնել նորա չորացած հունը։ Բարեկեցութիւնը աւելի բարգաւաճ էր, քան թէ այժմ. Սարդարապատի անապատը գուցէ չկար, գետերը աւելի առատ էին ջրով, ջրմուղների ցանցը աւելի ընդարձակ, ոռոգումն աւելի առատ, բուսականութիւնը փարթամ և բնակիչները բազմաթիւ էին։ Բերդի քարուքանդ պարիսպների վրայ կանգնած՝ այս բոլորը տեսնելով, մարդս ակամայ մտածում է, թէ բնութիւնը ինքն է ստեղծել այդ տեղը մի նշանաւոր քաղաքական և կուլտուրական կենդրոնի համար։*

Ի 1869 թ. Արմաւրում գտնուած առաջին բեւեռաձեւ արձանագրութիւնները՝ իրանց վրայ դարձուցին ուսումնականների ուշադրութիւնը։ Հայոց ուսումնականները յիշեալ արձանագրութիւնների մէջ յոյս ունէին գտնելու վաւերացումն Մ. Խորենացւոյ դըրոյցների Արմաւրի հնութեան և նորա 2000 տարի Քրիստոսից առաջ հիմնարկելոյն մասին. իսկ նոցա լեզուի մէջ՝ իւրեանց ազգի նախնական լեզուն։ Ի 1880 թ. յառաջ քան Հնագիտական Հինգերորդ ժողովի գումարուիլն, որ տեղի ունեցաւ 1881 թ. Թիֆլիզում, Մոսկվայի յանձնաժողովում, Մ. Էմինի առաջարկութեամբ, տնօրինուած էր պեղումներ անել կարծեցեալ Արմաւրի տեղում։ Նոյն տարւոյ հոկտեմբեր ամսին, մի ամբողջ շաբաթ կոմս և կոմսուհի Ուվարովները պեղումներ կատարեցին բլրի վրայ ու նորա շուրջը ամենայն ուղղութեամբ. սակայն մեծածախս ձեռնարկութեան արդիւնքը միանգամայն բացասական էր։ (Կոմս Ուվարովի մանրապատում հաշիւը զետեղուած է նոյն ժողովի գործերում, էջ՝ 439—449)։ Ինչպէս շէնքերը, այնպէս և գետնի տակից ու գերեզմաններից հանած իրեղէնները, կոմս Ուվարովի բացատրութեամբ, վերաբերում են չորրորդ դարուն՝ Քրիստոսից յետոյ, այս ուրեմն հասարակաց ոչինչ չունին կարծեցեալ հին քաղաքի հետ, որպիսին էր Արմաւիրը։ Իսկ պեղումներից առաջ և յետոյ գտնուած քարերը բեւեռաձեւ արձանագրութիւններով հանդերձ՝ կոմսի կարծիքով, ծառայում էին իբրև նիւթեր յետին ժամանակի շինութեանց համար, և կարող էին բերուած լինել մի այլ տեղից, գուցէ և բլրի մօտակայքից։*

---

* *Յիշեալ պեղումներին մասնակցում էր նաև հնագէտ Պ. Ա. Երիցեանը։ Ծան. Թարգ։*

Կամ Ուլարովի եզրակացութիւնները, որ իւր ժամանակին զուրկ չէին իրական հիմունքներից, ներկայումս, երբ ունինք գիտութեան շնորհիւ ձեռք բերած նոր փաստեր, կարօտ են մեծ փոփոխութեան։ Նա որոնում էր ոչ թէ պատմական Արմաւիրն, որ յիշւում է քրիստոնէական դարերում, այլ այն առասպելականը, որ հանդէս է գալիս Մ. Խորենացւոյ Պատմութեան առաջին գլուխներում։ Եթէ Մ. Խորենացւոյ մօտ պահպանուած աւանդութիւնները Արմաւրի մասին, չհաստատուեցան բառիս բուն նշանակութեամբ՝ կոմս Ուլարովի պեղումներից, այնուամենայնիւ պէտք է խոստովանել, որ այդ պեղումների շնորհիւ ակներև կերպով պարզվեցան ճշմարիտ պատմական ակնարկներ քաղաքի մասին, թէ Մ. Խորենացւոյ Պատմութեան և թէ բևեռագիր արձանագրութիւնների մէջ։ Մ. Խորենացուց միանգամայն պարզ է, որ Հայաստանի պատմութեան հայկական շրջանում, նախաքրիստոնէական դարերում, Արմաւիրը երկրորդական դեր էր կատարում, և միայն Քրիստոսի առաջին դարում նա մայրաքաղաք դարձաւ. բայց յետոյ շուտով մոռացվեցաւ ու աւերեցաւ։ Հաւանական է, որ այստեղ մենք չպիտի որոնենք Հայոց կեանքի աւելի խոշոր հետքեր, քան թէ Արտաշատում, Գառնիում և և Հայաստանի այլ աւելի հին քաղաքներում. ընդարձակ մայրաքաղաքի փոխանակ, ըստ աւանդութեան Մ. Խորենացւոյ, կոմս Ուլարովը գտաւ միայն մի չափաւոր բերդի մնացորդը, որ նորա կարծիքով, յիշեցնում է Հայոց Դ-րդ դարու շէնքերը։ Ճիշդ այդպէս էլ պէտք է լինէր քրիստոնէական դարերի Արմաւիրը։ Բայց այն նմանութիւնը, որ նա ունի Արտաշատի, Գառնոյ և այլ շինութիւնների հետ, սահմանափակւում է մի միայն շինուածոց նիւթերով և քարեր կոփելու եղանակով, որոնց մենք չենք կարող ընդունել իբրև բնորոշ յատկութիւն զուտ հայկական շինութեան։ Հայոց թագաւորները քրիստոնէական դարերում կարող էին օգուտ քաղել նախընթաց դարերի հին շէնքերից և յարմարացնել նոցա իւրեանց արքունեաց համար։ Բլուրը բաւական էր՝ նորա վրայ բերդը կանգնելու համար, զուցէ և տաճար զետեղելու. սակայն քաղաքը տարածուած էր տափարակի վրայ բլրի չորս կողմում, և նորա մնացորդները չէին կարող պահպանուել այն տեղում, ուր քարը գործ է ածւում իբրև շինութեան նիւթ, և ուր շէնքերի մեծագոյն մասն ի հնումն, ինչպէս և այժմ՝ հաւանական է կարծել, կառուցանվում էր հողից ու կաւից։

Արդ՝ կոմս Ուլարովը իւր հետազօտութիւններով, ըստ մեզ, գտաւ այն, ինչ որ խնդրելի էր, այսինքն է՝ բուն հայկական Արմաւիրը քրիստոնէական դարերի. իսկ եթէ նա որոնում էր ահագին մայրաքաղաքի (հիմնեալ 2000 տարի նախ քան Քրիստոսի ծն.) հետքերը, որ հազարաւոր դարերի ընթացքում՝ Հայաստանի թագաւորների արքայանիստն էր, ուր անցեալի յիշատակարանները աւելի հին և բազմաթիւ պիտի լինէին, քան թէ ուրիշ տեղերում, եթէ միով բանիւ, նա որոնում էր առասպելական Արմաւիրը, այն ժամանակ զարմանալի չէ բնաւ, որ հետազօտութիւնները չարդարացրին չափազանց ակնկալութիւնները։

Սակայն Արմաւրի անդրանիկ հետազօտողներն չէին կարող չհետևել աւանդութեան ցուցումներին, քանի որ դա յատկացրած էր մի որոշեալ տեղին. իսկ այնտեղ գտած բևեռագիր արձանագրութիւնների գիւտերը, անյայտ լեզուաւ, ակամայ հարկադրում էին ուսումնականներին շաղկապել այն՝ աւանդութեան հետ, և այդ արձանագրութիւնների բնագիրներում որոնել Հայաստանի նախնական լեզուն 2000 տարի Քրիստոսից առաջ։ Ներկայ ժամանակս, արդարև պարզ է, որ այդ աւանդութեան հիմն յենուած է հաստատուն պատմական աստառի վրայ որ մի աղօտ յիշատակութիւն է սոյն վայրի պատմութեան նախահայկական շրջանի մասին, և միայն փաստերի պակասութիւնն, որ ձեռքի տակ չունէր կոմս Ուլարովը, արգելեց ռուս հնագիտին մի որոշ եզրակացութիւն անել Արմաւրի ճշմարիտ անցեալոյն մասին նախ քան զՔրիստոս։ Արդի արմաւիրեան բլրի տեղում ու նորա շրջակայքում վերջին 33 տարուայ ընթացքում գտնուեցան տասնեակ-

Monpéreux այնպիսի հեշտութեամբ բացատրում են քաղաքիս տեղն։ Արմաւրի բլրի դիրքը ինքն ըստ ինքեան շատ աչքի է ընկնում և կարծել է տալիս, որ ի հնումն այստեղ կարող էր լինել նշանաւոր քաղաքական և կուլտուրական կենդրոն։ Նա ճիշդ այն տափարակի միջումն է, որ հիւսիսից ու հարաւից շրջապատուած է Արարատի և Արագածի լանջերով. իսկ արեւմտքից ու արեւելքից Բարձր Հայոց և Գեօկ—չայի լեռներով։ Նորա տեսարանը երեւում է հեռուից և հազիւ թէ մենք դուրս ելանք ս. Էջմիածնից, իսկոյն եւեթ նկատեցինք նորան։ Նա երեւում է նոյնպէս Երասխի աջ ափերից, համարեա՝ հովտի վերջին ծայրից։ Ելնելով բլրի գագաթը, հանդիսականը զգում է, որ ինքն գտնւում է այն լայնատարած տափարակի կենդրոնում, որ չորս կողմից պատած է լեռներով. բլուրը իւր դիրքով թագաւորում է տափարակի վրայ։ Զնայելով տեղւոյս կուլտուրայի սառը աստիճանին ներկայումս, բլուրը շրջապատող վայրերը անշնչելի տպաւորութիւն են գործում մարդուս վրայ։ Երասխի աօթ հովիտը, որ ըստ մեծի մասին մերկ անապատ է, արեւից տոչորուած, այնքան նորա ճառագայթներից այրուած, որ հազիւ կարելի է հասկանալ, թէ ինչպէս այնտեղ կարող են բնակիլ կենդանի արարածներ, այս տեղից, բլրի գագաթից մեզ երեւեցաւ իբրեւ մի ճոխ այգի, չորս կողմը գիւղեր, որոնք թաղուած են ծառաստանների և պարտէզների մէջ, մեկուսի վեհ Արարատը և Արագածը։ Այս բոլորը լուսաւորուած էր հարաւային արեւի ճառագայթներով, կանանչում էր, փայլում էր և հրճուանք էր ազդում հանդիսականին։ Ի հնումն երկրիս տեսարանը անհամեմատ փառահեղ էր։ Երասխը, որ չորս վերստ հեռաւորութեամբ հոսում է Արմաւրից, երբեմն անցնում էր բլրի ստորոտով, այնպէս որ այժմ էլ կարելի է տեսնել նորա չորացած հունը։ Բարեկեցութիւնը աւելի բարգաւաճ էր, քան թէ այժմ. Սարդարապատի անապատը գուցէ չկար, գետերը աւելի առատ էին ջրով, ջրմուղների ցանցը աւելի ընդարձակ, ոռոգումն աւելի առատ, բուսականութիւնը փարթամ և բնակիչները բազմաթիւ էին։ Բերդի քարուքանդ պարիսպների վրայ կանգնած՝ այս բոլորը տեսնելով, մարդս ակամայ մտածում է, թէ բնութիւնը ինքն է ստեղծել այդ տեղը մի նշանաւոր քաղաքական և կուլտուրական կենդրոնի համար։

Ի 1869 թ. Արմաւրում գտնուած առաջին բեւեռաձեւ արձանագրութիւնները՝ իրանց վրայ դարձուցին ուսումնականների ուշադրութիւնը։ Հայոց ուսումնականները յիշեալ արձանագրութիւնների մէջ յոյս ունէին գտնելու վաւերացումն Մ. Խորենացւոյ զրոյցների Արմաւրի հնութեան և նորա 2000 տարի Քրիստոսից առաջ հիմնարկելոյն մասին. իսկ նոցա լեզուի մէջ՝ իւրեանց ազգի նախնական լեզուն։ Ի 1880 թ. յառաջ քան Հնագիտական Հինգերորդ ժողովի գումարուիլն, որ տեղի ունեցաւ 1881 թ. Թիֆլիզում, Մոսկվայի յանձնաժողովում, Մ. Էմինի առաջարկութեամբ, անօրինուած էր պեղումներ անել կարծեցեալ Արմաւրի տեղում։ Նոյն տարուայ հոկտեմբեր ամսին, մի ամբողջ շաբաթ կոմս և կոմսուհի Ուվարովները պեղումներ* կատարեցին բլրի վրայ ու նորա շուրջը ամենայն ուղղութեամբ. սակայն մեծածախս ձեռնարկութեան արդիւնքը միանգամայն բացասական էր։ (Կոմս Ուվարովի մանրապատում հաշիւը զետեղուած է նոյն ժողովի գործերում, էջ՝ 439—449)։ Ինչպէս շէնքերը, այնպէս և գետնի տակից ու գերեզմաններից հանած իրեղէնները, կոմս Ուվարովի բացատրութեամբ, վերաբերում են չորրորդ դարուն՝ Քրիստոսից յետոյ, ապա ուրեմն հասարակաց ոչինչ չունին կարծեցեալ հին քաղաքի հետ, որպիսին էր Արմաւիրը։ Իսկ պեղումներից առաջ և յետոյ գտնուած քարերը բեւեռաձեւ արձանագրութիւններով հանդերձ՝ կոմսի կարծիքով, ծառայում էին իբրև նիւթեր յետին ժամանակի շինութեանց համար, և կարող էին բերուած լինել մի այլ տեղից, գուցէ և բլրի մօտակայքից։

---

* Յիշեալ պեղումներին մասնակցում էր նաև հնագէտ Պ. Ա. Երիցեանը։ Ծան. Թարգ։

Կոմս Ուվարովի եզրակացութիւնները, որ իւր ժամանակին զուրկ չէին իրական հիմունքներից, ներկայումս, երբ ունինք գիտութեան շնորհիւ ձեռք բերած նոր փաստեր, կարօտ են մեծ փոփոխութեան։ Նա որոնում էր ոչ թէ պատմական Արմաւիրն, որ յիշւում է քրիստոնէական դարերում, այլ այն առասպելականը, որ հանդէս է գալիս Մ. Խորենացւոյ Պատմութեան առաջին գլուխներում։ Եթէ Մ. Խորենացւոյ մօտ պահպանուած աւանդութիւնները Արմաւրի մասին, չհամապատասխանեցան բառիս բուն նշանակութեամբ՝ կոմս Ուվարովի պեղումներից, այնուամենայնիւ պէտք է խոստովանել, որ այդ պեղումների շնորհիւ ակներև կերպով պարզվեցան ճշմարիտ պատմական ակնարկներ քաղաքի մասին, թէ Մ. Խորենացւոյ Պատմութեան և թէ սեպագիր արձանագրութիւնների մէջ։ Մ. Խորենացուց միանգամայն պարզ է, որ Հայաստանի պատմութեան հայկական շրջանում, նախաքրիստոնէական դարերում, Արմաւիրը երկրորդական դեր էր կատարում, և միայն Քրիստոսի առաջին դարում նա մայրաքաղաք դարձաւ. բայց յետոյ շուտով մոռացվեցաւ ու աւերեցաւ։ Հաւանական է, որ այստեղ մենք չպիտի որոնենք Հայոց կեանքի աւելի խոշոր հետքեր, քան թէ Արտաշատում, Գառնիում և և Հայաստանի այլ աւելի հին քաղաքներում. ընդարձակ մայրաքաղաքի փոխանակ, ըստ աւանդութեան Մ. Խորենացւոյ, կոմս Ուվարովը գտաւ միայն մի չափաւոր բերդի մնացորդը, որ նորա կարծիքով, յիշեցնում է Հայոց Դ դարու շէնքերը։ Ճիշդ այդպէս էլ պէտք է լինէր քրիստոնէական դարերի Արմաւիրը։ Բայց այն նմանութիւնը, որ նա ունի Արտաշատի, Գառնոյ և այլ շինութիւնների հետ, սահմանափակւում է մի միայն շինուածոց նիւթերով և քարեր կոփելու եղանակով, որոնց մենք չենք կարող ընդունել իբրև բնորոշ յատկութիւն զուտ հայկական շինութեան։ Հայոց Թագաւորները քրիստոնէական դարերում կարող էին օգուտ քաղել նախընթաց դարերի հին շէնքերից և յարմարացնել նոցա իւրեանց արքունեաց համար։ Բլուրը բաւական էր՝ նորա վրայ բերդը կանգնելու համար, գուցէ և տաճար զետեղելու. սակայն քաղաքը տարածուած էր տափարակի վրայ բլրի չորս կողմում, և նորա մնացորդները չէին կարող պահպանուիլ այն տեղում, ուր քարը գործ է ածւում իբրև շինութեան նիւթ, և ուր շէնքերի մեծագոյն մասն ի հնումն, ինչպէս և այժմ՝ հաւանական է կարծել, կառուցանվում էր հողից ու կաւից։

Արդ՝ կոմս Ուվարովը իւր հետազօտութիւններով, ըստ մեզ, գտաւ այն, ինչ որ խնդրելի էր, այսինքն է՝ բուն հայկական Արմաւիրը քրիստոնէական դարերի. իսկ եթէ նա որոնում էր ահագին մայրաքաղաքի (հիմնեալ 2000 տարի նախ քան Քրիստոսի ծն.) հետքերը, որ հազարաւոր դարերի ընթացքում՝ Հայաստանի թագաւորների արքայանիստն էր, ուր անցեալի յիշատակարանները աւելի հին և բազմաթիւ պիտի լինէին, քան թէ ուրիշ տեղերում, եթէ միով բանիւ, նա որոնում էր առասպելական Արմաւիրը, այն ժամանակ զարմանալի չէ բնաւ, որ հետազօտութիւնները չարդարացրին չափազանց ակնկալութիւնները։

Սակայն Արմաւրի անդրանիկ հետազօտողներն չէին կարող չհաւանել աւանդութեան ցուցումներին, քանի որ դա յատկացրած էր մի որոշեալ տեղին. իսկ այնտեղ գտած բեւեռագիր արձանագրութիւնների գիւտերը, անյայտ լեզուաւ, ակամայ հարկադրում էին ուսումնականներին շաղկապել այն՝ աւանդութեան հետ, և այդ արձանագրութիւնների բնագիրներում որոնել Հայաստանի նախնական լեզուն 2000 տարի Քրիստոսից առաջ։ Ներկայ ժամանակս, արդարև պարզ է, որ այդ աւանդութեան հիմն յենուած է հաստատուն պատմական աստառի վրայ որ մի աղօտ յիշատակութիւն է սոյն վայրի պատմութեան նախահայկական շրջանի մասին, և միայն փաստերի պակասութիւնն, որ ձեռքի տակ չունէր կոմս Ուվարովը, արգելեց սորա հնագիտին մի որոշ եզրակացութիւն անել Արմաւրի ճշմարիտ անցելոյն մասին նախ քան զՔրիստոս։ Արդի արմաւիրեան բլրի տեղում ու նորա շրջակայքում վերջին 33 տարուայ ընթացքում գտնուեցան տասնեւ-

կու բևեռագիր արձանագրութիւններ, որոնք պատկանում են վանի Ը և Է դարերի նախ քան Քրիստոս թագաւորներին՝ Արգիշտի Աին, Սարդուրի Բին և Ռուսա Բին: Այն ժամանակ, երբ կոմս Ուվարովը պեղումներ էր կատարում, յայտնի էին միայն երեք արձանագրութիւն, նոցա բնագիրը վերծանուած չէր և կոմսը կարծում էր, որ այդ քարերը արձանագրութիւններով հանդերձ, իբրև շինութեան նիւթ, փոխադրած էին մի ուրիշ տեղից և Արմաւիրը պէտք է որոնել այլուր: Այժմ կասկած չէ կարող լինել, որ 12 քարերից առաջինը Արմաւրի շէնքերիցն են կամ սերտ կապ ունին այդ շէնքերի հետ, մի և նոյն նիւթից են, միատեսակ տաշուած են Արմաւրի բլրի վրայ եղածների հետ, և աւանդում են քաղաքի, արքունեաց, մեհեանների, ջրմուղների կառուցման մասին մի տեղում: Այդ տեղն արձանագրութիւնների մէջ կոչւում է Argištihinili, այսինքն՝ տեղի բնակութեան Արգիշտիի. իսկ ինչ որ վերաբերւում է բուն Արմաւիր կոչման, հաւանական է, որ դա հայացրած ձևն է մի հին Ուրարտեան անուան, որ գտնւում է Ասորեստանի արձանագրութիւնների մէջ: Արմաւրի բլրի մօտ գտնուած բևեռագրերի համեմատաբար մեծ քանակութիւնը, նոցա բովանդակութեան իմաստը ըմբռնելու և մի խմբին դասելու հնարաւորութիւնը մեզ թոյլ է տալիս մի այլ տեսակէտից նայել Արմաւրի շէնքերի ծագման և նորա պատմական կարևորութեան վրայ, քան թէ (նայում էին) նորա առաջին հետազօտողները: Ներկայումս նոյն իսկ յիշատակարանների վրայ, որ գտաւ և նկարագրեց կոմս Ուվարովը, մենք նկատում ենք ճշգրիտ ակնարկներ Ուրարտեան շրջանի մասին: Այստեղ մենք պիտի խօսենք ճարտարապետական շինութիւնների վրայ վասն զի գերեզմանների միջից հանած իրեղէնների յետին ժամանակներից լինելն՝ անկասկածելի է: Կոմս Ուվարովը ճարտարապետական շէնքերը վերագրում է Դ դարուն Քրիստոսից յետոյ, և նոցա վրայ աւելի խոր հնութեան նշաններ բնաւ չէ տեսնում: Բայց այստեղ նախ և յառաջ հարկ է նկատել, որ Արմաւրի շէնքերի վրայ մենք չենք հանդիպում յետին ժամանակի յոյն—հռովմէական ճարտարապետութեան լիովին ձևակերպուած ոճերին, ինչպէս Գառնոյ յիշատակարանների վրայ, որոնց հետ նա համեմատում է նոցա. այստեղ չեն պահպանուել ոչ պատեր, ոչ ճակատներ (շէնքերի), ոչ սիւներ, այլ միայն շինութեան հիմք, որ հնարաւորութիւն չէ տալիս որոշ գաղափար կազմելու նորա բուն ոճի մասին:

Դարձեալ՝ ուշադրութեամբ զննելով ու համեմատելով բևեռագրերի քարերը շէնքերի քարերի հետ, ես եկայ այն եզրակացութեան, որ դոքա ամենայն մասամբ մի և նոյն են: Մանաւանդ ուշադրութեան առնելու է այն հանգամանքը, որ արձանագրերի քարերը տաշում էին այն բնորոշ խորանարդի ձևով, որպիսի են Արմաւրի բոլոր ճարտարապետական քարերը, նախ քան նոցա վրայ արձանագրութիւն փորագրելը: Քարերից քառանկիւնի սալեր կերտելն՝ փոքր բարձրութեամբ արտաքին երեսից bossage—ի նման, գծերով քարի եզրերին, բնորոշ յատկութիւնն էր ոչ թէ հայկական արհեստի Դրդ դարում Քրիստոսի, ինչպէս կարծում է կոմս Ուվարովը. այլ առաւել Ուրարտեան շրջանի ճարտարապետութեան Թ և Ը դարում նախ քան Քրիստոս: Այդ բանը ակներև է Սարդարապատի քարի վրայ. բաւական է միայն մի հայեացք ձգել նորա վրայ, համոզվելու համար, որ նորա կերտուածը սովորական ձևով, գծերով եզերքին և բարձրութեամբ մէջ տեղում, ուր արձանագրի բնագիրն է լինում, կարապետում էր արձանագրի փորագրելոյն: Արմաւրի քարերի տաշելու մի այլ եղանակը, որ նկատել է կոմս Ուվարովը, այն է՝ խոր բոլորաձև փոսեր քարերի կողերից մէկում, դարձեալ վկայում են ոչ յօգուտ հայկական, այլ Ուրարտեան ճարտարապետութեան: Մենք արդէն նկատեցինք, որ Դաշպաւռոնի քարը (N. 2) մի կողմից ունի այդպիսի փոսեր, որոնց նմանը մենք գտնում էինք արմաւիրեան բլրի վրայ ընկած շատ անարձանագիր քարերի վրայ: Որովհետև արձանագիր քարերը, անկասկած, կպցնում էին պատերի վրայ, ուստի այնտեղ ամրացնելու համար երբեմն փոսեր էին շինում այդ քարերի մի-

ջում։ Նոյնպիսի քարերի մեջ հանդիպեցանք Դուշպաստանի մօտ աւերակների մէջ։ Բայց ի դորանից՝ կոմս Ուվարովը յիշում է, թէ ինչ եղանակով որմեր էին շինում, պատի արտաքին և ներքին կողմից դնելով կոփածոյ քարեր, իսկ միջում անտաշ մանր քարեր. և որմն կանգնելու այդ եղանակը նա վերագրում է դարձեալ Դ դարուն Քրիստոսի։ Սակայն այդ նշանները չեն վկայում յօգուտ յիշեալ դարու. դա կարող էր կրկնուիլ ամենայն դարերում զուտ ֆիզիքական կարևորութիւնից։ Մենք գիտենք, որ հնագոյն ժամանակներում, բաբելացիք ևս, որմն կանգնելու միջոցին, արտաքուստ դնում էին այրուած աղիւսներ, իսկ միջում մեծ քանակութեամբ չայրուածները։ Շեշտելու է այստեղ և այն հանգամանքը, որ Արմաւիրի աշտարակը քառանկիւնի ձև ունի, մինչդեռ յետին հայկական ժամանակների աշտարակները ու հասարակ բոլորաձև են։

Արդ՝ շինութեան նիւթերը, քարերի տաշումն և շինուածների ձևը Արմաւիրում անպայման վկայում են յօգուտ նոցա Ուրարտեան ծագման։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ շէնքերի հին հիմունքը կարող էին գործածուիլ յետին ժամանակի շինութիւնների համար, հին ոճը պահպանուիլ երկար դարերի ընթացքում, մինչև վերջին ժամանակաշրջանը. բայց Արմաւրի շէնքերի վրայ տեսնել հայկական ճարտարապետութեան անհերքելի և ակներև նշաններ, ինչպէս Գառնիում, ոչինչ հիմն չկայ։ Եթէ դորան յարելու լինենք այն հանգամանքը, որ նոյն տեղում գտնվեցան այնքան բազմաթիւ արձանագրութիւններ, Անդրկովկասում գտնուածների մի ամբողջ կէսը, թէ նոցա բովանդակութիւնը ակնարկում է մի որոշ տեղի վրայ, այն ժամանակ փարատւում են բոլոր կասկածները և բոլոր խոչնդոտները ընդունելու, թէ արդի արմաւիրեան բլուրը Ուրարտեան շրջանում զարդարուած էր շէնքերով, ունէր քաղաքական նշանակութիւն, իւր երկարատև պատմութիւնը, և թէ բևեռագիր արձանագրութիւնների Argistiḫini-li-ն և Մ. Խորենացւոյ աւանդութեան Արմաւիրն մի և նոյն քաղաքն են։

Անունս Argištiḫinili «քաղաք Արգիշտիի» ցուցանում է, թէ նորան շինել է Վանի թագաւոր Արգիշտին, որ թագաւորում էր Ը դարու կիսում նախ քան զՔրիստոս։ Սակայն նորա առաջին հիմնարկութիւնը հազիւ թէ Արգիշտիի գործն լինի։ Սարդարապատի արձանագրութեան մէջ, ուր Արգիշտի խօսում է այս քաղաքի շինութեան մասին, աւանդւում է կործանուած ապարանքի նորոգման մասին, որ վկայում է՝ թէ քաղաքն, իբրև թագաւորական արքայանիստ, գոյութիւն ունէր նորանից առաջ, բայց քայքայուած էր։ Արգիշտին վերանորոգեց այն և կոչեց իւր անուամբ։ Վանի առաջին թագաւորներից մնացած արձանագրութիւններում մենք չենք գտնում յիշատակութիւն այս քաղաքի մասին. Արգիշտիի նախորդն, նորա հայր Մենուա, Արմաւրում ոչ մի արձանագրութիւն չթողեց և նորա կալուածքներն, հաւանաբար, տարածւում էին միայն մինչև Երասխի աջ եզերքը՝ Երևանի տափարակում։ Ձախ ափը նա անցած չէր։ Շատ հաւանական է՝ որ Արմաւիրը, իբր քաղաք և մայրաքաղաք, բնակութեան տեղի էր մի որ և իցէ տեղական իշխանի, ոչ Վանի հարստութիւնից, և նորա ճշգրիտ պատմութիւնը աւելի հին է Երասխի հովտում Վանի թագաւորների ձեռքով կատարուած աշխարհակալութիւններից։ Ասորեստանի թագաւոր Սալմանասար երկրորդի* արձանագրութիւններից մենք գիտենք, որ Երասխի եզերքում կար Ուրարտեան մի հզօր պետութիւն դիւցազնական թագաւոր Արամէի կառավարութեան ներքոյ. այդ պետութեան քաղաքների թւում յիշւում է Aramali, այսինքն բառ առ բառ «քաղաք Արամէի»։ Կարելի է գուշակել, թէ Արամալի այն ժամանակներում նախնական և բուն անունն էր Արմաւրի, երբ հիւսիսը կամ Երասխի հովիտը առաջնական դեր էր կատարում Ուրարտուի պատմութեան մէջ, նախ քան նորա կենդրոնի տեղափոխուիլն դէպ ի հարաւ՝ Վան լճի ափերը։

---

* Սալմանասար երկրորդ թագաւորեց 860–825 նախ քան զՔրիստոս։

Այդ ակզբնական անունը կարող էր պահպանուել Արգիշտիից յետոյ էլ և յարատևել։

Նախ քան Արմաւրի բլրի նուաճումն Արգիշտիի ձեռքով, նորա հայր Մենուա արդէն տիրապետել էր Երասխի հովտին։ Դաշպուշի արձանագրութիւններից մեզ յայտնի է, որ Մենուա հաստատեց իւր պետութիւնը Երասխի հովտում, նուաճելով երկիրն Էրիդուաճի և ամրացնելով այդ երկրի մայրաքաղաքն, որ իւր անուամբ կոչեց Մենուախինիլի, այսինքն՝ քաղաք Մենուայի։ Բայց ոչ մի բանից չէ երևում, որ նորա տիրապետութիւնը անցած լինէր Երասխի միւս ափը։ Երասխի բոլոր հովտի նուաճումն կատարուեցաւ Մենուայի հռչակաւոր որդու Արգիշտիի ձեռքով, որ Վանի ամենաերևելի թագաւորներից մէկն լինելով՝ արևելքի անուանի աշխարհակալների շարքիցն էր։ Նորա տիրապետութեան տակն էին՝ Առաջաւոր Ասիա, Ասորեստանը, Ասորիքը, Փոքր Ասիան. բաւական է յիշելն միայն, որ բուն Ասորեստանն անգամ, որ ունեցել էր այնպիսի միապետներ, որպիսին էին Տիգլաթ—Պիլեսեր առաջին և Ասսուր—Նասիր—աբալը, նա ամենայն իրաւամբ ենթակայ էր համարում Ուրարտուին։ Վանի քարաժայռի երեսին կայ նորա ընդարձակ մի արձանագրութիւնը, բաղկացած աւելի քան 400 տողերից, որ աւանդում է նորա արշաւանքների մասին. իւր նշանակութեամբ դա կարող է համեմատուել միայն Դարեհ Վշտասպի Բեհիստունեան արձանագրութեան հետ և կոթող է Ուրարտեան ազգի գերագոյն իշխանութեան Ասիայում։ Արգիշտին, չնայելով իւր գերազանց և զարմանալի աշխարհակալական գործունէութեան իւր աշխարհի հարաւային կողմում, չէր մոռանում հիւսիսն էլ, և կատարում էր այնտեղ այնքան արշաւանք ու աշխարհակալութիւններ, թողեց մեզ այնքան յիշատակներ, որ, ըստ երևոյթին, հիւսիսային երկիրների նուաճումն նորա աշխարհակալութիւնների գլխաւոր նպատակն էր։ Բայց նորա տիրապետութեան գլխաւոր կենդրոնը այս երկրում, ուստի նա սկսում էր իւր արշաւանքների գործողութիւնը դէպ ի Երասխի հովիտը և շրջակայ վայրերը, Արմաւիրն էր կամ Argištiḫinili. Այս կենդրոնի տեղափոխումն Մենուախինիլի (Menuaḫinili) քաղաքից Արարատի մօտ արմաւիրեան բլրի վերայ, հաւանաբար, կատարուեցաւ այն պատճառով որ Արմաւրի դիրքը, համեմատաբար, աւելի յաջող է ռազմագիտական և կուլտուրական կողմից և տեղն էլ գեղեցիկ է ու յարմար։ Տափարակի միջում լինելով, Արմաւիրը յարմար ճանապարհներ ունէր ամենայն ուղղութեամբ դէպ ի այն շրջապատող լեռնային գաւառները, որոնց պիտի տիրապետէին Վանի այս թագաւորը և նորա յաջորդները։ Զանգի, Քասաղ և Արփա—չայ գետերով, որոնք ջրմուղների ցանցով իրար ու Երասխի հետ կապուած միացած էին, կարելի էր մտնել աւելի մարդաշատ և քաղաքական տեսակէտից նշանաւոր վայրեր և օգտուել բնական ճանապարհներից, որոնք տանում էին Երասխի հովտից դէպ ի Գեղարքունու, Բարձր Հայքի բարձունքը և լեռնային շղթաներով՝ Փոքր Կովկասի վրայից՝ դէպ ի Մեծն Կովկաս, Կուր և Րիոն (Ріонъ) գետերի հովիտը։ Թէ որչափ օգուտ քաղեցին դորանից Արգիշտի և նորա յաջորդները, յետոյ կը տեսնենք. այժմ դառնանք Արմաւիր յիշատակներին, որ թողել են Արգիշտի և նորա յաջորդները։ Արմաւրի և նորա շրջակայքում գտնուած բեւեռագիր արձանագրութիւնների քարերը ճարտարապետական ծագումն ունենալով, շինութիւնների մասն են կազմում, բաց ի Ղարագալայի մօտ գտնուած արձանագրութիւնից, որ փորագրուած էր ժայռի վրայ։ Այսպիսի քարերը շատ դիւրին էր տանել մի տեղից միւս տեղ, և՝ ինչպէս երևում է, գտնուած արձանագրութիւնների քարերի մեծագոյն մասն ծառայում էր իբրև շինութեան նիւթ։ Դոքա քառանկիւնի սալեր են, մի քանիսը ունին ճիշդ խորանարդի ձև մի կանոնաչափ կողքերով. բայց մեծագոյն մասն երկարաձիգ են մի կանոնում լայնութեամբ և բարձրութեամբ և երկու կանոնում երկարութեամբ։ Բլրի վրայ և նորա մօտակայքում, այժմ սակաւ են այդպիսի քարերը. բայց նոցա ահագին քանակութեան մասին կարելի է գուշակել այն հանգամանքից, որ Արմաւիրին մօտ, ինչպէս օրինակի

համար, Թօփա—Տիպի, Գուրատուգուլի, Մօլլա—Գայէգիտ, Սարդարապատ գիւղերում և այլուր, մենք ամենայն քայլում հանդիպում էինք այդ քարերին, որոնք մի տեղում հողային պատերի հիմն են կազմում, մի ուրիշ տեղ դռների մօտ՝ նստարանների տեղ են ծառայում կամ պատերին են կպցրած իբրև զարդ։ Սարդարապատում, ուր պարսկական տիրապետութեան միջոցին բնակւում էր Երևանի սարդարը, ամրոցի դռների պարիսպները կազմուած են, արտաքուստ, արմաւիրեան սալերից։ Մինչև անգամ Վաղարշապատում, որ համեմատաբար հեռու է բլրից, մենք տեսանք, անկասկած, Արմաւրից բերուած քարեր, որով սալայատակուած են գիւղի ազուգայքը և կամուրջները։ Ս. Էջմիածնի գաւառապետ երկարակեաց Ն. Խանազովը վկայեց, թէ մեծ քանակութեամբ շինութեան համար նիւթեր են յափշտակւում Արմաւրի բլրից, թէ և տեղական վարչութիւնը խստիւ արգելում է այդ բանը։

Այցելուի պայմաններում դժուար էր սպասել, որ Արմաւրի բլրի վրայ արձանագրութեան քարեր մնային, եթէ դոքա գետնի վրայ էին ընկած, և ոչ թէ հողի տակը թաղուած։ Այդ էր պատճառը, որ քարերը գտնըւում, էին ոչ թէ բուն բլրի վրայ յատկապէս այլ նորա շրջակայքում։ Հարևան գիւղերի բնակիչները, ակներև է, որ երկար ժամանակ իւրեանց մօտ պահելով այն քարերը, ոչինչ նշանակութիւն չէին տալիս նոցա, մինչև որ Մեսրոպ արքեպիսկոպոսը և դպիր Գալուստ Տէր—Մկրտչեանցը դիմեցին նոցա հարցուփորձերով այդ մասին և սկսեցին կամաց կամաց հաւաքել այդ քարերը և բերել ս. Էջմիածին։ Թէ երբ, ուր և ինչ եղանակով դոքա երևան եկան, այժմ հնար չկայ մի առ մի ստուգելու և դորա մէջ կարևորութիւն էլ չենք տեսնում։ Սակայն այսքանս ստոյգ է, որ բոլոր արձանագրութեան քարերը, որոնք գտնուած են Արմաւրի մօտ գիւղերում, Երասխի հովտում գետի այս ու այն ափերում, եթէ մի և նոյն նիւթից են և միատեսակ տաշուած միւս քարերի նման, որ բլրի վրայ են, անկասկած է, որ դոքա պատկանում էին բլրի վրայ և մօտակայ գիւղերում եղած շինութիւններին, և միայն յետոյ փոխադրուեցան ուրիշ տեղեր։ Արդեօք բլրից հեռու թէ նորա մօտակայքում են գտել քարերը Սմբատեանց արքեպիսկոպոսը և Գալուստ Տէր—Մկրտչեանց, դա երկրորդական խնդիր է։

Այդ խորհրդածութեան վրայ յենլով, մենք իրաւունք ունինք արմաւիրեան համարել ոչ միայն այն ինը քարերը, որ, Մեսրոպ արքեպիսկոպոսի վկայութեամբ, գտնուեցան բլրի վրայ և նորան մօտիկ Թափ—Տիպի, Գուրատուգուլի և Մօլլա—Գայէգիտ գիւղերում (որոնք են N° N°. X–XIV, XVII, XIX–XXI իմ հրատարակութեամբ), այլ և երեք ուրիշները, որ գտնուած են աւելի հեռու տարածութեան վրայ Արմաւրից, ինչպիսին է՝ Ղազանչու IV և Սարդարապատի IX արձանագրութիւնը։ Իսկ ինչ որ վերաբերւում է Ղարագալայում գտնուած արձանագրութեան XXIV, պէտք է նկատել, որ նորա բովանդակութիւնը աներկբայելի յարաբերութիւն ունի Արմաւրի հետ, ուստի այն էլ հարկաւոր է զննել արմաւիրեանների հետ։ Այսպէս, ուրեմն, Արմաւրին վերաբերեալ արձանագրութիւններն 12 են. դոցանից 11 հատը ս. Էջմիածնի (Գէորգեան) ճեմարանի թանգարանումն են, մէկն (Ղազանչու) Սուրմալու գաւառապետ Բօգուսլաւսկու* մօտ է. իսկ Ղարագալայինը իւր տեղումն է։

Այս թուից եօթն քարեր պատկանում են Արգիշտի առաջնին [IV, IX — XI, XVII, XXII — XXIV], չորսը նորա յաջորդ Սարդուրի երկրորդին [XII — XIV, XX], մէկն Ռուսա երկրորդին [XIX], որ թագաւորեց հարիւր տարուց յետոյ Է դարու կիսում նախ քան զՔրիստոս։ Այս փաստերից հետևւում է, որ Արմաւրի կամ Argištihinili—ի բարգաւաճումն տեղի է ունեցած Ը դարու կի-

* Գ. գաւառապետը Ղազանչու արձանագրութիւնը ուղարկել է ս. Էջմիածին, ինչպէս Վեհափառ կաթողիկոսն Ամենայն Հայոց Մկրտիչ Ա. Նորերումս բարեհաճել էր հաղորդելու Մոսկվայի կայսերական Հնագիտական ընկերութեան։
Ծան. Թարգ։

տում նախ քան զՔրիստոս. ըստ որում այս ժամանակաշրջանից մենք ունինք տասնեւմէկ արձանագրութիւն։ Սարդուրի երկրորդի և Ռուսա երկրորդի միջանկեալ ժամանակամիջոցի մասին մենք տեղեկութիւն չունինք առ ի չգոյէ յիշատակարանների։

Արմաւրի բոլոր արձանագրութիւնները ուշիմօք ուսումնասիրելիս, մեզ զարմացնում է այն իրողութիւնը, որ նոցանից և ոչ մէկի մէջ չէ խօսւում Արմաւրի—Argistiḫinili-ի, իբրեւ քաղաքի մասին, որպէս և այն երկրի, որի սահմաններում գտնւում էր այն քաղաքը։ Նոքա աւանդում են լոկ տների շինութեան կամ նորոգութեան մասին, ջրանցքների կառուցման և կրօնական ծիսակատարութեան մասին. ոչ մէկում չէ խօսւում արշաւանքների կամ երկրի նուաճման մասին։ Դա մի թիւրիմացութիւն չէ։ Շատ հաւանական է, որ ռազմագիտական և քաղաքական տեսակէտից այս տեղն, Արգիշտիի տիրապետութեան ժամանակ, մեծ նշանակութիւն չունէր, և նորա ձեռքն հասաւ առանց պատերազմի. բայց դորա փոխարէն նա կրօնական մեծ նշանակութիւն ունէր։ Մի արձանագրութեան մէջ, այն է՝ XVII, տող 10, Արմաւիրը կոչւում է *Ḫaldina* այսինքն, քաղաք Խալդի չաստուածի. մի ուրիշ արձ. XII, տ. 5 – *Ḫaldinili*, այսինքն, տեղի բնակութեան Խալդի չաստուածի. նոյն XVII արձանագրութեան մէջ խօսւում է կենդանեաց զոհաբերութեան մասին. իսկ X, XI, և XIII արձանագրութիւնների մէջ կրօնական հանդէսների մասին։ Խալդի չաստուածի պաշտօնից զատ, որ Ուրարտեան ազգութեան գլխաւոր չաստուածութիւնն էր, այստեղ պաշտում էին նաև արեգական չաստուած Արդինին (*Ardini*), ինչպէս կարելի է տեսնել XIII արձանագրութեան 9 տողից։ Շատ հաւանական է կարծել, որ Ուրարտուի պատմութեան մէջ Արմաւիրը կրօնական նշանակութիւն ունէր դեռ եւս Վանեան շրջանից առաջ և նորա ազդեցութիւնը այս տեսակէտից Վան քաղաքից պակաս չէր։ Երբ քաղաքական կենդրոնը տեղափոխուեցաւ հարաւ, Ուրարտեան թագաւորութեան հիւսիսային երկիրները այնքան հեռացան նորանից, որ Վանի թագաւորները հարկադրուեցան զինու զօրութեամբ նուաճել նոցա. այդ միջոցին Արմաւրում չաստուածոց պաշտամունքը ընկած դրութեան մէջ էր, մեհեանները հնացած էին, զոհաբերութիւնները դադարած։ Տիրապետելով Երասխի ձախ ափերին Երեւանի սարահարթում, Արգիշտի վերականգնեց այս տեղի առաջին կրօնական նշանակութիւնը և ընդ ամին սոյն տեղն աւելի յարմար գտաւ նաեւ քաղաքական կողմից, քան Լուհիուհիհին, որ շինել էր նորա հայր Մենուան և իւր աքայանիստն փոխադրեց այս կողմերն։

Ահա՝ հեռեւում են բեւեռագրերի բնագիրը, վերծանութիւնը, թարգմանութիւնը ու մեկնութիւնը, որ աւելորդ ենք համարում մէջ բերելու, շատանալով միայն նոցա կարճ բովանդակութեամբ։ Xրդ արձանագրութեան մէջ աւանդւում է, թէ Արգիշտի, Մենուայի որդին, Խալդիացւոց բաժին է հանել երկիրն Լուլու, նշանակել է քսան քուրմ զոհաբերութեանց համար Շէլուինի ազգի միջից և այլն. XIրդը շարունակութիւն է նախընթաց արձանագրութեան, և նորա մէջ՝ ի միջի այլոց, յիշւում է Ազանի երկրի մասին, ուր հաւանական է, ասում է Գ. Նիկոլսկի, գտնւում էր Արմաւիրը։ Նոյն Ազանին յիշում է նոյնպէս Վանի քառաժայռի արձանագրութեան մէջն։ XVIIրդ արձանագրութիւնը աւանդում է, թէ Խալդի չաստուածին զոհուած են մի ցուլ, գոմէշ, ոչխար, գառն, կանգնած է սեղան աղջակերպի. վերանորոգուած է գամբարան, և այլն։

Սարդարապատի նշանաւոր արձանագրութիւնը գտնուած է ձիթահանքի մէջ և շատ լաւ պահպանուել է, որով հնարաւորութիւն է տալիս գիտնականներին վերծանելու այն բառ առ բառ. ահա նորա թարգմանութիւնը։ «Խալդիացւոց մեծաց Արգիշտի, որդի Մենուայի ասում է. պալատը կործանուած եւ վերանորոգեցի, զարդարեցի, Արգիշտիհինիլի կոչուեցաւ նա (պալատը). ամուր պատերն (ափի), իւրաքանչիւրն վայրի քարի շերտով գետն Մունանի . . . . կանգնեցի, փայտեայ շինուածներ (?) կերտեցի, կատարեցի այս ձեռնարկութիւնը (ի պատիւ) Արգիշտիի,

որդու Մենուայի, արքային հզօրի, արքային մեծի, արքային երկրի Բիայնայի, որ բնակւում է Տուշպա քաղաքում»։

Այս արձանագրութիւնը իւր բովանդակութեամբ մի վկայութիւն է Արմաւրի շինութեան Արգիշտի առաջնի ձեռքով, ասում է սոյն գիտնականը։ Անունս Argistiḫinili, որ մենք հանդիպում ենք միայն Արգիշտիի արձանագրութեանց մէջ, փորագրուած է այստեղ բուն շինութեան տեղում իւր բոլոր պարագաներով։ Արգիշտին բլրի վրայ գտաւ կործանուած պալատ, վերականգնեց այն և կոչեց Argistiḫinili։ Դա ոչ թէ միայն, յատկապէս պալատի — շէնքի անունն էր, այլ ամբողջ քաղաքի, ամբողջ գաւառի և նշանակում էր Արգիշտիի մայրաքաղաք։ Այն իսկ ժամանակ, որի մասին խօսում ենք, Վանի արքայն, ուր և բնակէր, միշտ իւր զօրքի բանակի մէջն էր, և նորա փոքր ի շատէ յարատև բնակութեան տեղին պիտի լինէր ամրացրած բանակ, բերդ։ Այսպէս և ոչ այլապէս պէտք է ենթադրել Արգիշտի Թագաւորի հիմնած Argištiḫinili-ն։ Բոլոր այդ շինութիւնները չէին կարող տեղաւորուիլ մի միայն արմաւիրեան բլրի վրայ, որ այնքան էլ մեծ չէ. հաւանաբար, բանակը բլրի ստորոտումն էր, շրջապատած պատով կամ մեծ պատուարով, որի պատերը ժամանակով կարող էին քայքայուիլ և իսպառ անհետանալ։ Հետեւեալ XXIVորդ արձանագրութիւնը գտնուեցաւ 1895 թ. Երասխի ձախ ափում՝ Ղարադալայի աւերակներից ոչ հեռու, որ գետի միւս ափումն է, քանի վերստ հեռաւորութեան վրայ Արմաւրից։ Արձանագրութեան էստամպաժը հանել է Մեսրովբ վարդապետ Տէր-Մովսիսեանը, որի վկայութեամբ այդ տեղը արժանի է խորին ուշադրութեան։ Այստեղ Երասխը դուրս է գնում նեղ ձորից Երեւանի առափարակը մտնելու, և տեղն՝ ուր գտնւում է արձանագրութիւնը, անկիւն է՝ կազմուած Երասխից և նախկին ցամաքած ջրմուղից։ Բուն արձանագրութիւնը փորագրուած է մի ահագին քարի վրայ, որ ծածկուած է մի այլ քարով։ Մեսրովբ վարդապետի կարծիքով, արձանագրութեան քարն նորան կից ժայռի մի մասն է եղել, որ յետոյ հրաբղխային յեղափոխութեան շնորհիւ դատուել է նորանից։ Բայց ես բոլոր փաստերը ունիմ ապացուցանելու, թէ այդ յեղափոխութիւնը կատարուած է նախ քան արձանագրութեան փորագրութիւնն, թէ Արգիշտի Թագաւորը գտել է քարը նորա ներկայ դրութեան մէջ։ Նոյն իրողութիւնը կարելի է ստուգել Ղուլիճանում, Զախալու և մանաւանդ Էլառ գիւղում։ Արձանագրութեան բովանդակութիւնից երեւում է, որ Արգիշտի այդ տեղում կառուցել է մի շինութիւն, որ և կոչել է *Pili*։ Այս բառը, որ Սէյսը մեկնում է իբր յիշատակարան (տե՛ս *The Cuneiform Inscriptions of Van*), իսկ Դ. Միւլլեր իւր արձանագրութիւն*. վերջին ժամանակներս, շնորհիւ Վալդիմար Բելկի կատարած հետազօտութեանց և գիւտերին Վանի շրջակայքում (*Ueber neuerlich aufgefundene Keilinscriften in russisch und türkisch Armenien. Zeitschrift für Ethnologie Bd. XXIV. Heft II (1882)*, նոր մեկնութիւն ստացաւ։ Յայտնուեցաւ այն իրողութիւնը, թէ Շամիրամ-սու (Արտամէտի և Վանի միջում) մեծ ջրմուղի մօտակայքում եղած արձանագրութիւնները աւանդում են, թէ Մենուա Թագաւորը կառուցած է *pili*։ Դա առիթ տուաւ պ. Բելկին և պրոֆ. Լեմանին պնդելու, թէ *pili* բառն հասկանալու է իբրև ջրմուղ։ Պրոֆ. Սէյսը հաւան չէ այս կարծեաց. նոյնը մենք եւս կասենք։ Ներկայումս Ղարադալայում գտնուած արձանագրութեան վրայ յենլով, Վ. Բելկը հաստատում է իւր կարծիքը։ Արմաւրի արուարձաններում գտնուած արձանագրութիւններից դա միակն է, որ, փորագրուած լինելով ժայռի վրայ, աւանդում է *pili*-ի կառուցման մասին և կանգնած է այն իսկ տեղում, ուստի սկսւում էր ջրմուղն ելանելով Երասխից դէպ ի հիւսիս՝ ոռոգելու համար Արմաւրի մօտակայ վայրերը։ Ուրեմն

---

* Die Keilinschrif von Aschrut-Darga S. 18-19. — Տե՛ս նաև Լ. Մսերեանցի յօդուածն՝ Къ интерпретаціи ванскихъ надписей — Հնագիտական ընկերութեան արեւելեան յանձնախմբի գործերում. Հտ. Բ. մասն Ա։

կասկած չկայ, որ pili նշանակում է ջրըմուղ։ Ահա յիշեալ XXIV արձանագրութեան թարգմանութիւնը.

«Խալդիացւոց մեծաց Արգիշտի, որդի Մենուայի, այս ջրմուղը շինեց, պատերը (եզերքի) բարձր իւրաքանչիւրն շերտով հողի կուտակած ագատ (?) Խալդիացւոց Արգիշտի ամրացրեց (ի պատիւ) Արգիշտիի, որդու Մենուայի, արքային հզօրի, արքային երկրի Բիայնայի, որ բնակւում է Տուշպա քաղաքում»։

Արմաւիրեան արձանագրութեանց շարքին վերադառնում ենք նաև մի տաղանի IV արձանագրութիւնը, որ արքեպ. Մեսրոպը գտել է 1886 թ. Սուրմալու գաւառի Ղազանչի գիւղում, Երասխի աջ ափերում, Արմաւիրից տասնեւհինգ վերստ հեռաւորութեան վրայ։ Գալուստ Տէր-Մկրտչեանը ընդօրինակելով այն, ուղարկեց ընկերութեանս, քանի մի կարևոր տեղեկութիւններով հանդերձ։

Ահա գորա թարգմանութիւնը.

«Խալդիացւոց մեծաց, Արգիշտի, որդի Մենուայի այս տունը շինեց»։

XIIերդ արձանագրութիւնը գտնւում է ս. Էջմիածնի թանգարանում, և պատկանում է ոչ թէ Արգիշտիին, այլ սորա յաջորդ Սարդուրի երկրորդին։ Այս թագաւորը ոչ միայն չհեռացաւ Արգիշտիխինիլի քաղաքից, որ նորա պետութեան կենդրոնն էր և արքայանիստը, այլ աշխատեցաւ տաւել ևս զարդարել ու ճոխացնել նորանոր շինութիւններով։ Սոյն XII արձանագրութեան մէջ Սարդուրի հանդիսաւոր կերպով աւետում է ի պատիւ Խալդի չաստուածի կառուցած մեհենի մասին. այս տեղ Խալդին՝ նա կոչում է տէր աշխարհի։

«Խալդիի, տիրոջ աշխարհի, այս տունը Սարդուրի, որդի Արգիշտիի, վերականգնեց (ուրեմն մեհեանը առաջ կար, բայց կործանուած էր) այս Խալդինիլի կործանուած տեղն դաների վերանորոգեց, ձօնեց ի պատիւ Խալդիու, տիրոջ աշխարհի, Սարդուրի Խալդիացւոց մեծաց, արքայի հզօրի, արքայի մեծի, արքայի աշխարհների, արքայի երկրին Բիանայի, արքայից արքայի, որ բնակւում է Տուշպա քաղաքում»։

XIII և XIV արձանագրութիւններն, որ ս. Էջմիածնի թանգարանումն են, մէկը միւսի շարունակութիւն են կազմում և տեղ տեղ ամբողջ բառեր եղծուած են կամ անհասկանալի։

XIIIերդ արձանագրութիւն.

«. . . զոհ Սարդուրի, որդի Արգիշտիի. . . ասպարներ . . . Խալդի մեծին, Խալդի հզօրին, ողորմածին . . . երջանիկ օրեր . . . ջրմուղ ամուր . . Սարդուրի 20 tuhini (յայտնի չէ ինչ) առաջի չաստուածին արեգական բերեց ընտրելագոյն աշխարհների Խալդիացւոց մեծաց Սարդուրի, որդի Արգիշտիի»։

XIVերդ արձանագրութիւն.

«Քաղաք փայտեայ շինութիւններ այս ձեռնարկութիւնը . . . զոհ Խալդինա . . . Սարդուրի, որդի Արգիշտիի . . . ասպարներ Խալդի հզօր, ողորմած». (Մնացեալն կրկնութիւն է XIIIերդի վերջին տողերի)։

Արձանագրութիւն XXերդ, Մ. Սմբատեանց սրբազանը գտել է 1881 թ. Մօլլապայէզիտ գիւղում վերոյիշեալ XIII և XIVերդ արձանագրութիւնների հետ. վերջին երկուսը փոխադրել տալով ս. Էջմիածին, առաջինը թողել է իւր տեղում և մինչև անգամ չէ հրատարակել "Արարատի" էջերում, կարծելով թէ արձանագրութիւնը անընթեռնլի է։ Երբ ես ժամանեցի ս. Էջմիածին (1893 թ.), գրում է պ. Նիկոլսկի, դիմանելով իմ խընդիրքին կաթողիկոսական տեղապահ Երեմիա սրբազանը, հրամայեց բերել տալ Մօլլապայէզիտից արձանագրութեան քարը և զետեղել Գ. Ճեմարանի թանգարանում. այս տեղ ես լուսանկարեցի արձանագրութիւնը և մի քանի էստամպաժներ հանեցի նորանից։ Արձանագրութեան մակերևոյթը, արդարև շատ քայքայուած ու ջնջուած է. համարեա բոլոր աջ կողմը և ստորին կողմի կէսը կորուած է. մէջ տեղում քառանկիւնի փոս է, ինչպէս Դուշպուսունի երկրորդ արձանագրութեան վրայ։ Ջնայելով քարի այդ անյուսալի գրութեան, ինձ յաջողեցաւ մասամբ վերծանել, մասամբ էլ վերականգնել առաջին հինգ տողերը, որ հետևեալն են.

«Խալդիի տիրոջ այս տունը Սարդուրի,

որդի Արգիշտիի վերականգնեց, ապարանքը կործանուած նորոգեց, զարդարեց, ամուր պատերը իւրաքանչիւրն Սարդուրի, որդի Արգիշտիի, բարձրացրեց . . . .

. . . .

. . . .

XIXրդ արձանագրութիւնը XIրդի հետ գտել է Մեսրովբ սրբազանը 1869 թ. Արմաւրի տաորատում, ուրեմն դա առաջին բևեռագիր յիշատակարաններից մէկն էր, որ գտնուած էր Անդրկովկասում։ Մինչև 1893 թ. արձանագրութիւնը վերծանուած չէր, մինչև որ ես լուսանկարեցի այն։ Թէև արձանագրութիւնը քարի բեկորի վրայ է, այնու ամենայնիւ շատ հետաքրքիր է իւր բովանդակութեամբ. նա պատկանում է Ռուսա Թագաւորին, Էրիմենի որդուն. այս Ռուսայի մասին մինչև ցայժմ մենք գիտէինք պղնձի ասպարների վրայ եղած արձանագրութիւններից, որոնք գտնուած էին Վանի շրջակայքում (Թոփրաք—գալէ), որ լոյս ընծայեցին մասամբ Սէյսը, մասամբ էլ Բելկը։ Սէյսը նմանեցնում է դորա Ասորեստանի Թագաւոր Ասուրբանիպալի արձանագրութեան Ru-sa-a—ին, երբ աւանդում է, թէ Էլամի Թագաւոր Թէումմանին յաղթելուց յետոյ, նա, Ասուրբանիպալն մի դեսպանութիւն էր ընդունել Ուրարտու Թագաւոր Ռուսայի կողմից, որ ընծաներ ուղարկել էր նորան։ Այդ իրողութիւնը պատահեցաւ 655 թ. նախ քան զՔրիստոս։ Գիտութեան արդի դրութեան համաձայն այս նմանութիւնը շատ բնական է երևում։ Հաւանական է, որ այս Ռուսա (կամ Ուրծա), իւր Թագաւորութիւնը սկսած լինի Ասուրբանիպալի հօր Ասարգադդոնի ժամանակ, ըստ որում համանուն Ռուսային մենք հանդիպում ենք Ասորեստանի օրհներգերում Ասարգադդոնի օրերում։ Արդ, եթէ վերջին Թագաւորն, որին մենք տեսանք աշխարհակալի և երևանեան տափարակում շինողի դերում, այսինքն Սարդուրի երկրորդը ժամանակակից էր Ասորեստանի արքայ Տիգլաթ—Պիլեսեր երրորդի, որ Թագաւորեց 745—727 թ. նախ քան զՔրիստոս, ուրեմն ժամանակամիջոցն նորա և Էրիմենի որդու, Ռուսայի մէջ պիտի լինի 80—90 տարի։ Միջանկեալ Թագաւորութիւններից մեզ յայտնի է միայն համանուն Ռուսա առաջինի, Սարդուրի երկրորդի որդու Թագաւորութիւնը, որին արձանագրութիւնը մենք էստամպաժի օգնութեամբ հանելով, վերծանեցինք 1893 թ. բայց նորանից մենք արձանագրութիւն չունինք Արմաւրում, և նորա գործունէութեան մասին Երասխի հովտում տեղեկութիւն չունինք։ Այս Ռուսա մեռաւ 714 թ. նախ քան զՔրիստոս, Ասորեստանի Թագաւոր Սարգոնի Թագաւորութեան ութերորդ տարին։ Այսպէս, ուրեմն Ուրարտուի պատմութեան մէջ մօտ 60—70 տարի Թագաւորների պակասորդ է նշմարւում, յիշատակարանների բացակայութեան շնորհիւ. այդ պատճառաւ մենք չգիտենք պատկանո՞ւմ է արդեօք Էրիմենի որդի Ռուսա երկրորդը նոյն հարստութեան, որին պատկանում էին Վանի բոլոր վերոյիշեալ Թագաւորներն մինչև Ռուսա առաջինը, որպէս և չգիտենք ի՞նչ վիճակին ենթարկւեցան Մենուա, Արգիշտի, Սարդուրի (և Ռուսա առաջինի) նուաճած գաւառներն Երասխի հովտում։ Արձանագրութեանց այս պակասութիւնը հազիւ թէ պատահական է. այն սոսկալի պարտութիւնից յետոյ, որ կրեց Ուրարտուի Թագաւորութիւնը Սարգոնի երեսից, երբ ընկաւ Ռուսա առաջինը, նորա դիւցազնական ջատագովը, երևի սկսվում է անկման ժամանակամիջոցը և ոչ միայն դադարում են Վանի Թագաւորների արշաւանքները դէպ ի հիւսիսային երկիրներ, այլ և պետութեան կենդրոնում, Վանի լճի եզերքում, Թագաւորութեան և ժողովրդի ոյժերը ջլատվում են։ Միայն 60—70 տարուց յետոյ դարձեալ երևան են գալիս արձանագրութիւններ, որոնց մէջ Ռուսա երկրորդը, նայելով իւր տիտղոսներին, հռչակւում է նոյնպիսի Թագաւոր Վանի, ինչպիսի էին նորա նախորդները. ասպարների վրայ փորագրուած արձանագրութիւնները վկայում են, թէ նա մեհեանները զարդարում էր ասպարներով։ Արմաւրի արձանագրութիւնից մենք տեսնում ենք, որ նա Թագաւորութիւն ունէր հիւսիսում նոյն սահմաններում, ինչպէս և Արգիշտի և իւր գործունէութիւնը նուիրեց շինութեանց յիշեալ Թագաւորի հիմնած Argištiḫinili

քաղաքում։ Աւելի բան մենք չգիտենք Ռուսա երկրորդի գործունէութեան մասին, և շատ ցաւում ենք՝ որ սոյն Թագաւորից ուրիշ արձանագրութիւններ դեռ չեն գտնուած։ Գուցէ յետագայ հետազօտութիւնները կ՚լրացնեն այս պակասորդը։ Ահա նորա արձանագրութիւնը. «Ռուսա, որդի Էրիմենի, այս տունն ամրացրած շինեց այս 1432 քարերից»։.... Արձանագրութեան բնագիրն վերականգնուած է համաձայն պրոֆ. Դ. Միլլերի հրատարակած արձանագրութեան (տես *Die Keilinschrift von Aschrut-Darga*, (էջ 15, Wien 1886), որ գտնուեցաւ Աստուածաշէնի աւերակներում Վանի մօտ և բովանդակում է զուգահաւասար բնագիր, որը սակայն պատկանում է ոչ թէ Ռուսա երկրորդին, այլ Արգիշտի առաջնին։ Պրոֆ. Միլլեր նշանաւոր է համարում այս արձանագրութիւնը նորա քանի մի նոր բառերի համար, որով հարստանում է Վանի լեզուն. այդ բառեր հետեւեալ երեքն են 'ari, šu-u-ni, և kapištini, որոնց մեկնութիւնը մենք տուինք մեր այս յօդուածում։ *Клинообразная надпись изъ Ганли-Тапа около Эривани* (Բևեռագիր արձանագրութիւն Գանլը—Թափէից Երևանի մօտ). տես *Труды Восточной Коммиссiи 2 Т. вып.* I.

ԳԼՈՒԽ Գ

ԱՐԱԳԱԾ, ԿՈՒԼԻՅԱՆ

(Argistiḫina, Ḳuliaini).

Արագածը իւր ֆիզիքական պայմաններով հանդերձ՝ մօտ լինելով Երասխի հովտին՝ յարմար տեղ է բնակութեան և զինուորական զբաղմանց համար։ Նորա տրամագիծը (*діаметръ*) 30 մինչև 40 վերստ է, իսկ բարձրութիւնը կենդրոնում հասնում է 13436 ոտն. Արագածը տակաւ առ տակաւ և աննկատելի կերպով բարձրանում է իրան շրջապատող դաշտավայրի միջում, մինչդեռ զառ ի վեր և դժուարելանելի Արարատը «ուղղորդ ի յերկրէ բուսեալ» է, ըստ Մ. Խորենացւոյ։ Վերջինս ամայի և անմատչելի է մարդկային բնակութեան համար, և համարեա՛ թէ զուրկ է լեռնային գետակներից. ընդհակառակն՝ Արագածը իւր խոնարհեալ և լայնատարած լանջերով շատ յարմար է բընակութեան կուլտուրայի համար, և նորա ձիւնապատ գագաթներից և լեռնային լճերից անթիւ առուակներ են հոսում, որոնք նեղ ձորերի միջից իջնելով լեռը շրջապատող առթագին դաշտերը, ոռոգում են նոցա։ Արագածի աւելի ցած տեղերում կարող է զարգանալ գինեգործութիւնը, իսկ միջին բարձրութեան վրայ հողն առատօրէն բուսցընում է ցորեան և վարսակ, որոնք առանձին խընամք և ոռոգումն չեն պահանջում։ Արագածի միայն վերին շերտերը, նորա չորս ձիւնապատ սրածայր գագաթների ստորոտում, անյարմար են երկրագործութեան համար. բայց այնտեղ էլ հովուական կեանք վարող Քրդերը լաւ արօտատեղի են գտնում իւրեանց հօտերի համար, քաշուելով լեռը ամառային ժամանակ։ Ներկայումս Արագածի լանջերի վրայ կան հայկական բազմաթիւ ծաղկեալ գիւղեր, և մեծ քանակութեամբ հին ճարտարապետական յիշատակներ, եկեղեցիք, և վանքեր, որ վկայում են, թէ աւելի հին ժամանակներում կուլտուրան աւելի զարգացած էր այժմեանից, և բնակիչներն շատ էին և հարուստ։

Դժուար է ենթադրել, որ Արագածը Ուրարտեան շրջանում չունենար իւր յատուկ պատմութիւնը Դուշպուանի ու Արմաւրի նըման, որ նա իւր բազմաթիւ գետակների, ձորերի ու բարձրաւանդակների շնորհիւ, ուր ներկայումս այնքան կեանք և կենդանութիւն է թագաւորում, չնպաստէր փոքրիկ, անկախ իշխանութեանց գոյանալուն Ուրարտեան ժամանակաշրջանում։ Նորա հիւսիս արեւմըտեան լանջերում, Ղուլիճան գիւղում 1884 թ. ժայռի վրայ գտնուեցաւ մի բևեռագիր արձանագրութիւն։ Այս իրողութիւնը առիթ է տալիս արդէն կարծելու, թէ Արագածը գրաւում էր իւր մօտ Վանի աշխարհակալներին։ Եւ հազիւ թէ հնարաւոր էր որ և իցէ աշխարհակալին ամուր ոտքով հաստա-

տաւիլ Երասխի հովտում, առանց ապահովութեան միջոցներ ձեռք առնելու Արագածի կողմից, որ յարմարագոյն տեղն է՝ թէ՛ յարձակումն գործելու և թէ պաշտպանելու։ Բաց ի դորանից՝ Արագածի վրայից էին անցնում բնական ճանապարհները դէպ ի հիւսիս, ուր ակներեւ է, որ դիմում էին Վանի աշխարհակալները։ Այս ամենը ինձ յորդորում էր ուշի մտօք ուսումնասիրել Արագածի որպիսութիւնը, Ուրարտեան աշխարհակալութեան հետքերը գտնելու դիտաւորութեամբ այս վայրում, կամ գոնէ՝ նշանակել այն ճանապարհները, որով ընթանում էին Արագածի վրայից դէպ ի հիւսիս Վանի թագաւորները։

Արագածը հետազօտելու միջոցին նախ և յառաջ գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել այն տեղի վրայ, ուր գտնուած է բևեռագիր արձանագրութիւնը, այսինքն հիւսիս—արևմտեան լանջերի վրայ, ուր Ղուլիճան գիւղն է։ Բնական և ամենայարմար ճանապարհն Երասխի հովտից դէպ ի Ղուլիճան, ներկայումս, տանում է Քասաղի հովտից լայն ու հարթ ձորով Ապարանի՝ Արագածի արևելեան լանջերով, յետոյ ճանապարհը փոքր ինչ բարձրանալով՝ ծռվում է Արագածից դէպ ի հիւսիս սակաւաբնակ վայրերով, ուր ապրում են, ըստ մեծի մասին, Քրդերը և ապա իջնում է Արագածի հիւսիս — արևմտեան կուլտուրական և հարթ տեղերն։ Այստեղից հիանալի տեսարան է բացւում հնոյն Հայաստանի պտղաբեր գաւառներից՝ Շիրակի վրայ։ Հեռուից կարելի է տեսնել Արփա-չայի հովիտը, Ալեքսանդրապօլը, որի տեղից երևում էին Բարձր Հայոց, այժմ Կարսի նահանգի գեղանի լեռները։ Կլիման այստեղ աւելի մեղմ է, ագարակութիւնը խիտ և կեանքը ամենուրէք աւելի լի է կենդանական պիտոյքներով, քան թէ Ապարանում։ Այստեղ, Գարանկա լեռնային գետակի ափին, որ բղխում է Արագածից, 18 վերստ հեռու Ալեքսանդրապօլից, կայ մի գիւղ Ղուլիճան (70 տուն բնակիչներ)։ Գետի աջ եզերքը, ուր գտնըվում է գիւղը, զառ ի վեր և ժայռոտ է, բայց շատ բարձր չէ, միւս ափը ցած է և խոնարհուած։ Քարափում, գիւղին ներքև, կայ մի խաչ, ուր փորագրուած է արձանագրութիւնը. չնայելով քարի կակղութեան՝ արձանագրութիւնը փչացուած չէ և պահպանուել է ամբողջութեամբ։ Սկզբում ես զարմանում էի, թէ ինչո՞ւ Արգիշտի թագաւորը զետեղել է դորան այնպիսի անտեսանելի տեղում. բայց ի նկատի առնելով քարի գեղեցիկ պահպանուիլն, ես համոզվեցայ, որ արձանագրութեան յատուկ այսպիսի դրութիւնը, այս աննկատելի և զանազան պատահարներից պաշտպանուած տեղում, կարող էր միայն ազատել նորան քայքայումից 3000 տարուայ ընթացքում։ Յետոյ անձամբ քննելով ուրիշ արձանագրութիւնների դրութիւնը, ես հասկացայ, որ Ուրարտեան թագաւորները իւրեանց արձանագրութիւնների համար ժայռերում տեղ ընտրելու միջոցին դիտմամբ խուսափում էին աչքի զարնող վայրերից, որպէս զի չգրաւեն նոցա վրայ թափառաշրջիկ անցաւորների ուշադրութիւնը. այլ ընդհակառակն, ընտրում էին բաւական անմատչելի տեղեր, որ ինքն բնութիւնը հովանաւորում ու պաշտպանում էր դարերի կործանիչ ազդեցութիւնից և մարդուս բարբարոս ձեռքից։ Այս հեռատեսութեանն են պարտական նոքա, որ նոցա արձանագրութիւնները անվնաս հասել են մինչև մեր օրերը։ Միայն այժմ, երբ դոքա, շնորհիւ իւրեանց բարձր հնախօսական նշանակութեան, իւրեանց վրայ դարձրին գիտնական աշխարհի ուշադրութիւնը, կարելի է երկիւղ կրել նոցա ամբողջութեան և պահպանութեան համար։

Ղուլիճանում ես յոյս ունէի տեսնել 11 տող արձանագրութիւն, ինչպէս նշանակուած էր Մեսրովբ արքեպիսկոպոսի սրբագրութեան մէջ, և ինչպէս էլ ինքս էի հրատարակել, և ընդ սմին սպասում էի այն տարօրինակ իրողութեան վաւերացմանը, որ այս արձանագրութիւնը, հակառակ Ասորեստանեայց և Վանի արձանագրութիւններին, թոյլ է տալիս բառի մասերը փոխադրել մի տողից դէպ ի միւսը — մի հանգամանք, որ զարմացնում էր նաև արևմտեան ուսումնականներին. սակայն որչափ մեծ եղաւ իմ զարմանքս, երբ

ստուգեցի թէ, արձանագրութիւնը բաղկացած է ոչ թէ 11, այլ միայն 7 տողերից, և նորա մէջ չկայ բնաւ բառի մասերի բաժանումը փոխադրութեան համար։ Դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ընդօրինակող Մեսրոպի սըրբազանի երևակայութիւնը միայն, որ առիթ տուաւ ուսումնականներին շատ նուրբ, բայց անպտուղ ենթադրութիւններ անելու։ Սակայն, այնու ամենայնիւ, մեր վերծանութիւնը արձանագրութեան, Մեսրոպի սրբազանի սրբագրածից, միանգամայն ճիշդ էր, որով հաստատվեցաւ նաև Դուրուբանի քաղաքի անուան ստուգութիւնը, որ առաջ երկբայելի էր։ Արձանագրութեան մէջ խօսում է Կուլիաինի երկրի և Դուրուբանի քաղաքի նուաճման մասին։ Ակներև էր, որ մենք գտնւում էինք այս հին Կուլիաինի երկրի սահմաններում, և շատ կարող է լինել, որ արդի Ղուլիճանը պահպանել է փոփոխուած (տուրանացրած) ձևն երկրիս հին անուան։

Արձանագրութեանս աշխարհագրական անունները մեծ նշանակութիւն ունեին մեզ համար, ըստ որում հնարաւորութիւն են տալիս մեզ, համեմատելով ուրիշ փաստերի հետ, գաղափար կազմել տեղւոյս քաղաքական և տնտեսական պարագաների մասին 8 դար նախ քան զՔրիստոս։ Եթէ Արգիշտի Մեծն արժանի է համարել իւր տիրապետած Կուլիաինի երկրի և Դուրուբանի քաղաքի յիշատակը յաւերժացնել առանձին արձանագրութեամբ, որ անվնաս հասած է մինչև մեր օրերը, այդ հանգամանքից կարելի է եզրակացնել, որ այս երկիրն ու քաղաքը այն ժամանակ ոչ աննշան քաղաքական նշանակութիւն ունէին։ Ինչպէս արդէն ասացինք, այն ժամանակները բոլոր աշխարհը բաժանուած էր զատ զատ անկախ թագաւորութիւնների կամ իշխանութիւնների, որոնց կամաց կամաց նուաճելն Ուրարտեան թագաւորների արշաւանքների գլխաւոր նպատակն էր։ Զննելով այն տեղի բնական պայմանները, ուր գտնւում է Ղուլիճան գիւղը, ես եկայ այն եզրակացութեան, թէ դոքա շատ էին նպաստում այս տեղ մի նշանաւոր և անկախ աշխարհի գոյանալուն։ Գարանկա (տաճկերէն, Գարան—կու) գետակն, հայերէն Կարկաչան (այսինքն՝ կարկաչահոս) հոսում է Մանթաշ ձորից, որ Արագածի ամենամեծ և նշանաւոր ձորերից մէկն է. նա սկսվում է Արագածի բուն իսկ ձիւնապատ կատարից, 15 վերստ հեռու Ղուլիճանից։ Դուրս գալով լեռնագօտու անձուկ ծործորներից դէպ ի խոնարհեալ բարձրաւանդակը Ալեքսանդրապոլի լանջերի, Գարան—կու գետակը բաժանվում է երեք թևերի, որոնց մէկը, որ աւելի հիւսիսային ուղղութիւն ունի, անցնում է Նորաշէն, Ղօլղաթ և Իլխիապի գիւղերի մօտից, երկրորդը՝ Արդիկ գիւղի մօտից. իսկ միջին թևն այն է, ուր Ղուլիճանն է կանգնած։ Հոսելով դէպ ի արևմտեան—հիւսիս՝ երեք թևերը միանում են Ախուրեան գետին չհասած, որի մէջ և թափւում են Ալեքսանդրապոլից 10 վերստ ներքև։ Այս Գարան—կու գետակը իւր ջրերով ներկայումս էլ նշանաւոր է տեղւոյս տնտեսական կեանքի համար. բոլոր գիւղերը նորա մօտն են և նորանից են առնում ջուրը իւրեանց պէտքերի համար, դաշտերը ջրելու, և այլն։ 15 գիւղեր մէկը միւսից ոչ հեռու տարածուած են այն թևի մօտ, ուր Ղուլիճանն է (Մեծ և փոքր Արխվէլի, Եաղանլար*, Ղուլիճան, Ղասիմալի, Քեաֆթարլու, Ղազանճի, Մէնչիալի, Թօմարդաշ, Հոռոմ, Գուլթլու—գշլաղ, Իմերխանլը, Թալիպօղլի, Ծլօֆխան և Եոլի—Գարագիլիսէ**). դոքա բոլորը ունեւոր են, իսկ մի քանիսը հարուստ և ծաղկեալ դրութեան մէջ են, մանաւանդ Արխվէլի, Հոռոմ և Գարագիլիսէ։ Գետի ձորերում կենդրոնանում է տեղւոյս ամբողջ կեանքը, ջրմուղներ, ջրաղացներ մի վերստաչափ հեռաւորութեամբ մինը միւսից, մեծ կուլտուրական ճանապարհի տեսարան են ընծայում մեզ։ Եթէ այսպիսի են արդի պայմանները, հին ժամանակը դոքա աւելի նշանաւոր էին և նպաստած պիտի լինէին մի

* Վերոյիշեալ բոլոր գիւղերի անունները, բացի Եաղանլարից, մենք ստուգեցինք Հ. Ղ. Ալիշանի Շիրակից։ Ծան. Թարգ։

** Տես Հ. Ղ. Ալիշանի Այրարատը։

ուրոյն քաղաքական մարմին կազմելու տեղացոց բոլոր բնակիչներից։ Եթէ ներկայումս այս գիւղերը կապուած են միմեանց հետ ջրմուղների մի ցանցով, ի հնումն տնտեսական շահերը հասարակաց էին և ապա պիտի առայժմ քաղաքական շահերին, այն է ստեղծել մի անկախ քաղաքական պետութիւն, որ կոչւում էր Կուլիախինի, որի կենդրոնն Դուրուբանի քաղաքն էր։

Կասկած չէ կարող լինել, որ Դուրուբանի քաղաքը կանգնած էր կամ արդի Ղուլիճանի տեղում և կամ նորա մօտակայքում։ Ղուլիճանը կենդրոնական դրութիւն ունի այս տեղում՝ և քաղաքական և կուլտուրական տեսակէտից կարող էր կենդրոն լինել։ Այն տեղ, ուր գիւղն է, Գարան—կու գետը շեշտակի դառնում է դէպ ի արևմուտք և անկիւն է ձևացնում. ապա երկու վերստ հոսելով ձորի միջով, դուրս է գալիս համարեա թէ տափարակ դաշտը։ Ուրեմն, բռնելով ձորի գլուխը, իշխելով դաշտի վրայ միւս եզերքում գետի, Ղուլիճանի դիրքը շատ յարմար էր ամրացրած քաղաքի համար։ Բլրի բարձրութիւնից բացւում է փառահեղ տեսարան, մի կողմից Արագածի վրայ, միւսից Ախուրեանի լայնատարած հովտի։ Հարցուփորձ անելով տեղացի բնակիչներից և զննելով հին առարկաները, որոնք զանազան ժամանակ գտնուած էին բուն գիւղում և նորա շրջակայքում, ես եզրակացրի, թէ այս տեղը, գոնէ Սասանեանց օրերում, աւելի մեծ նշանակութիւն ունէր, քան թէ այժմ։ Գիւղացիք ցոյց տուին ինձ մեծ քանակութեամբ արծաթեայ դրամներ Հռովմայեցւոց առաջին դարու կայսրների, առաւելապէս Օգոստոսի, Սասանեանց ակնեղէնք պեհլեւի արձանագրութեամբ. ի միջի այլոց ես գնեցի մի դրամ ես Շապուհ առաջինի (238—269 Թ. Քրիստոսի), որի վրայ գրուած է

مزدیسن بگی‌شهپو هری ملکان ملکا
ایران منوچتری من یزدان

այսինքն, պաշտող Արամազդի, աստուածափառ Շապուհ, արքայ արքայից Իրանի, երկնային ծնունդ. (ըստ մեկնութեան Պ. Վ. Տրուտովսկու)։

Այս բոլորը գիւղացիք գտել էին գետինը փորելու ժամանակ գիւղում և դաշտերում. բայց ի դորանից նոքա անդադար հանդիպում են քարեայ դամբարանների, մարդու ոսկորների և կաւեղէն անօթների, մանաւանդ շատ ոսկորներ գտել են տներ շինելու միջոցին։ Նայելով դրամներին ու ակնեղէններին, կարելի է գուշակել, որ տեղւոյս կուլտուրական շերտը հասնում է, գոնէ մինչև քրիստոնէութեան առաջին դարերը. իսկ այսչափ մնացորդների ներկայութիւնը ապացուցանում է, թէ այստեղ եղած է հին գերեզմանատուն, որ մշակուած է և ոչնչացրած գիւղացիների ձեռքով, իւրեանց բնակութեան տեղ շինելու համար։ Այս գերեզմանատունը ըստ տեսակին պատկանում է, անկասկած, այնպիսիների կարգին, որ պեղել էր Վ. Բելկը Գանձակի նահանգում. և այն հանգամանքը, որ ներկայ դէպքում դա գտնւում է բևեռագիր արձանագրութեան մօտ, հաստատում է Վ. Բելկի* ենթադրութիւնը, թէ քարեայ գերեզմանները Գանձակի նահանգի պատկանում են Վանի թագաւորների դարուն։ Յետագայ յատուկ խուզարկութիւնները այս տեղի (որ շատ անհրաժեշտ է) կարող են լոյս հանել առօրեայ կեանքի շատ իրեղէններ Ուրարտեան ժամանակից, որից հաւանական է կարծել, որ տեղւոյս նշանակութիւնը յաջորդաբար անցած լինի և Սասանեան ժամանակներին։

Բայց ի բուն Ղուլիճանից, հին բնակութեան հետքեր գտնւում են նաև Գարան—կուի ձախ ափերում, այն տեղի հանդէպ, ուր բևեռագիր արձանագրութիւնն է։ Այդ տեղը մի վերստի չափ երկայնաձիգ բլուր է. այս բոլոր տարածութեան վրայ գտնւում են լքեալ բնակարանների հետքեր. իսկ բլրի մէջ կայ մի քարանձաւ, որի մուտքը գետի կողմից 5—6 մետր է։ Մուտքը փակուած է քարերի կոյտերով, որ հրամայեցինք հեռացընել ու բանալ՝ և անցքից 2—3 մետր ցած իջնելով, ներս մտանք քարանձաւը. վերջինս 12 մետր երկայնութիւն ունի և 7 մետր

* *W. Belck*. Archeologische Forschungen in Armenien. Բեռլին։

լայնութիւն. տատասպը կամարաձև է 2 մետր 6 սանտիմետր բարձրութեամբ։ Բոլոր չորս կողմից, զուգաչափ հեռաւորութեամբ, զետեղուած են միմեանց հանդէպ չորս մուտքեր որ տանում են դէպ ի նեղ անցքերը. սոցանից երկարագոյնը, մօտ 8 մետրի, որ տանում է դէպ ի հարաւ, աջ կողմից, վերջանում է երկու ելևէջներով Ջրհորի նմանութեամբ։ Նոյնպիսի ելևէջ կայ նաև նոյն նեղ անցքի աջ կողմում։ Արդ՝ որովհետև մենք Ղուլիճանումն էինք օրուայ ամենատօթ ժամանակին, ուստի մեզ անհնարին էր երկար մնալ քարանձաւում. խոնաւ ու ցուրտ օդը շատ վնասակար էր առողջութեան համար, և մենք զննելուց յետոյ քարանձաւը՝ իսկոյն դուրս ելանք։ Գիւղացիք մեզ պատմում էին, թէ ելևէջները դէպ ի ցած տանում են ուրիշ անձաւներ ևս, որոնք իբր թէ շարունակւում են մինչև դաշտերը, մի վերստ հեռաւորութեամբ քարանձաւի մուտքից։ Սոցա մէջ նոցա վկայութեամբ կարող էին զետեղուիլ 5000 մարդ. ափսոս, որ ես չկարողացայ ստուգել այդ հետաքրքիր ցուցմունքները։

Որովհետև Գառան—կու գետակը արժանի է խորին ուշադրութեան, ուստի միտքս դրի հետազօտելու նորա եզերքի բոլոր վայրերը, հին շինութիւնների աւերակները և անձաւները։ Այդ դիտաւորութեամբ հարկադրուեցայ անցնել Գառան—կուի ձորը, սկսեալ Քեաֆթարլու գիւղից, ուր Գառան—կու դուրս է գալիս ձորից, դէպ ի վեր քսան վերստ հեռաւորութեամբ մինչև այն տեղը, ուր ձորն աւելի անձուկ է դառնում և բնակութեան վայրերը բացակայում են։ Ղասիմլի գիւղում, մի վերստ հեռու Ղուլիճանից, գետի ձախ եզերքում կայ մի բլուր Կալաճի, ուր մնացել են փոքր ամրոցի հետքեր, որպէս և մի անձաւ. այս վերջինը, համեմատաբար Ղուլիճանի անձաւի հետ, փոքր է (9 մետր երկայնութեամբ և 7 լայնութեամբ)։ Անձաւի մէջ փչում է թափանցիկ քամի, որ վկայում է մի այլ մուտքի գոյութիւնը, որ ինձ չյաջողեցաւ գտնել։ Յետոյ՝ անցնելով Եաղնլար գիւղի մօտից, մենք հասանք Մեծ ու Փոքր Արխվէլի գիւղերը. Մեծն՝ գետի աջ ափումն է, Փոքրը՝ ձախ։ Մեծ Արխվէլի բաւականին մեծ է (120 տուն), եկեղեցին նոր է, բայց կան երկու հին եկեղեցիների աւերակներ, միմեանց մօտիկ. շատ փոքրիկ են դոքա՝ մատուռների նման, 15—18 կանգուն երկայնութիւն ունին և 9—12 լայնութիւն, պատերը կոփածոյ քարերից են շինած, մի և նոյն նիւթից և միատեսակ տաշուած ինչպէս Ղրփչաղ վանքում։ Մնացել են սիւների խարիսխները, բազմաթիւ հին խաչեր և նկարազեղ քարեր։ Այս շինութիւնների ծագման մասին տեղացի գիւղացիները ոչինչ չկարողացան հաղորդել մեզ, վասն զի նոքա այս գիւղում բնակւում են միայն 1830 թուականից։ Հակառակ կողմում, Փոքր Արխվէլու մօտ, 30 կանգնաչափ բարձրութեան վրայ, կան երեք անձաւներ, որոնց մեծագոյնը Ղուլիճանի քարանձաւից մեծ է (60 կանգուն երկար. 36 լայն. 4½ բարձր.). մուտքի ձախ կողմում կայ բարձր հրապարակ, անկիւնում փոս դէպ ի ցած Ջրհորի նման. ետևից նեղ անցք, որ փակուած է քարերով։ Միւս երկու անձաւները փոքր ինչ ներքև են. հաւանական է, որ դոքա հաղորդակցութիւն ունին միմեանց հետ։ Ընդ սմին ի դէպ եմ համարում յարելու, որ Մեծ Արխվէլու եկեղեցում՝ կան հինգ մագաղաթեայ աւետարաններ մանրանկարներով զարդարած, չորսը ունին թուականներ (1587, 1595, 1621 և 1726 թ.) և մէկն անթուական է, որ, ինչպէս երևում է նորա հնութեան նշաններից, ԺԶ դարու վերջերի գործ պիտի լինի։ Փոքր Արխվէլում նոյնպէս պահւում է մի աւետարան թղթի վրայ գրուած, կարծեմ ԺԷ դարու գործ է։

Արխվէլուց ի վեր ձորը նեղանում է, ուստի և մենք հարկադրուած էինք թողնել ձորը և ընթանալ աջ եզերքով։ Բոլոր տեղը, գիւղերից սկսեալ, ներկայացնում է մի երկայն բլուր, որ ձգւում է մի քանի վերստ* ձորի ուղղութեամբ և զուգահաւասար հեռաւորութեամբ նորանից. գիւղից երկու վերստ հեռու սկսվում են մի պատնէշ և մի մեծ

* Իւրաքանչիւր վերստը = 1500 կանգուն (արշին)։ Ծանօթ. Թարգ.։

գիւղի աւերակներ, որի հետքերը շարունակւում են 2—3 վերստ։ Բլրի լայնութիւնը կէս վերստից աւելի է։ Մի տեղում կան մի մեծ շինութեան աւերակներ, զուցէ եկեղեցու, ըստ որում տեղ տեղ ընկած են խաչերի բեկորներ։ Մի քանի տեղերում մնացել են տների հիմունքը և ամբողջ ձիթահանք, շինուած մեծամեծ քարերից։ Բուն իսկ ձորի մէջը պահպանուած են երկու ջրմուղների մնացորդներ. բաց ի դորանից աջ եզերքի, այն կողմում, ուր աւերակներն են, ձորի կողերում (աւերակների ներքևում) կան բազմաթիւ քարայրներ, երեք շարքով։ Ես հաշուեցի 15 քարայր կամ աւելի լաւ է ասել, քարայրների մուտքեր. բայց շատ դժուար էր մօտեցել ուղղաձիգ ժայռերի վրայ, և ես կարծում եմ, որ նոցա թիւն աւելի շատ պիտի լինի։ Բոլոր այս քարայրները, ինչպէս երևում է, բնական են, վասն զի նոցա մէջ կան մեծ քանակութեամբ ստալակտիտներ (stalactite)։ Ես դարձեալ յառաջ անցայ ոտքով մի քանի վերստ ձորի միջով և հանդիպեցայ բազմաթիւ կործանուած ջաղացքների, ձիթահանքերի և նման շինուածների։ Այս բոլոր տեղերը շարժեցին իմ հետաքրքրութիւնը և ես ցանկացայ քննել և տապալել քանի մի ձիթահանքեր հետազօտելու դիտաւորութեամբ, թէ չկա՞յ արդեօք նոցա մէջ արձանագրութիւններ, ինչպէս Սարդարապատում. բայց տեղական քահանայ հ. Տէր—Աթանասեանցը, որ ինձ ուղեկցում էր, առարկեց թէ, այդ անհնարին է այժմ, երբ բոլոր գիւղացիները զբաղուած են դաշտային աշխատանքներով, գիւղից բաւականին հեռու, (դա 1893 թ. Յուլիսի 26ին էր), և թէ դորա համար հարկաւոր է ընտրել մի այլ ժամանակ։ Ի՞նչ տեղեր են դոքա, ինձ համար միանգամայն գաղտնիք մնաց, ոչ անունն է մնացել, ոչ էլ յիշատակ։

Անտարակոյս, իմ տեսած բոլոր հին բնակութեան հետքերը վերաբերւում են յետին Հայոց ժամանակաշրջանին։ Բայց այստեղ հարկ է ենթադրել մի քանի կուլտուրական զանգուածների ներկայութիւն. սոյն վայրերում գտնուած Արգիշտի թագաւորի յիշատակարանը երկրի ու քաղաքի անուամբ, հերիք է կարծելու, թէ վաղուց թողած այս բնակութեան տեղերում՝ պէտք է որոնել Ուրարտեան ժամանակի կուլտուրական հետքերը։

Բայց խնդրելի է՝ թէ արդեօք ամբողջ Արագածի վրայ Կուլիախինին միա՞կ ևեթ քաղաքական մեծ երկիրն էր, որ կարող էր իւր վրայ հրաւիրել Ուրարտուի միապետների ուշադրութիւնը։ Կայի՞ն արդեօք Արագածի վրայ այդ միջոցին և ուրիշ անկախ քաղաքական մարմիններ — երկիրներ, ըստ տերմինոլոգիայի Վանի արձանագրութիւնների։ Մինչև այժմ Արագածի սահմաններում, բաց ի Ղուլիճանից, չյաջողեցաւ գտնել բևեռագիր արձանագրութիւններ, ուստի հաստատուն փաստեր չունինք այս խնդիրը լուծելու։ Բայց արձանագրութիւնների այս բացակայութիւնը ներկայումս դեռ չէ նշանակում, թէ այս տեղը ոչինչ դեր չէր կատարում Ուրարտեան ժամանակամիջոցին։ Արագածի արևելեան և հարաւային լանջերի վրայ եղած երկիրները, ինքն ըստ ինքեան ունէին քաղաքական նշանակութիւն, և մեզ պիտի հետաքրքրէին արդէն այն պատճառաւ, որ նոցա վրայից էր անցնում անկասկած, Ուրարտեան աշխարհակալների ճանապարհը Արագածի հիւսիսային կողմը։ Եւ արդարև, պատմական աշխարհագրութեան համար աննշան խնդիր չէ, թէ Արգիշտի և նորա յաջորդները Արմաւրում հաստատուելով, ի՞նչ ճանապարհներով միջամուխ եղան Արագածից դէպ ի հիւսիս, արդի Շիրակ գաւառը, Ալեքսանդրապոլի հովիտը և յարաբերութիւն էին պահպանում լեռնային գաւառի հետ հիւսիսում։

Արմաւրից (Արգիշտիխինիլի) 15 վերստ դէպ ի արևելք, հովտի միջով հոսում է հիւսիսից հարաւ և թափւում է Երասխի մէջ, սորա գլխաւոր թևերից մէկն Երևանի տափարակում՝ Քասաղը։ Այս գետն իւր սկիզբն առնում է Արագածի հիւսիսային լանջերից, և ապա պտոյտ գործելով՝ դիմում է արևելեան լանջերով Ապարանի ընդարձակ ձորի ուղղութեամբ, յետոյ մտնում է հովիտ, ուր հոսում է դէպ ի ս. Էջմիածին և ապա խառնւում է Երասխին։ Այսպէս պտոյտ անելով

Արագածի կիսի շուրջը, Քասաղ գետն ամենաբնական ճանապարհ է նորա վրայից՝ հարաւից դէպ ի հիւսիս, և ամենակենսական երակն է կազմում հովտի և լեռների բնակիչների համար։ Բազմաթիւ լեռնային ձորձորներ և գետակներ, հասնելով Արագածի բարձրագոյն կատարներից, դիմում են դէպ ի Քասաղ՝ մատակարարելով նորա համար ջուր։ Այս ձորակներն իւրեանց կարգին մատչելի ճանապարհ են բացում Արագածի կատարներից դէպ ի միւս հակառակ լանջերը։ Աւելի ցած լանջերում, Արագածի ստորոտում և հովտի մուտքի մօտ, Քասաղի ջրերն արհեստական եղանակով բաշխւում են ջրմուղների և ոռոգում են խաղողի բազմաթիւ այգիները, որ լաւագոյնն են Երևանի տափարակում (Օշական, Աշտարակ, ս. Էջմիածին և այլն)։ Քասաղի հովտով ներկայումս անցնում է բանուկ խճուղին ս. Էջմիածնից, այսինքն Երասխի հովտի բուն կենդրոնից, դէպ ի Ալեքսանդրապոլ, կուլտուրային շատ յարմար վայրերով։

Դժուար է ենթադրել, որ Ուրարտեան ժամանակաշրջանում Քասաղ գետի հովիտը և Արագածից իջնող ձորերը խիտ բնակեցրած չլինէին այդ բնակիչները. հաւանական է կարծել, որ համաձայն այն ժամանակի քաղաքական և ազգագրական պայմանների, իրանցից կազմում էին մէկ կամ մի քանի իշխանութիւններ Կուլխաինիի նման։ Եթէ դորա նմանը մենք տեսնում ենք միւս փոքր գետերի հովիտներում, ինչպիսի են՝ Գարան—կու, Զանգի (Հրազդան), նորա թեւն (Էլառի, տեղի ցածութիւն), ուրեմն եւ առաւել պիտի սպասենք այդ բանը համեմատաբար աւելի նշանաւոր Քասաղ գետի հոսանքում։ Այս տեղն, որ մի կողմից շրջապատուած է Արագածի արևելեան և հիւսիս — արևելեան լանջերով, իսկ միւսից Գառնի—եարըխ, Ալիբէկ և Կուրաբօղազ լեռներով, ներկայացնում է շատ ընդարձակ ձոր, լայնատարած դաշտերով, որ շատ յարմար են մշակութեան (կուլտուրայի) համար։ Կլիմայն այս տեղ աւելի խիստ է, քան թէ Երասխի հովտում, ամառն կարճատև է ու անձրևային, բաւական ոռոգելու համան հողը, որ առատօրէն արտադրում է ցորեան, վարսակ և ուրիշ բոյսեր։ Այս բոլոր տեղն ներկայումս հայերէն կոչւում է Ապարան։ Իմ բարեկամ, Էջմիածնում, հայկաբան հ. Գալուստ Տէր—Մկրտչեանի վկայութեամբ, Ապարան բառը չունի ճիշդ և պարզ մեկնութիւն Հայոց լեզւում, թէ և պատահում է իբրև աշխարհագրական անուն Հայոց դպրութեան Ժ դարու յիշատակարանների մէջ։ Բաց ի այս ամբողջ տեղի անունից, որի մասին մենք խօսում ենք, այս անուամբ կոչւում է նաև գլխաւոր գիւղն Ապարանում՝ Պաշ — Ապարանը. իսկ հ. Գալուստը նոյն ծագումից է համարում, ինչպէս և Ապարանը՝ նոյնպէս փոքր ինչ տարբեր, Պարնի երկու գիւղերի անունը, Ապարանի հիւսիսում, որոնց մէկն Արագածի հիւսիսային լանջերի վրայ է, միւսն Ալեքսանդրապոլից դէպ ի Դիլիջան տանող պոստի ճանապարհի վրայ։ Ես յօժար եմ հ. Գալուստի հետ կարծելու, որ յիշեալ Պարնի և Ապարան անունները իրօք հայացրած ձևերն են այս վայրերիս հին—ուրարտեան կոչման։ Գօլանը—գըռանի (Ալաշալու) արձանագրութեան մէջ, որ պատկանում է Ռուսա առաջինին՝ տող 10 յիշւում է երկիրն *Piruaini* (Պիրուաինի) միւս 23 աշխարհների հետ, որ գտնւում էին Սևանայ լճի, Երասխի հովտի և նորա թևերի վրայ։ Շատ կարող է լինել, որ այս *Piruaini* նոյնն է, թէ Պարնի (Ապարան)։ Այս տեղ կը նշանակեմ միայն այն իրողութիւնը, որ տեղս Ապարան (Պարնի = *Piruaini*) համեմատաբար հարուստ չէ հին յիշատակարաններով. ակներև է, որ Հայոց ժամանակը նա շատ նշանաւոր դեր չէր կատարում։ Ապարանի նշանաւոր տեղերը, Գարագիլիսէ, Ալիքուչակ և Պաշ—Ապարան ներկայումս հնագիտական տեսակէտից ոչինչ ուշադրութեան արժանի բան չեն ներկայացնում։ Բայց այսու ամենայնիւ, եթէ Ապարանը Ուրարտեան ժամանակաշրջանում առանձին մի դեր չէր կատարում, անկասկած, նա մի ընդարձակ ճանապարհ էր Երևանի տափարակից դէպ ի Ալեքսանդրապոլի դաշտավայրը, շատ յարմար բազմաթիւ զօրքեր անցընելու համար։

Բայց առանձին ուշադրութեան արժանի

են Քասաղի ափերին հօսանքի վայրերը. այս տեղ էին ի հնումն Հայոց նշանաւոր գաւառներն՝ Արագածոտն և Ամբերդ։ Թէպէտ և անձամբ հետազօտելով այս վայրերը, ես չգտայ Ուրարտեան տիրապետութեան վերաբերեալ յիշատակարաններ, սակայն համոզվեցայ, որ այն ժամանակները Արագածոտն և Ամբերդն աւելի նշանաւոր պիտի լինէին, քան թէ Գարան—կուփ հովիտը Կուլխաինի երկրի իշխանութեամբ հանդերձ։ Նախ և յառաջ Կուլխաինի և Արագածոտն գաւառների մէջ կայ մի անմիջական կապ, որ բնութիւնը ինքն է ստեղծել։ Մանթաշ ձորը՝ ուստի սկիզբն է առնում Գարան—կու գետակը և Ամբերդի ձորը, ուր տեղից հոսում է Քասաղի նոյնանուն գլխաւոր թևը, որ թափւում է Քասաղի մէջ համարեա դաշտավայրում (10 վերստ ստորև ս. Էջմիածնից), իւրեանց սկիզբն առնում են Արագածի հարաւ—արևմտեան կատարի ստորոտում, ոչ հեռու մէկը միւսից։ Վերելքը սարի վրայ դժուար չէ, թէ և 10,000 ոտնաչափ է այս տեղում։ Ցամենայն դէպս Արագածի այս երկու մեծագոյն ձորերը սերտ միացած են և կարում են ամբողջ Արագածը հիւսիսից — արևմուտք և հարաւից — արևելք։ Այս բոլոր ճանապարհը մօտ 100 վերստ տարածութեամբ, Ղուլիճանից մինչև Օշական ես անձամբ անցայ և ինձ համար պարզվեցաւ Կուլխաինի երկրի նշանակութիւնը Արագածոտնի և Ամբերդի նշանակութեան հետ միասին։ Միայն միանուագ տիրապետելով Արագածի այս երկու հանդիպակաց, խիստ ամուր և նշանաւոր լանջերին, Արգիշտի և նորա յաջորդները կարող էին իրանց Երասխի հովտի տէր ճանաչել։ Արգիշտիհինիլի (Արմաւիրը) կարող էր միայն առաջաւոր կէտն լինել այն ամրութիւնների, որոնք տարածւում էին ուղիղ գծով տափարակի կենդրոնից, Արագածի լեռների վրայից, մինչև միւս տափարակն Արագածի հիւսիս — արևմտեան կողմում, այսինքն՝ մինչև Ախուրեան գետի հովիտը, ուր Ալեքսանդրապոլն էր։

Ամբերդի ձորն և Ամբերդ գետակն ունին աւելի յարմար պայմաններ կուլտուրական և ռազմագիտական տեսակէտից, քան թէ Մանթաշի ձորը և Գարան—կու գետակը։ Ամենավերին բարձանց վրայ, ուր Ամբերդ ձորը ամայի տեսարան է ներկայացնում, այնու ամենայնիւ անցանելի է. բայց այն տեղում, ուր գետը հասնում է իւր միջին հոսանքին, երկիրը այնպիսի յարմարութիւններ ունի բնակութեան և ամրութիւնների համար, որոնց նման չկայ ամբողջ գաւառում։ Հիանալի, քաջառողջ կլիմայ, խոշոր անտառներ, որոնցից զուրկ է Երասխի բոլոր հովիտը, աղբիւրների ու առուների առատութիւնը, աստիճանաւոր խոնարհումն լեռների դէպ ի Երասխի հովիտը, այս ամենը տրամադրում է տեսնել սոյն տեղում Ուրարտուի նշանաւոր գաւառներից մէկն։ Բայց ամենից շատ այս տեղը կարելի էր յարմարացնել պաշտպանութեան համար։ Բաւականին գաղափար տալ այդ մասին կարող է իմ զննած Ամբերդ ամրոցը։ Դա գտնւում է Ամբերդ գետակի միջին հոսանքից փոքր ինչ վեր, ուրեմն, բաւական բարձրութեան վերայ, այն իսկ տեղում, ուր Ամբերդ ձորը (տաճկերէն Ղամպուտ—դերեսի) միանում է Արխաշան ձորի հետ, որ փոքր է նորանից և նոյնպէս դուրս է գալիս Արագածից։ Այս ձորերի միանալուց կազմւում է մի հրուանդան, որ անմատչելի է երեք կողմից՝ հարաւից, արևելքից և արևմուտքից. իսկ հիւսիսային կողմից զատուած է մնացեալ ցամաքից՝ խոր խոռոչով այնպէս որ ամբողջ տարածութիւնը թերակղզու տեսք ունի։ Այս թերակղզու յետին կողմում, ուր փորուած է խոր փոս, կանգնած է մի ահագին ամրոց, բաղկացած մի քանի միմեանց հետ միացած բոլորակ աշտարակներից, որոնք շինուած են կոփածոյ քարերից։ Աշտարակները, առ հասարակ լաւ են պահպանուած, բաց ի մէկից, որ կործանվելով գլորվել է փոսի մէջ։ Ամրոցից $1/4$ վերստ հեռու կայ մի Հայոց տաճար՝ երկու աշտարակներով հին ճարտարապետութեամբ. եկեղեցին կիսով չափ կործանուած է, բայց այնու ամենայնիւ պահպանել է իւր նուրբ և փառահեղ ձևերը։ Այս տեղ, ուրիշ բնակիչներ չկան, միայն թափառական Քրդեր են բնակւում երբեմն։ Գուցէ ամրոցը Ուրարտեան

ժամանակիցն է։ Բոլոր վայրերը այստեղ և մանաւանդ շինութիւնները արժանի են առանձին հետազօտութեան։ Կուտակուած հողի հաստ շերտերը թերակղզում, անկասկած, նոյնպէս ծածկում են հնութեան յիշատակարաններ։

Ամբերդ ամրոցը միակ ամրացրած տեղի չէր ձորում։ Հայոց հին հեղինակների վկայութեամբ, հին ժամանակներում մի նշանաւոր ամրոց էլ գտնւում էր Բիւրականում, որ 15 վերստ հեռու է Ամբերդից, և ուր ներկայումս Հայոց կաթողիկոսի ամարանոցն է։ Ես չգիտեմ, ունի՞ն արդեօք մի որ և իցէ յարնչութիւն Ագարակ գիւղի մօտ իմ տեսած գեղեցիկ քարայրները պաշտպանութեան շինուածների հետ. բայց թէ այս քարայրները արհեստական կերպով շինուած են, դա աներկբայելի է։ Դոքա բաւականին բարձրութեան վրայ են գտնւում։ Քարայրների մուտքը նեղ է և փակ ծանրաշարժ քարեայ դռներով, որ երկու զօրեղ թաթարներ հազիւ կարողացան շարժել տեղից։ Դռների ետևը կան նեղ անցքեր և նոյնպէս բաւականին անձուկ դահլիճներ սրբատաշ պատերով և մուտքերով, որ նոյնպէս ամբողջ քարերիցն են, ինչպէս որ և արտաքին դռները։ Ես տեսայ երկու քարայր, մէկում հաշուեցի 9 դահլիճ, միւսում 12։ Ինչի՞ համար էին այս քարայրները ես չկարողացայ իմանալ։ Այդ քարայրների դռներից մէկն այժմ պահւում է ս. Էջմիածնի Թանգարանում։ Յամենայն դէպս անկասկածելի է, որ Արագածի հարաւային լանջերը աւելի հարուստ են հին կուլտուրայի հետքերով, քան թէ հիւսիսայինը։ Առատօրէն ոռոգուած Երասխի հովիտն աստիճանաբար բարձրանում է դէպ ի հիւսիս, պահելով սակայն իւր միաձև—գեղեցիկ և ծաղկեալ տեսարանը։ Արագածի դիւրամատչելի լանջերը, լցուած Քասաղի և նորա Թևերի ջրերով, բարեխառն և քաջառողջ օդը տալիս էին բնակիչներին, ընդարձակ հողերի հրապարակներ մշակութեան համար, և ընդ նմին հնարաւորութիւն էին շնորհում անհրաժեշտ ապաստան գտնել թշնամեաց յարձակումներից։ Այստեղ դիւրաւ կարելի էր կառուցանել մի ամբողջ շարք ամրոցներ, շնորհիւ տեղիս ֆիզիքական բնութեան։ Եւ այն տեղում, յատկապէս, մենք պիտի որոնենք այն երկրի դիրքը, որ Արգիշտիի օրերից ստացաւ Արգիշտիհինա (Argištiḫina) անունը, որին վերաբերւում է նաև Argištiḫinili (Արմաւիրը)։

Կրկնում եմ, որ իմ արտայայտած խորհրդածութիւններս, տակաւին չեն հաստատւում փաստերի ապացոյցներով, ինչպիսիք են արձանագրութիւններ և Ուրարտեան ժամանակից մնացած ճարտարապետական շինուածոց հետքերով, այլ յենւում են Մովսէսի Խորենացւոյ Պատմութեան Առաջին Գրքի ԺԲ գլխի աւանդութիւնների վրայ։ Ուշադրութեամբ ուսումնասիրելով այդ գլուխը՝ բևեռագիր արձանագրութիւններից ստացած տեղեկութիւնների հետ ի միասին, ես հասայ այն համոզման, որ այդ ամբողջ գլուխն արձագանգ է Ուրարտեան աշխարհակալութեանց Մենուայի, Արգիշտիի և այլոց օրերից, Երասխի հովտում. և թէ այս աշխարհակալութիւնները վերագրուած են Հայաստանի ազգային էպօնիմ—դիւցազանց՝ Արմենակին, Արմայիսին և այլոց։ Ես արդէն առիթ ունեցայ նախընթաց գլխում յիշելու, թէ Մովսէսի Խորենացւոյ աւանդութիւնը Արմաւիրի մասին (նոյն ԺԲ գլխ.) արմատանում է՝ Երասխի հովտի, Արգիշտիի ձեռքով տիրապետելու յիշողութիւնների մէջ և յետին ժամանակի Արմաւիրի տեղում՝ Ուրարտեան մայրաքաղաքի Argištiḫinili կառուցանելում։ Բայց այդ յիշողութիւնները չեն վերաբերւում միայն Արմաւիրին, այլ ընդգրկում են Երասխի ամբողջ հովտի անցեալը։ Ըստ Մ. Խորենացւոյ՝ Արմենակ, նահապետ և էպօնիմ—դիւցազն Հայաստանի, որդի Հայկայ, ելաւ Բաբելոնից և բնակեցաւ Երևանի տափարակում. բայց նախապէս տալիս է իւր եղբարց մէկին՝ Մանաւազին և նորա սերընդոց «զեզր ծովուն աղւոյ», այսինքն Վանի։ Այս Մանաւազ անուան մէջ դժուար է չըտեսնել *Menua* անունը, որի լիակատար ձևն է Menuaše. իսկ Մանաւազեան նախարարական ցեղում, նորա հարստութիւնը (*Menuaḫini*) Մենուահինի։ Արդ՝ եթէ Արմենակի եղբօր անուան և նորա հռչակի մէջ՝

ալի ծովի եզրում մենք Մենուայի մասին յիշատակութիւն ենք գտնում, ապա ուրեմն, Արմենակի անուան տակ ծածկւում է բեւեռագիր արձանագրութիւնների մէջ այնքան հռչակուած Արգիշտին։ Ահա Մ. Խորենացու բուն խօսքերը. «Իսկ Արմենակայ առեալ զամենայն բազմութիւնն, խաղայ յարեւելս հիւսիսոյ, և երթեալ իջանէ ի խորին դաշտավայրի մի ի բարձրագագաթանց պարըսպեալ լերանց, գետս կարկաջասահ ի յարեւմտից ընդ մէջ անցանելով, և զդաշտն արեւելից իմն զոգցես իբր որսայսեալ, ձիգ յարեգակն կոյս զերկայնութիւն պարզեալ, և ստորոտովք լերանցն բազում ականակիտ բղխեալ աղբերք, որ գետոց հաւաքումն եղեալ հեզաբար առ սահմանօքն նոցա, ծնիւք լերամբք և եզերօք դաշտին՝ պատանիք ոմանք իբր երիտասարդուհիք ճեմիցին։ Այլ հարաւային նորին արեգակնաճեմ լեառն, սպիտակափառ ուղելով գագաթն, ուղղորդ ի յերկրէ բուսեալ...։ Ցայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամենակայ, շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոտն լերինն ի նոյն կողմանէ, և զլեառն անուանէ յանգագոյն յիւր անուն Արագած, և զկալուածսն՝ ոտն Արագածու» (Գիրք. Ա. գլ. ԺԲ)։ Աւանդութիւնը այստեղ վերագրում է Արմենակին այն, ինչ որ իրօք կատարեց Արգիշտին. այսինքն Երասխի հովտի տիրապետութիւնը, նորա կենդրոնում մայրաքաղաքի կառուցումն «յայսմ խորութեան դաշտի բնակեալ», և ապա ամրացնելն դաշտի հիւսիսային կողմերի և Արագածի հարաւային լանջերի։ Մենք արդէն ասացինք, որ Արգիշտիհինա երկիրն տարածուած էր Արմաւրից դէպ ի հիւսիս և գրաւուած Արագածի ստորին լանջերը։ Այս աւանդութեան մէջ մանաւանդ հետաքրքիր է այն, որ Արմենակը կոչում է Ալակեօզը «յանգագոյն յիւր անուն» Արագած, ·իսկ կալուածքները՝ Արագածոտն. բանից դուրս է գալիս, թէ Արմենակը կրում էր մի այլ անուն եւս, այսինքն Արագած։ Որչափ ինձ յայտնի է, Արագած բառն Հայոց լեզւում չունի իւր բառագիտական մեկնութիւնը, և մասնագէտների կարծիքով, որոնց ես դիմեցի, հայերէն չէ։ Ուրեմն շատ բնական է այն բառի մէջ տեսնել ուրարտական Արգիշտիի (*Aragatz*) հայացումն, իսկ Արագածոտնի մէջ — Argistiḫina։

Արգիշտիի յաղթութիւնները Երասխի հովտում և նորա թողած յիշատակարանները այնքան յաւերժացրին նորա անուան հռչակը, որ ամբողջ տեղւոյս յորջորջումն նորա անուամբ մնաց մինչև մեր օրերը. իսկ նորա անունն ու գործերը ժառանգելով Հայոց աւանդութիւնը փոխադրեց Հայաստանի առասպելական էպօնիմ — դիւցազն՝ Արմենակի վրայ։ Սակայն Հայոց աւանդութեան մէջ պահպանուել է նաև յիշատակութիւն և այն մասին, թէ նախ քան Հայերի գալն Երևանի դաշտավայրը, այնտեղ կային նախահայկական բնակիչներ մի այլ ցեղից եւս. ըստ որում Արմենակի Արագածոտն գալու պատմութիւնը անելուց յետոյ, Մ. Խորենացին ասում է՝ «բայց սքանչելի իմն ասէ պատմագիրն, թէ ի յոլով տեղիս գտան բնակեալ ի մարդկանէ յերկիրս մերում ցան և ցիր, սակաւք յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ»։

Բայց, ինչպէս և հարկ էր սպասելու, աւանդութիւնը, յենլով պատմական մութ յիշատակութիւնների և աշխարհագրական անունների վրայ, ստեղծում է իւր ազգաբանութիւնը և անցից յաջորդութիւնը, չփոխելով ժամանակները կամ բաժանելով մի ժամանակի եղելութիւնները զանազան ժամանակամիջոցների։ Այսպէս մենք տեսանք, որ Արմաւրի շինութիւնը վերագրւում է ոչ թէ Արագածին (Արգիշտիի), որ նոյն է թէ Արմենակ, այլ նորա որդու Արմայիսին, որ իւր անունը հաղորդեց քաղաքին։ Ես իմ տեղում նկատեցի, որ Արմայիս անունը յառաջացած է, հաւանաբար, Արմաւրից, և ոչ թէ ընդհակառակն։ Բացի դորանից այս Արմայիսի մասին Մ. Խորենացին ասում է հետեւեալը, «զորդին իւր զՇարայ, գյոլավածին և զշատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ և բարի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած. յորոյ անուն և զգաւառն ասեն անուանել Շիրակ»։ Շիրակ անուան տակ

այս տեղ չը պէտք է հասկանալ համայն Բարձր Հայքը, կարուց գաւառի հետ, այլ յատկապէս հովիտն Արագածի հիւսիսային լանջերում, այսինքն արդի Ալեքսանդրապօլի պաշտավայրը։ Մենք արդէն գիտենք Ղուլիճանի արձանագրութիւնից, որ քննեցինք այս գլխում, որպէս և Գանլըճայի արձանագրութիւնից, որ պիտի քննենք հետևեալ գլխում, որ Արագածի հիւսիս—արևմտեան լանջերը, յատկապէս Գարան-կու գետի հովիտը և Ալեքսանդրապօլի բոլոր ցած վայրերը նուաճեց Արգիշտի։ Աւանդութիւնը նոցա նուաճումն վերագրում է Հայոց յետին ժամանակի Շիրակ գաւառի էպօնիմ — դիւցազնին. բայց ուշադրութեան արժանին այն է, որ Արագածի հարաւային լանջերի նուաճումն՝ աւանդութիւնը անմիջապէս կապում է հիւսիսային լանջերի նուաճման և Արմաւրի (Argištiḫinili) շինութեան հետ։ Մենք տեսանք, որ իրօք այդպէս էլ կատարուեցաւ. հարաւի նուաճումն առիթ տուաւ և հիւսիսի տիրապետութեան, և տեղի ունեցաւ մի և նոյն ժամանակ։

Զարմանալի չէ բնաւ, որ ամենամութ և աղօտ յիշատակը ազգային աւանդութեան մէջ պահպանուել է այն մարդու անձնաւորութեան և գործերի մասին, որին ամենից առաջ պատկանում է Երևանի տափարակի գրաւելու պատիւը, այն է Մենուային, որի յիշատակարանները մենք գտնում ենք Դաշպուռունում, Արարատի հարաւային լանջերի մօտ։ Մենք ասացինք, որ նորա տիրապետութիւնը սահմանափակուեցաւ միայն Երասխի աջ ափերով. իսկ բոլոր հովտի նուաճումն նորա երևելի որդու՝ Արգիշտիի գործն էր։ Շատ հասկանալի է, որ Արգիշտիի ու նորա աշխարհակալութեանց յիշատակը, որոնց մասին մինչև ցայսօր այնքան պերճաբանութեամբ խօսում են նորա անունը կրող յիշատակարանները, նսեմացրեց նորա հօր յիշատակը և Երասխի ձախ ափերի տիրապետութիւնը, յատկապէս Արարատի հարաւային և հարաւ—արևմտեան լանջերի, ուր մնացել են Մենուայի յիշատակարանները, աւանդութիւնը վերագրում է Արմենակի — Արագածի (= Արգիշտիի) յետագայ սերունդ Ամասիային, որդուն Արմայիսի։ « Ամասիայ, ասում է Մ. Խորենացին, անցանէ զգետովն մերձ ի լեառն հարաւոյ, և շինէ անդ առ խորշիւք լեռնաբինն մեծամեծ ծախիւք երկուս տունս. զմին յարևելս կոյս մօտ յակունս աղբերցն՝ որ առ ստորոտով լերինն ելանեն. իսկ զմիւսն՝ յարևմուտս կոյս նորին տանն, բացագոյն իբր մեծօր հասարակորդ միոյ հետևակագնացի աւուր ճանապարհի »։ Յետոյ նա ասում է, թէ տներից մէկն իւր Ցոլակ որդու անուամբ կոչեց — Ցոլակերտ, իսկ միւսն Փառոխ որդու անուամբ — Փառախոտ։ Անկասկած, այս աւանդութեան մէջ Փառախոտի և Ցոլակերտի շինութեան մասին Արարատի ստորոտում, թագնուած է պատմական հատիկը Մենուայի (Մանուաղ) աշխարհակալութիւնների, նորա շինած տաճարների և պալատների մասին այս տեղերում արձանագրութիւններով հանդերձ, որ կրում են նորա անունը։ Բայց աւանդութիւնը հակառակ հետևողութեամբ է ներկայացնում աշխարհակալութիւնների ընթացքը. իրօք աշխարհակալները ոչ թէ ձախ ափից անցան աջը, այլ ընդհակառակն՝ աջից դէպ ի ձախ, և ձախ ափերի տիրապետութիւնը կամ լաւ ևս ասել Արարատի նախալեռներինը՝ տեղի ունեցաւ Երասխի բոլոր հովտի նուաճումից և Արմաւրի շինութիւնից առաջ։

Վերջապէս մեկնելու համար այն իրողութիւնը, թէ ո՞ր աստիճանին Հայոց աւանդութիւնը, Երևանի տափարակի տիրապետութեան մասին Հայաստանի նահապետների ձեռքով, գլխաւոր և էական կէտերում համաձայն է Ուրարտեան աշխարհակալութեան (Ը դար նախ քան զՔրիստոս) ճշգրիտ ընթացքի հետ, մենք կարող էինք ներածել Մ. Խորենացւոյ յետագայ աւանդութիւնը Գեղամայ ծովի և նորա եզերքի տիրապետութեան մասին. բայց դորա վրայ պատշաճ ենք համարում խօսելու փոքր ինչ յետոյ, երբ կանգնենք Գեօկ—չայի յիշատակարաններին. իսկ առ այժմ այսքանս կը նկատենք, որ Մովսէսի Խորենացւոյ առաջին Գրքի ԺԲ գլուխը շատ փոքր տարածութեան վրայ ներկայացնում է մեզ զարմանալի հանգամանքներ, որ յայտնի են մեզ այս երկրի ճշգրիտ պատմութիւնից հնագոյն ժամանակներում, Ը դարում նախ քան զՔրիստոս. և առ հասարակ Հայոց ա-

ւանդական աշխարհակալութիւնների պատկերը միանգամայն քաղուած է Ուրարտեան աշխարհակալութիւնների ճշմարիտ պատմութիւնից՝ անձանց և վայրերի անունների նմանաձայնութեամբ հանդերձ։ Ես տարակոյս չունիմ, որ այս գլխի համար անհրաժեշտ մեկնութիւններ կարելի է քաղել մի միայն բեւեռագիր արձանագրութիւնների տեղեկութիւններից։ Ղուլիճանի [N°. VII] արձանագրութիւնը․

« Խալդիան ես աղօթում էի, տիրոջ հզօրին, որ տուաւ Կուլխաինի երկիրն ընծայ Արգիշտիին, ես ընծաներով մօտեցայ Խալդիան։ Արգիշտի ասում է, ես նուաճեցի քաղաքն Դուրուբանի — երկրին Կուլխաինի »։

ԳԼՈՒԽ Դ

ԳԱՆԼԸՃԱ

(Eriahi, Irdaniuni).

ԱՐԱԳԱԾԻ հիւսիս—արեւմտեան լանջերը աստիճանաբար իջնում են դաշտավայրը, որ նման է Երևանի տափարակին, բայց աւելի փոքր է և առաւել բարձր նորանից։ Դա Ալեքսանդրապոլի դաշտավայրն է։ Շրջապատած գոլով արեւմաքից, հիւսիսից և հարաւ—արեւելքից բարձր Հայոց լեռներով, նա նոյնպէս բոլորաձև մեծ ձոր է, թէ և ոչ այնքան տօթային, ինչպէս երևանեանն է, ըստ որում գտնւում է 5079 ոտն. բարձրութեան վրայ ծովի մակերևութից։ Այս հովիտը նշանաւոր կէտ է զանազան ճանապարհների, որոնք զանազան ուղղութեամբ տանում են դէպ ի Մեծ և փոքր Կովկասի բնակեալ տեղերը. Ախուրեանի վրայից, որ ոռոգում է այս հովիտը, կարելի է բարձրանալ վեր Կուր գետի հովիտը, արդի Ախալքալաքի և Ախալցխայի վրայից կարելի է իջնել Երասխի հովիտը, ուր թափւում է Արփա—չայը (Ախուրեան)։ Այստեղից նոյնպէս ճանապարհ է գնում դէպ ի արևելք, Աղստև գետի հովիտը, որ իւր կարգին դիմում է դարձեալ Կուր գետի հովիտը։ Դոքա երկու մեծ ճանապարհներ էին Փոքր Կովկասից դէպ ի Մեծն, որով անյիշատակ ժամանակներից շարժվում էին Կովկասեան ազգերը։ Բաց ի դորանից Ալեքսանդրապոլից բացւում է ճանապարհ դէպ ի բարձր Հայք արդի Կարուց նահանգ, Կար—չայի հովիտը, որ տանում էր դէպ ի Արզրում։ Արդ Ալեքսանդրապոլի նշանաւոր դիրքը ռազմագիտական և կուլտուրական կողմից պարզ է ինքն ըստ ինքեան։ Սակայն Ալեքսանդրապոլի այժեան ամրոցը (Կիւմրի) հին չէ և Անդրկովկասի պատմութեան Ուրարտեան շրջանին կուլտուրական և ռազմագիտական կենդրոնն ուրիշ տեղումն էր։ Ոչ հեռու արդի Ալեքսանդրապոլեան բազմանկիւնից (полигонъ) 8 վերստ հեռաւորութեամբ դէպ ի հիւսիս—արեւմուտք Արփա—չայի ձախ ափերում, գետի խորագոյն և լայն ձորի մէջ՝ մի քանի բարձրաւանդակների վրայ, որ կազմում են ձորի լանջերը, տարածւում է ընդարձակ Գանլըճա գիւղը՝ հին հոյակապ Մարմաշէնի տաճարով, որ հայկական ճարտարապետութեան լաւագոյն կոթողներից մէկն է։ Ջորի վերին կողմն, գետի ձախ եզերքում, բաղկացած է քարաժայռերից, բաղադրեալ սև կճի լավայից, նոցանից մէկի վրայ, պարփակուած չորս կողմից փոքր ժայռերով, իբրև մի բնական գաւթի մէջ, որի մուտքը արեւմտքից էր, կար 5 տող մի բեւեռագիր արձանագրութիւն։ Քարը այն տեղում, ուր գտնըւում է արձանագրութիւնը, շիտակ տաշուած է. արձանագրութիւնը այնքան գեղեցիկ է պահպանուած, որ կարծեմ թէ երեկ է միայն փորագրուած եղել։

Արձանագրութիւնը, չնայելով իւր համառօտութեան, լոյս է սփռում տեղւոյս աշխարհագրական և քաղաքական պայմանների վրայ Ուրարտեան շրջանում։ Նորա մէջ մենք գտնում ենք երեք աշխարհագրական անուններ. 1) Eriahi որի նուաճման մասին խօսում է արձանագրութեան մէջ, 2) Iškigulu և 3) Irdaniuni քաղաքի, որը բաժանում էր Իշկիգուլու երկրից։ Դժուար չէ տեսնել, որ արձանագրութիւնը չեշտում է յատկապէս երկու իրողութիւն։

Eriaḫi երկրի նուաճումն և Irdaniuni քաղաքի առնումն Išḳigulu երկրից։ Այս բոլոր վայրերը աշխարհագրական անմիջական կապ պիտի ունենան և իրար հետ՝ մանաւանդ Իրդանիունի քաղաքը հարկ է որոնել յիշեալ արձանագրութեան մօտակայքում։ Թէ երկու երկիրներն Eriaḫi և Išḳigulu միմեանց մօտ ու սահմանակից էին, այդ մասին վկայում են Արգիշտիի միւս արձանագրութիւնները, որ գտնուած են Ռուսաց Հայաստանի սահմաններից դուրս։ Երկիրն Eriaḫi, Išḳigulu և Etiuni երկիրների հետ ի միասին, յիշւում է Արգիշտիի մեծ արձանագրութեան մէջ Վանի քարաժայռի վրայ. ուստի պարզ է, որ դոքա միմեանց հետ սերտ յարընչութիւն ունին։ Ապա Eriaḫi–ն մի քանի անգամ յիշւում է տարեգրերում. բայց Išḳigulu մի անգամ միայն յիշւում է. բայց ոչ տարեգրերում ոչ էլ Գանլըճայի արձանագրութեան չէ ասւում նորա նուաճելու մասին, ակներև է, որ նա հեռու հիւսիսումն էր՝ և Արգիշտիի արշաւանքներում նշանաւոր դեր չէր խաղում։ Փոքր ինչ ստորև մենք կ՚բացատրենք, թէ ինչու *Etiuni* երկիրը մենք յատկացնում ենք Կարս–չայի հովտին. իսկ այժմ Eriaḫi մասին խօսելով, մենք հիմնաւոր ենք համարում յենուլ Գանլըճայի արձանագրութեան ակնարկի վրայ, որ այս երկրի նուաճման յիշատակ է, և որոնել նորա դիրքը Արփա–չայի հովտում, ուր գտնուեցաւ արձանագրութիւնը։ Շատ կարող է լինել, որ Eriaḫi երկիրը, իբր նշանաւոր քաղաքական վայր, համապատասխանում էր Հայոց հին Շիրակ գաւառին և տարածվելով Արփա–չայի ձախ եզերքներով, դրացի էր *Etiuni* երկրին, որ ձգւում էր Կարս–չայի ափերով մինչև Ախուրեանը և համապատասխանում է բարձր Հայոց, արդեան Կարուց նահանգին։

Իսկ գալով Išḳigulu երկրին, որին բոլորովին չէր տիրել Արգիշտին, պէտք է նըկատենք, որ նորա դիրքը որոնելու է Գանլըճայից դէպ հիւսիս՝ Արփա–չայի վերին հոսանքներում։ Դորա վրայ ակնարկում է, բաց ի վերոյիշեալ հիմունքներից, նաև *Irdaniuni* քաղաքի սերտ կապն նորա հետ. այս քաղաքն պէտք է որոնել Գանլըճայի տեղում։ Այդ քաղաքի դրութեան մասին հարկ է նկատել հետևեալն. արձանագրութիւնից 150 կանգուն դէպ ի արևմուտք բարձրանում է մի կոնաձև բլուր, Արփա–չայի ձորի վերևում, որ երկայնաձիգ բլրի մի մասն է կազմում. վերջինս կէս վերստի չափ տարածւում է գետի եզերքով անդադար նուազելով դէպ ի արևմուտք. այս բլրի և դաշտերի միջում կայ մի լայն ձոր, որ արևմտեան ուղղութեամբ քանի գնում խորանում է և անձուկ է դառնում։ Տեղս շատ յարմար էր բերդի համար, ինչպէս արմաւիրեանն էր։ Բլրի վրայ մնացել են կոփածոյ քարերից շինած մեծ շէնքերի հետքեր։ Գրիգոր Մագիստրոսը (ԺԱ դարու) ասում է թէ բլրի վրայ Հայոց իշխան Վահրամ Պահլաւունին մի բերդ էր շինել, որ նորա անուամբ կոչւում էր Վահրամաշէն։ Թէ այստեղ, արդարև, եղել է Հայոց բերդ յետին ժամանակներից, դորա ապացոյցներն են՝ հին Հայոց գիւղերի հետքերն և Հայոց եկեղեցիների աւերակներն բազմաթիւ խաչքարերով, որոնք գտնւում են ձորի ետևում, ուր սկսվում են դաշտերը։ Նոյն իշխան Վահրամին են վերագրում Հօյակապ Մարմաշէն տաճարի շինութիւնը, ուր Պահլաւունեաց իշխանների դամբարանն էր։ Սակայն շատ բնական է ենթադրել, յենլով բևեռագիր արձանագրութեան վրայ, որ այնտեղում ուր բերդի աւերակներն են, գտնըւում էր Ուրարտեան ժամանակից ամրացեալ քաղաք։ Արդէն վերը յիշեցինք, որ այս բոլոր տեղերը ռազմագիտական մեծ նշանակութիւն ունեցած պիտի լինին, ըստ որում այս տեղից էր բնական ճանապարհն Բարձր Հայքից դէպ ի Շիրակ և աւելի հեռուն արևելք և հիւսիս և այդ պատճառաւ ի հնումն Գանլըճան պիտի կատարէր այն դերն, որ վերջերս վիճակվեցաւ Ալեքսանդրապոլին։ Արտաքին տեսարաններով Գանլըճայի ամրութիւնների հետքերը մեզ յիշեցնում են նոյն տեսակ աւերակները բլուրների վրայ՝ բևեռագիր արձանագրութիւնների մօտ, Օրդակլու, Էլառ, Գանլութափա, Սարըղամիշ, Գօլանը–դըռանը գիւղերում, և այլն։ Ամե-

նոյն հաւանութեամբ կարելի է ենթադրել որ Հայոց յետին (պատմական) շինութիւնները կառուցուած են Ուրարտեան բնակավայրերի տեղերում և Ուրարտեան շէնքերի հիմանց վրայ։ Շատ կարելի է մինչև անգամ, որ Ուրարտեան շէնքերի նիւթերը գործ են դրուած նոր շինութիւններ կառուցելու ժամանակ։ Յօգուտ այս ենթադրութեան վըկայում է պատեր շինելու եղանակն, որ կատարելապէս արմաւիրեան է։

Irdaniuni քաղաքը, խլուած լինելով Išḳigulu երկրից և յարած Eriaẖi երկրին, ակներև է, որ այս երկու աշխարհների սահմաններումն էր և բանալի էր դէպ ի հիւսիս։ Բայց այս կէտից հեռու՝ դէպ ի հիւսիս, երևի, Վանի թագաւորների տիրապետութիւնները չէին տարածւում։ Ուստի Գանլըճայի արձանագրութիւնը որոշում է այն վերջին ծայրն հիւսիսում, մինչև ուր հասնում էին Վանի միապետների աշխարհակալութիւնները։ Իրդանիունի քաղաքն կարող էր լինել նոցա տիրապետութեան վերջին ամրոցն, մինչդեռ գաւառն, ուր գա գտնըւում էր և որից բաժանվեցաւ, տարածւում էր աւելի հեռու դէպ ի հիւսիս և ամբողջութեամբ չէր նուաճուած։ Հակառակ Išḳigulu–ին Eriaẖi երկիրը միանգամայն տիրապետել էր Արգիշտի։ Եթէ մեր ենթադրութիւնը ճշմարիտ է, թէ այս երկիրը գրաւել էր Ալեքսանդրապօլի դաշտավայրը և Ախուրեան գետի ամբողջ ձախ եզերքը, ապա ուրեմն, ակներև է, որ նա ամենանշանաւոր աշխարհներից մինն էր Երասխի հովտում։ Դորա վրայ ակնարկում է, ինչպէս արդէն նկատեցինք իւր տեղում, *Eriaẖi*–ի յաճախակի յիշուելն Արգիշտիի տարեգրերում և մի այլ արձանագրութեան մէջ։ Այստեղ ակամայ փափաք է ծագում մարդուս մտքում համեմատելու *Eriaẖi*–ի հետ ուրիշ երկու աշխարհների անուանները, որ Երասխի հովտումն են. այն է *Eriduahi*–ի Դաշպուռունի մօտ *Luẖiunini* քաղաքով և բաց ի դորանից Գօլանըղրանի արձանագրութեան մէջ յիշուած *Eriaini*–ի, որ մենք նմանեցնում ենք Երևանին։ Արդեօք դոքա տարբե՞ր անուններ էին, որ զանազան աշխարհներ էին նշանակում, թէ ըստ նշանակութեան մերձաւոր էին և վերաբերւում էին միևնոյն երկրի կամ միևնոյն ազգի զանազան ճիւղաւորութեան. դըժուար է դրական պատասխան տալ, այլ կարելի է միայն մի քանի ենթադրութիւններ անել յօգուտ այն մտքի, թէ այս անունները եթէ ոչ համանիշ, գէթ շատ մօտ են միմեանց։ Զևերն *Eriaini* և *Eriaẖini* տարբերւում են միմեանցից այնու միայն, որ վերջինս ունի մասնիկ *ẖi*, որ պատկանելու նշան է (յատուկ անուններում—որդի, հօր անուն) և մենք գիտենք դէպքեր էլ՝ ուր *ẖi* մասնիկով օժտուած ձևերը և առանց դորա յաճախակի պատահում են միևնոյն երկրի անուան մէջ։ Այսպէս *Etiuni* երկիրն XXXI, *3*, *7*, *12* արձանագրութեան մէջ հետևեալ ձևեր է ընդունում. *Etiuẖini*(*li*) (տող. *3*), *Etiuẖinaidi* (տ. *7*) և *Etiuẖinili*։ Կասկած չկայ, որ այստեղ խօսքը միևնոյն *Etiuni* երկրի մասին է, այն ինչ երեք դէպքերումն էլ հանդէս է գալիս *ẖi* մասնիկը։ Դարձեալ Ասորեստանեաց արձանագրութիւններում յիշուած Ուրարտեան *Daiaieni* գաւառը, որ Երասխի հովտին մօտ էր, Վանի արձանագրութիւնների մէջ երևում է *Diauẖini* ձևով, այսինքն՝ նոյն միջանկեալ *ẖi* մասնիկով։ Դորանից պէտք է եզրակացնել, թէ *Eriaini* և *Eriaẖini* նըշանակութեամբ նման են միմեանց և թէ միևնոյն անուան այլակերպեալ ձևերն են միայն։ Եթէ այս այսպէս է, ուրեմն *Eriaẖini* պիտի բովանդակէ իւր սահմաններում, բաց ի Արփա—չայի հովտից, Երևանի բոլոր տափարակը Արփա—չայից մինչև Երևան և այսպէս նորա տարածութիւնը համեմատաբար շատ ընդարձակ պիտի լինի։ Ոչ այնքան սերտ ազգակցութիւն կայ վերոյիշեալ երկու անունների և *Eriduaẖi* կամ *Eriduaẖini* (Արաքսի աջ ափերում, Դաշպուռունի մօտ) երկրի անուան մէջ. բայց հազիւ թէ կարելի է ժխտել, որ *Eriduaẖini*–ն փոփոխուած ձևն է *Eriaẖini* անուան *du* միջանկեալ մասնիկով։ Մենք ճշդիւ չգիտենք, թէ այս բառի մէջ *du* վանկը ի՞նչ պաշտօն է վարում, (իբր առանձին բառ *du* նշանակում է, «կարծել»), ենթա-

գրել)․ բայց միանալով մի այլ բառի հետ, փոխում է նորա նշանակութիւնը աւելի, քան թէ *hi* մասնիկը. և այս պատճառաւ մեզնից հեռու է *Eriduaḫi*-ն *Eriaḫi* և *Eriaḫini* անուններին նմանեցնելու միտքը։ Մենք կարծում ենք, որ *Eriduaḫi* երկու վերջիններից միանգամայն տարբեր կոչումն է, բայց միևնոյն ժամանակ ի նկատի առնելով ձևերի մերձաւորութիւնը, պիտի ենթադրենք, որ դա *Eriaḫini* և *Eriaini* երկիրներին մերձաւոր մի աշխարհի անունն էր։

Գուցէ բանը այսպէս պէտք է ներկայացնել, որ եթէ թէ *Eriaḫi*, *Eriaḫini* և *Eriaini* անուններ են մի երկրի Երևանի տափարակում, Երասխի ձախ ափերում, իսկ *Eriduaḫi* նոյն կամ մօտ երկրի անունն է Երասխի աջ ափերում։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս բոլորն ենթադրութիւն է միայն և շատ հնարաւոր են մանաւանդ այժմ, մինչև որ իրողութիւնները կամ ապագայ գիւտերը չեն մեկնել մեզ այս երկիրների անունների փոխարինի յարընչութիւնը, որ շատ մօտ են միմեանց։ Մեր ենթադրութիւնները մենք աւելի յառաջ կը տանենք հարցնելով, արդեօք Արաքսի (հայերէն—Երասխ) այժմեան անուան տակ չէ՞ ծածկւում հին *Eriaḫi* (գուցէ և գետի) երկրի անունը։

Արձանագրութիւն N.º V Գանլըճայի։

«Խալդիացւոց մեծաց Արգիշտի ասում է, ես նուաճեցի Էրիահի երկիրն, ես նուաճեցի քաղաքն Իրդանիունի երկրից Իշկիգուլու»։

ԳԼՈՒԽ Ե

ՍԱՐԻԳԱՄԻՇ

(Etiuni, Aḫuriani).

Ախուրեան գետի աջ ափերում գըտնըւում է մի լեռնային աշխարհ, որ ներկայումս կոչւում է Կարուց նահանգ (*Карская область*). այնտեղից ճանապարհը անցնում է Ալեքսանդրապոլից Կարս, Սարիղամիշ դէպ ի Արզրում այսինքն է Բարձր Հայք, ուր սկիզբն են առնում գետերն Եփրատ (արևելեան և արևմտեան), Տիգրիս և Արաքս։ Մենուա թագաւորը երբեմն հասել էր այս կողմերը Արաքսի վրայ, յատկապէս, Հասան—ղալէ և այնտեղ, ուր այժմ գտնւում է Դելի—բաբա գիւղը, Ալաշկերտի գաւառում։ Այսպէս, ուրեմն, Վանի թագաւորների պատերազմական գործողութիւնները այստեղ սկսեցան աւելի առաջ, քան թէ Երևանի տափարակում, ուր նոքա կարող էին միջամուխ լինել Երասխի հոսանքով։ Դորա մասին վկայում է այն փաստը, որ այստեղի յիշատակարանները պատկանում են Մենուային, ոչ թէ յետին թագաւորներին և թէ Մենուա կամաց կամաց պատրաստում էր իւր արշաւանքը դէպ ի Երևանի նահանգը, գործելով նախապէս Երասխի վերին հոսանքում։ Նորա յաջորդ Արգիշտի այստեղ նոր ճանապարհ հարթեց իւր աշխարհակալական ձգտումների համար դէպ ի հիւսիս, այն է՝ Երասխի վերին հոսանքից նա անցաւ Կարս—չայի վերին հոսանքը և այստեղից սոյն գետի հովտով իջաւ Արփա—չայի հովիտը և ապա վեր ելաւ դէպ ի Գանլըճա։ Այս ճանապարհը բնական և հին ճանապարհն էր մեծ գետերի վերին հոսանքներից դէպ ի Փոքր և Մեծ Կովկասի լեռնագօտիքը։ Թէ արդարև Արգիշտի տիրել ու հաստատուել էր այս ճանապարհում, այդ մասին վկայում են նորա երկու արձանագրութիւնները. մինը՝ արդէն մեզ յայտնի, Գանլըճայում, միւսը՝ Սարիղամիշում գտածը, որ այժմ պահւում է Կովկասեան թանգարանում։ Արձանագրութեան քարը* երկար ժամանակ թանգարանումն էր և երբ մենք ժամանեցինք Թիֆլիզ (1893 թ.), ուսումնասիրելով նորա յատկութիւնը և լուսանկարելով արձանագրութիւնը, մեզ յաջողեցաւ վերականգնել վերջնիս բնագիրն. քարը վեց

* 1896 թ. մեզ եւ վիճակվեցաւ տեսնել այս քարը Թիֆլիզի Կովկասեան թանգարանում, ուր դա մեծ խնամքով է պահւում։

Ծան. Թարգ.

կատր է դարձած, բայց իւր ամբողջութիւնը, համարեա, չէ կորցրած, վնասուել է միայն նորա ստորին և ձախ կողմերը, ուր տեղից փշրուած է մի գիծ մի մի նշանով։ Սակայն առաջին տողն արձանագրութեան դորա ընկերն չէր և որովհետև քարի մակերևութին նայելով չէ երևում, որ դորանից վեր տող եղած լինի, այդ պատճառաւ կարելի է ենթադրել, որ արձանագրութեան սկիզբն մի այլ քարի վրայ էր, որ գուցէ, դորա մեծութեամբն էր։

Այս արձանագրութիւնը գտել է Ա. Դ. պ. Երիցեանցը *1878* թ. վերին Սարիգամիշում. քարը, նորա խօսքերով, բերել են լեռնականները աւերակներից, որ գտնւում էր անտառում 5 վերստ հեռու Սարիգամիշից և ամրացրել իւրեանց շինած մզկիթի արտաքին պատին հարաւ արևելեան կողմից. Գ. Ա. Իվանովսկի *1894* թ. գալով Կովկաս, այցելել էր Սարիգամիշը և ուսումնասիրել Կարս–չայի ամբողջ հովիտը. Նորան յաջողած էր ժողովել տեղեկութիւններ նաև Սարիգամիշի արձանագրութեան մասին։ Տերանիք ցոյց էին տուել նորան այն բլուրը, ուր գտնուած է արձանագրութիւնը և մինչև անգամ աւերակները դաշտում, ուր արձանագրութիւնն էր։ Այդ բլուրը բաւականին մեծ է, իւր մէջ բովանդակում է հին շէնքերի հետքեր և գտնւում է Կարս–չայի հոսանքի սկզբում և ծառայում է իբրև բանալի այդ հովտի։ Ա. Իվանովսկին անցնելով Կարս–չայի ամբողջ հովիտը, եկել է այն համոզմունքի, թէ դա (հովիտը) ի հընումն շատ նշանաւոր ռազմագիտական դեր է կատարած, ըստ որում նորա բոլոր տարածութեան վրայ կարելի է նկատել հին մեծամեծ ամրոցների աւերակներ։ Համեմատելով վերջիններս Սարիգամիշի և ուրիշ տեղերի աւերակների հետ, նա կարծում է, թէ դոքա Ուրարտեան ժամանակներից են մնացած։ Այսուհետև տարակոյս չկայ, որ Կարս–չայի հովիտը Արգիշտիի համար մեծ ճանապարհ էր դէպ ի հիւսիս. իսկ գաւառն, որին դա պատկանում էր, արդի Կարուց նահանգը, նշանաւորներից մէկն էր Ուրարտացւոց օրերում, ինչպէս և ներկայումս Կարուց նահանգը ճանապարհ ու բանալի է Կովկասի համար հարաւից։

Սարիգամիշի արձանագրութիւնը միանգամայն հաստատում է այս ենթադրութիւնները։ Չնայելով քարի քայքայուած դրութեան և արձանագրութեան խանգարուած լինելուն, այնու ամենայնիւ հնարաւոր եղաւ քաղել նորանից ճիշդ և աներկբայելի աշխարհագրական և պատմական տեղեկութիւններ։ Նորա մէջ յիշւում են աշխարհների ու քաղաքների մի քանի անուններ, որոնց տիրապետել է Արգիշտի. ուշադրութեան արժանին ի միջի այլոց այն է, որ երկու անգամ այստեղ խօսւում է *Etiuni* երկրի նուաճման մասին։ Հազիւ թէ կասկած կարող է լինել, թէ արձանագրութիւնը յատուկ յիշատակարան է այս ու նորա սահմանակից երկիրների տիրապետութեան. ուստի այս նահանգում որոնելու է Ուրարտեան նշանաւոր *Etiuni* գաւառը։ Այս երկիրը բազմիցս յիշատակւում է Արգիշտիի արձանագրութիւնների մէջ. տարեգրերում 5 անգամ [պրոֆ. Սէյս. XXXVII, *21–22*. XXXVIII, *25*. XLIII, *41–49*], բացի դորանից՝ Արգիշտիի XLV, *28* (Սէյս) արձանագրութեան մէջ։ Այս երկրի դիրքը որոշելու համար շատ նշանաւոր են մանաւանդ վերը բերած տեղերից միայն երկու վերջինը. այն է XLIII, *47–49* արձանագր. դա յիշւում է Eriaḫi և Iškigulu երկիրներին կից. իսկ արձանգ. XLV (յիշւում է տող *28*) մենք գտնում ենք *Eriaḫi* կից *Diauḫini* երկրին։ Այս վերջնիս դիրքը որոշում է XXXորդ արձանագրութիւնը Ալաշկերտի Դեշլի–բաբա գիւղում. նորա մօտ մենք պիտի որոնենք նաև *Etiuni* և *Eriaḫi* երկիրները։ *Eriaḫi* երկրի դիրքը արդէն յայտնի է Գանլըճայի արձանագրութիւնից և գտնւում է Ալեքսանդրապոլի դաշտավայրում, Արփա–չայի ձախ ափերում։ Այսպէս ուրեմն պարզ է, թէ այս երկու երկիրների մէջ՝ *Diauḫini* հարաւում և *Eriaḫi* հիւսիսում, պէտք է լինի *Etiuni*։ Սարիգամիշի արձանագրութիւնը միանգամայն հաստատում է այս ենթադրութիւնները։ Այդ արձանագրութիւնը Կարս–չայի հովտի սկզբում գտնուած լինելով,

ւանդում է *Etiuni* երկրի նուաճման մասին և հաստատում է թէ *Etiuni*–ն գտնւում էր բուն այս հովտում և համապատասխանում էր արդի Կարսի նահանգին։ Դորա վրայ, բաց ի յիշեալից, ակնարկում է այն նշանաւոր հանգամանքը, որ այս երկրում Արգիշտիի ձեռքով նուաճուած քաղաքների թւում արձանագրութեան մէջ առաջին տեղն բռնում է *Ahuriani* քաղաքի անունը, որ բոլորովին համապատասխանում է Արփա–չայի այժմեան հայկական անուան Ախուրեան–ին։ Ըստ վկայութեան հայագէտ Սէն–Մարտենի (Mémoires historiques et géographiques sur l'Arménie T. 1, p. 33). Ախուրեան կոչումն ի հնումն Կարս–չային էր պատկանում և ոչ Արփա–չային*։ Այս տեղից կարելի է եզրակացնել, որ *Ahuriani* քաղաքը, համանուն Կարս–չայ գետի, երկրիս գլխաւոր քաղաքն էր և ամենայն հաւանութեամբ գտնւում էր Սարիղամիշի այն տեղում, ուր գտնուել է արձանագրութիւնը։ Խնդիրը այն մասին, արդեօք միևնոյնը չէ՞ *Etiuni* երկիրն և Հայոց նահանգն Ուտի, Լատին և Յունաց հեղինակների — Ωτηνη**, ինչպէս վերջին ժամանակներս աշխատում է ապացուցանել Հ. Գալուստ Տէր Մկրտչեանը***. մենք քննադատելու միտք չունինք, միայն կը նկատենք, որ Ուտեաց դիրքը աւելի հիւսիսային է, քան թէ Կարուց նահանգինը Կուր գետի հովտում, Վրաստանի սահմաններում, համապատասխանում է բևեռագիր արձանագրութիւնների *Etiuni* երկրի դիրքին, վասն զի հիմք չըկայ հերքելու այն կարծիքը, թէ *Etiuni* կարող էր տարածուել աւելի հեռու դէպ ի հիւսիս, քան թէ Կարսի նահանգը և հասնել մինչև Կուր գետը։

Երկիրը *Etiuni* հանդիպում է ոչ միայն Արգիշտիի արձանագրութիւններում, այլ և նորանից առաջ էլ և յետոյ։ Այսպէս մենք նորան պատահում ենք Մենուայի և նորա հօր Իշպուինիի արձանագրութեանց մէջ [Սէյս XXXI, 3, 7, 12] հետևեալ ձևերով՝ *Etiuhini* (*Etiuhinili*) և Արգիշտիի յաջորդ՝ Սարդուրիի արձանագրութեան մէջ [Սէյս XLIX, 13]։ Այս բոլորը վկայում է *Etiuni* երկրի մեծ նշանակութեան մասին. ակներև է, որ Ուրարտեան միապետների ջանքն կովկասի սահմաններում դարձրած էր առ այն, որ նուաճեն *Etiuni* երկիրը։ Ուրեմն, բնական է ենթադրել, որ *Etiuni* երկիրը կենդրոնական աշխարհ էր Կովկասում, և ուրիշ երկիրները մասամբ կախում ունէին նորանից։ Դորանով, գուցէ, կարելի է մեկնել այն տարօրինակ իրողութիւնը, որ *Etiuni* երկիրն յիշւում է Կարս–չայից հեռու, Էլլարի արձանագրութեան մէջ, Երևանի մօտ։

Ահա Սարիղամիշի արձանագրութեան թարգմանութիւնը [N°. XXI]։

տող. 1 Ես տիրեցի քաղաքին Ահուրեանի,

» 2 քաղաքներին Աշտուահինի երկրին

» 3 . . . . . բերդ կանգնեցի,

» 4 քաղաքին Աշտուահինի ես տիրեցի,

» 5 Լուհիունի երկիրն սուզեալ (?)

» 6 . . . .

» 7 . . . . Խալդի.

» 8 Արգիշտի ասում է.

» 9 ըստ հրամանին (չաստուածի) Խալդի,

» 10 (չաստուածին) Թէիշբա (չաստուածին) Արդինի չաստուածոց, —

» 11 յաջողութիւն տան ինձ չաստուածները

» 12 երկու կանգուն (°) . . . ես իլեցի

» 13 քաղաքից Կալբախի

» 14 . . . ես բաժանեցի նոցա

» 15 100 20 100

» 16 150 6000 100

» 17 Խալդիացւոց մեծաց,

» 18 Արգիշտի, որդուն Մենուայի

» 19 արքային հզօրին, արքային երկրին Բիայնա,

» 20 որ բնակւում է քաղաքումն Տուշպա։

» 21 Արգիշտի ասում է՝

---

* Նոյնը հաստատում է և Հ. Գալուստ Տէր–Մկրտչեանը։

** *Plin.* lib, VI, cap. 13. – *Ptol.* geog. lib. V, cap. 13.

*** Труды Вост. Комм. Т. II, вып. 1, стр. 113–114 (протоколы).

տող 22 ով այս արձանագրութիւնը կ՚հե-
ռացնէ,
» 23 ով կը ջնջէ անունը այս մարդու
» 24 չաստուածների խալդի, Թէիշբա,
Արտինի

Հետեւեալ երկու տողերը անվերծանելի են։

ԳԼՈՒԽ Զ

ԳԱՌՆԸ - ԹԵՓԷ

(Eriaini)

ԱՐՄԱՒԻՐԻՑ (Արգիշտիհինիլի), բացի մեր վերը զննած ճանապարհներից, բացւում է ազատ ճանապարհ դէպ ի արեւելք և հիւսիս—արեւելք։ Դէպ ի արեւելք հովիտը շարունակւում է մինչև Երեւան, ուր տեղից շեշտակի բարձրանում է դէպ ի հիւսիս և արեւելք։ Այս տարածութեան վրայ գտնւում են ստորին հոսանքներն երկու գետերի, որոնք հոսում են երկու տարբեր կողմերից, հիւսիս—արեւմտքից Քասաղ գետի, հիւսիս—արեւելքից Հրազդանի (Զանգի)։ Առաջինը, ինչպէս արդէն ասացինք, բղխում է Արագածի հիւսիսային լանջերից, երկրորդը Սեւանայ լճի հիւսիս—արեւմտեան անկիւնից։ Մտնելով Երասխի հովիտը երկու գետերն էլ միմեանց մօտենում են, և Թեկերի ու Ջըրմուղների միջնորդութեամբ հաղորդակցում են իրար հետ։ Ներկայումս Քասաղի ափին է ս. Էջմիածինը, իսկ Հրազդանի՝ Երեւանը, երկու նշանաւոր կենդրոններ Երեւանի նահանգի, որոնք յայտնի են իւրեանց բնական ճոխութեամբ։ Հաւանական է կարծել, որ ինչպէս այժմ, այնպէս և Ուրարտեան ժամանակ, այստեղ էին նշանաւոր բնակութեան վայրերը։ Այստեղ, Քասաղի և Հրազդանի ափերին ընկնելու է այն աշխարհը, որի անունը յիշւում է բեւեռագիր արձանագրութիւնների մէջ Երեւանի անուան նմանութեամբ — *Eriaini*. Այդ ձեւով նա պատահում է Ռուսա առաջինի Գոլանը—Գաանը արձանագրութեան մէջ այն 23 աշխարհների թըւում, որ յիշեալ Թագաւորը նուաճել է, և որ Սեւանայ շրջակայքում եղած են։ *Eriaini* և Երեւան անունների նմանութիւնը այնքան մեծ է, որ ակամայ հարկադրուած ենք նոցա համեմատելու, քանի որ Երեւան* անունը բառագննական տեսակէտից անբացատրելի է Հայոց լեզւում։ Ըստ արմատին մօտ են *Eriaini*-ին Երասխի հովտում երկու այլ երկիրների անունները՝ *Eriahini* — Գայլընճայի արձանագրութեան մէջ և *Eriduahini*—Դաշպուռունի։ Դժուար չէ գուշակել, որ տիրելով Քասաղ և Հրազդան գետերի ստորին հոսանքին՝ *Eriaini* երկիրը կարող էր իւր իշխանութիւնը տարածել և այն բոլոր երկիրների վրայ, որոնք գտնւում էին այս երկու գետերի հովիտներում. և շատ հաւանական է, որ *Eriaini*—ի կենդրոնը այնտեղ էր, ուր արդի Երեւանն է, ըստ որում այս քաղաքը ունի ռազմագիտական յաջող դիրք, լինելով Երասխի հովտի հիւսիս—արեւելեան անկիւնի ծայրում։ Լեռները արեւելքից և հիւսիսից միանգամայն փակում են տափարակը և Հրազդան գետը դուրս է գալիս լեռներից դէպ ի հովիտը։ Այս տեղին տիրելով, կարելի էր անարգել ճանապարհ ունենալ դէպ ի հիւսիս և հիւսիս—արեւելք Հրազդանի հովտով։ Այժմ էլ գլխաւոր ճանապարհը դա է Երեւանի տափարակից Փոքր Կովկասից դէպ ի Մեծն Կովկաս հիւսիս—արեւմտեան ափերն Գեօկ—չայի և այլն։

Դժբաղդաբար մենք չունինք այնպիսի արձանագրութիւններ, որ վերաբերուէին յատուկ *Eriaini* երկրին. սակայն հիմք ունինք կարծելու, որ Ուրարտեան ժամանակի Երեւանը, կամ աւելի ճիշդ ասելով, *Eriaini*—ի գլխաւոր քաղաքն գտնւում էր ոչ թէ Երեւանի այժմեան տեղում, այլ փոքր ինչ մեկուսի։ Երեւանից մի վերստ հեռաւորութեան վրայ կայ մի բաւականին մեծ բլուր, որ տեղից բացւում է Երասխի հովտի տե-

---

* Ինքն ըստ ինքեան հաւանական է, որ Երեւան յատուկ անունը ոչինչ յարնչութիւն չունի «երեւան» գոյականի և ածականի հետ։

Ծան. Թարգ.

սարանը։ 1894 թ. պ. Ա. Իվանովսկի այցելեց այդ բլուրը և նորա վրայ գտաւ մի ընդարձակ բերդի հետքեր, շատ նման այն բերդերին, որոնք առհասարակ լինում են բեւեռագիր արձանագրութիւնների մօտ։ Բլուրը հայերէն կոչւում է Արեան—բերդ, իսկ թաթարերէն Գանլը—Թափա (Թեփէ)։ Դորանից 15 տարի առաջ, Ջէօմլէկճի գիւղի բնակիչներից մէկն բլրի ստորոտում գտել է մի քար բեւեռագիր արձանագրութեամբ, որ գլորուել է, երևի, բլրի վրայից։ Պ. Ա. Իվանովսկի գիտնականներից առաջինն էր, որ վերահասու եղաւ այդ բանին և քարը գնեց Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան համար։

Ահա [N.° XXII] արձանագրութիւնը, որ ընդ ամենը բաղկացած է չորս տողերից և պատկանում է Արգիշտիին։

1. Արգիշտի
2. որդի Մենուայի
3. այս բերդը շինեց
4. սոյն 10,100 քարերից։

ԳԼՈՒԽ Է

Է Լ Ա Ռ

(Uluani)

ԳԵՕԿ–ՋԱՑԻՑ դէպ ի Երևան տանող ճանապարհի վրայ, ի միջի այլոց, կայ մի գիւղ Էլառ՝ այն իսկ տեղում, ուր Հրազդանի ձախ թևը երկու ճիւղի է բաժանւում. գիւղից ոչ հեռու գտնւում է մի բեւեռագիր արձանագրութիւն, փորագրուած մի ահագին քարի վրայ և բաղկացած է տասն տողից։ Որովհետև քարը իւր մեծութեան շնորհիւ չէր կարող ուրիշ տեղից փոխադրուել և կանգնած է այն տեղ, ուր էր արձանագրութիւնը փորագրողի ժամանակին, ուստի արձանագրութեան միջի աշխարհագրական ցուցմունքն մեծ նշանակութիւն ունին մեզ համար։ Արձանագրութեան մէջ խօսւում է Ուլուանի երկրի և Դարանի քաղաքի նուաճման մասին Արգիշտիի ձեռքով։ Եթէ Դաշպուրունի արձանագրութեան մէջ մենք հանդիպում ենք Էրիտուահինի երկրին Լուհիունինի քաղաքի հետ, Ղուլիճանում, Գարան—կու գետի վրայ՝ — Կուլխաինի երկրին Դուրուբանի քաղաքի հետ, Գալընճայում Արփա—չայի վրայ — Իշկիգուլու երկրին Իրդանիունի քաղաքի հետ, եթէ միւս արձանագրութիւնների մէջ՝ Օրդակլու, Աղամխան, Ջաղալու գիւղերում, մենք հանդիպում ենք երկու անուններին միասին՝ երկրի ու քաղաքի, ուրեմն աներկբայելի է, որ իւրաքանչիւրն այդ արձանագրութիւններից ունի յիշատակարանի նշանակութիւն այն երկրի վերաբերութեամբ, ուր գտնուած է արձանագրութիւնը։ Վանի թագաւորները և մանաւանդ Արգիշտի, ըստ երևոյթին, կանոն էին սահմանել, ամենայն մի նոր նուաճուած երկրում արձանագրութիւն թողնել, ուր յիշատակում էր այդ երկրի տիրապետելու մասին։ Նոքա մեծ խնամքով ծածկում էին այս արձանագրութիւնները օտարների աչքից և նուիրում էին կամ յետագայ սերնդոց և կամ չաստուածներին, որոնց ձօնում էին նուաճուած երկիրները ու քաղաքները։ Ինձ աւելի ճիշդ է երևում վերջին ենթադրութիւնը. Նոցա (թագաւորների) կարծիքով արձանագրութիւնը միանգամ ընդ միշտ սըրբագործում էր տիրապետեալ երկիրների նըւէրը Խալդի չաստուածութեան, և կնքում էր անկապտելի տիրապետութիւնը։ Բայց ինչպէս այլուր, մենք արձանագրութիւններ ենք գտնում այն վայրերի մօտ, որ տիրապետեալ երկրի կենդրոնն պիտի լինէին, այնպէս և այստեղ Էլառում, արձանագրութեան մօտ պէտք է որոնել Դարանի քաղաքի դիրքը։ Արդարև զննելով բլուրը, մենք գտանք նորա վրայ հին ամրոցների հետքեր, որ յիշեցընում էին մեզ Արմաւիրի, Դաշպուրունի, Գանլըճայի ամրութիւններն։ Երևի այժմեան Էլառ գիւղի տեղումն էր Ուլուանի երկրի Դարանի քաղաքը։ Շատ կարող է լինել, որ Էլառ անունը, որ անհնարին է մեկնել տեղական լեզուներից, գուցէ ժամանակի ընթացքում կերպարանափոխուած է Ուլուանի ձևից։ Իսկ անուան փոխադրութիւնը եր-

կրից քաղաքի վրայ կամ նոյն երկրի կենդրոնի վրայ, մենք հանդիպում ենք և ուրիշ տեղերում։ Օրինակի համար Տուշպա քաղաքը Ուրարտեան թագաւորների օրերից՝ այժմ կոչւում է Վան՝ Բիայնա երկրի անուամբ։ Էլլարի արձանագրութիւնը ուսումնասիրելու միջոցին, պէտք է ի նկատի առնուլ այն հանգամանքը, որ արձանագրութեան սկզբի երկրորդ տողում յիշւում է *Etiuni* երկիրը, որի գրաւելն Արգիշտի վերագրում է իւր չաստուածներին։ Դժուար է թէ *Etiuni*–ն դրացի ու սահմանակից լինէր Ուլուանի երկրին ու Դարանի քաղաքին, հաւանական է, որ նոցա անջրպետում էր *Eriaḫi* երկիրը, զորան ստորագրեալ փոքր գաւառներով (օր. Ազանի). դարձեալ սխալ է պրոֆ. Սէյսի ենթադրութիւնը, իբր թէ *Etiuni*՝ Վանի արձանագրութիւնների մէջ, Վրաստանի հատուածն է, կամ առ հասարակ հիւսիսային նահանգի։

Ահա Էլլարի [N.º VI] արձանագրութիւնը.

1. Խալդիուն ես աղօթում էի, տիրող հզօրին
2. որ տուաւ երկիրն Էտիունի, Խալդի
3. տուողին, Խալդի, հզօր տուողին
4. Խալդիացւոց ողորմածաց ես աղօթում էի
5. Արգիշտիի, Մենուայի որդու համար,
6. որ նուաճեց Ուլուանի երկիրն
7. քաղաքի Դարանի երկիրն, Խալդիացւոց համար
8. մեծ, Արգիշտի որդի Մենուայի
9. արքային հզօրի, արքային մեծի, արքային երկրի Բիայնա,
10. որ բնակւում է քաղաքում Տուշպա։

ԳԼՈՒԽ Ը

ԿՈՐՏԱՆ-ՕՐԴԱԿԼՈՒ

(Kieḫuni)

ՍԵՒԱՆԱՑ լիճը իւր հիւսիս–արևմտեան եզերքներում կազմում է երկու ծոց. հիւսիսային ծոցի մօտ այժմ Ռուսաց Ելենովկա գիւղն է գտնւում. իսկ հարաւային ծոցի մօտ՝ Հայոց Օրդակլուն։ Ելենովկայից դէպ ի Նոր–Բայէզիտ տանող ճանապարհի վրայ, Օրդակլու գիւղի մօտ կայ Արգիշտի թագաւորի յիշատակարանը։ Դեռ գիւղին չհասած, 20 քայլ հեռու ջրի եզերքից, կարելի է նկատել մի շարք ոչ բարձր ժայռեր, որոնց ետևից հողը տակաւ առ տակաւ սկսում է բարձրանալ. երկու կանգուն բարձրութեան վրայ մի մեծ քարի գլխին ընկած է մի այլ աւելի փոքր քար, որի վրայ գտնւում է Արգիշտիի 9 տող արձանագրութիւնը։ Դորա մէջ խօսւում է *Kieḫuni* երկրի և Իշտիկունի քաղաքի նուաճման մասին։ Այս անունները մենք կարող ենք ընդունել իբրև բուն կոչումն այս վայրերի Ուրարտեան ժամանակը։ Դժուար է ճշդիւ որոշել այդ երկրի սահմանները, բայց ուշադրութեան առնլու է այն իրողութիւնը, որ Գեօկ–չայի այս գաւառը Հայոց տիրապետութեան օրերում կրում էր Գեղաքունի անունը, որ ծածկուած է Կիեհունի կոչման տակ։ Շատ հաւանական է կարծել, որ ոչ միայն լճի ափի այն գաւառը, որ ներկայումս մի կողմից սահմանափակւում է Ելենովկայով, միւսից Օրդակլու գիւղով, այս երկրի մասն էին կազմում, այլ և լճի հիւսիսային կողմերը, ուր Ջիբուվլու գիւղն է, որպէս և Սևան կղզին, պատկանում էին սոյն երկրին։ Թէ որչափ էր տարածւում այս երկիրը ցած Հրազդանի հոսանքով՝ դժուար է ասել, բայց ամենայն հաւանութեամբ կարելի է ենթադրել, որ *Kieḫuni*–ն միջանկեալ երկիր էր

Ուլուանիի հետ, որի կենդրոնը արդի Էլատումն էր։

Գալով Իշտիկունի քաղաքին, բնական է որոնել դորան Օրդակլուի արձանագրութեան մօտակայքում։ Եւ արդարև հարց ու փորձ անելով ես տեղեկացայ, որ գիւղի մօտիկ բլուրներից մէկի վրայ, որ լճի ափն են կազմում, կան հին շինութիւնների հետքեր։ Ես վեր ելայ այս բաւականին մեծ բլրի վրայ և տեսայ այնտեղ արդէն Դաշպուտունից ինձ ծանօթ տեսարանը։ Գետնի երեսին ընկած կոփածոյ քարերը վկայում էին՝ թէ աւազի շերտերի տակը ծածկուած են հին շինութիւնների մնացորդները։ Բայց այս բլրի տարածութիւնը աւելի ընդարձակ է, քան թէ Դաշպուտունի [N.⁰ I] արձանագրութեան մօտ եղածինը. միևնոյն լայնութիւն ունենալով դա, համարեա թէ, կէս վերստ երկայնութիւն ունի։ Մինչև անգամ տեսարանը, որ ներկայանում է դիտողի աչքին, յիշեցնում է Դաշպուտունի բլուրն, այն տարբերութեամբ միայն, որ այս վերջնից կարելի է տեսնել Երևանի լայնածաւալ և միակերպ դաշտավայրը շրջապատած լեռներով. այն ինչ Օրդակլուի բարձրաւանդակից բացւում է գեղեցիկ տեսարան Սևանայ լճի հարթ ու հաւասար մակերևոյթի վրայ, նոյնպէս պարփակուած լեռներով։ Դաշպուտունի բլրի վրայ ես ու Գ. Իվանովսկին նկատեցինք պեղումների հետքեր, մինչդեռ Օրդակլուի մօտ այդպիսի բան չէ նկատւում։

Արգիշտի մի օր ճանապարհ դնալով, կարող էր Գեօկ—չայի ափերից անցնել Սեմենովկայի վերելքը, իջնել Դիլիջանի ձորը, ուստի ազատ ճանապարհ է դէպ ի Մեծն Կովկաս, Կուր գետի հովիտը. բայց այդ ճանապարհի վրայ այն ժամանակներից չէ գտնուած ոչ մի բևեռագիր արձանագրութիւն, ոչ մի յիշատակարան, և այդ պատճառաւ մենք չգիտենք՝ փորձ փորձե՞լ է արդեօք Արգիշտին յիշեալ ճանապարհին տիրելու՝ իւր աշխարհակալութիւնները տարածելու համար այս ուղղութեամբ։ Բայց թէ այդ ճանապարհը նորա համար բաց էր և նա ի նըկատի ունէր այն իւր յառաջ խաղալու միջոցին դէպ ի հիւսիս, կասկած չկայ բնաւ։ Նոյնպէս յայտնի չէ մեզ, շարունակե՞ց նա արդեօք իւր արշաւանքը Գեօկ—չայի եզերքներով. հաւանական է կարծել, որ նա շատացաւ միայն լճի հիւսիս—արևմտեան ափերով՝ նուաճելով Հրազդանի ամբողջ հովիտը, վասն զի ուրիշ տեղերում Գեօկ—չայի մօտ մենք չենք գտնում այս թագաւորից մնացած յիշատակարաններ։

Օրդակլուի [N.⁰ VIII] արձանագրութիւնը.

1. Խալդիացւոց մեծաց
2. Արգիշտի ասում է՝
3. ես նուաճեցի քաղաքի Կիեհունի երկիրն,
4. բաժանեցի քաղաքից Իշտիկունի
5. երկիրն, որ կոչւում է «լճային»
6. . . . .
7. Արգիշտիի համար
8. արքայի հզօրի, արքայի երկրին Բիայնա
9. որ բնակւում է քաղաքումն Տուշպա։

ԳԼՈՒԽ Թ

Ա Գ Ա Մ Խ Ա Ն

(Tuliḫuni)

Իմ անձնական ծանօթութիւնս Գեօկ—չային՝ սահմանափակւում է նորա հիւսիս—արևմտեան եզերքով, ուր գտնւում է Օրդակլուի արձանագրութիւնը, սակայն իմ ընկերակից, բաւ ճանապարհորդութեան, Գ. Ա. Իվանովսկու կատարած աշխարհագրական և հնախօսական հետազօտութիւններն լճի շուրջը, և նորա՝ էստամպաժի միջնորդութեամբ՝ հանած բևեռագիր արձանագրութիւնները Գօլանը—Գուանը և Ջաղալու գիւղերում, մեզ հնարաւորութիւն են տալիս փոքր ինչ որոշ կերպով խօսելու այս տեղերի անցեալի մասին Ուրարտեան թագաւորների օրերում (Ը դար նախ քան զՔրիստոս)։ Իւր մի յօդուածում, որի խորագիրն է «Озеро Гокча» (Սևանայ լիճ), Գ. Իվանովսկի մանրամասնօրէն նկարագրում է լճի եզերեայ վայրերի ֆիզիքական պայ-

մոնները, որոնք կարող են նշանաւոր նիւթ մատակարարել խորհրդածելու համար լճի ափի բնակութիւնների մասին Ուրարտացւոց ժամանակ, որ և հաստատւում են այստեղ գտնուած արձանագրութիւններով։ Այժմ ճշգութեամբ կարելի է ասել, որ լճի արևելեան եզերքը, որ բաղկացած են ըստ բաւականին բարձր լեռնագօտիներից, երբեք բնակութեան տեղեր չեն եղած, և թէ արևմտեան եզերքն էլ՝ ի հնումն խիտ բնակութիւն չեն ունեցել։ Պատկերն, որ նկարում է Պ. Իվանովսկի, ասելով հրաբղխային յեղափոխութիւնից յառաջացած կործանումն Օրդակլուից մինչև Նոր-Բայազէտ, մեզ տրամադրում է կարծելու, որ ոչ միայն այժմ, այլ և հին ժամանակը այս բնութեամբ քանդուած գաւառը շատ սակաւ բնակիչ է ունեցած։ Ուստի շատ բնական է ենթադրել, թէ Վանի թագաւոր Արգիշտի հասնելով Օրդակլու, դադարեցրեց այստեղ իւր յաղթական արշաւանքը, հիւսիսից իւր առաջը ունենալով բամբակի դժուար անցանելի լեռնագօտին, իսկ հարաւից Իւչ-Թեփելեր լեռները լճի ափերին։ Այս խոչընդոտներին յաղթելու ծանր խնդիրը նա թողեց իւր յաջորդներին, որոնք սակայն, մասամբ միայն լուծեցին այն՝ լճի հարաւային ափերի վերաբերութեամբ. իսկ գալով արշաւանքին դէպ ի հիւսիս Մեծ Կովկասը, ինչպէս երևում է, Արգիշտիի յաջորդները չեն վստահացել կատարելու։ Արգիշտիի յաջորդ, Սարդուրի Բրդը և սորա յաջորդ, Ռուսա առաջինը մեծ յաջողութեամբ յաղթելով յիշեալ խոչընդոտներին, կատարեցին մի շարք աշխարհակալութիւններ Գեօկ-չայի արևմտեան և հարաւային կողմերում, որոնց յիշատակը յաւերժացրին իւրեանց պերճախօս արձանագրութիւններով։ Այդ յիշատակարանները գտնւում են լճի հարաւ-արևմտեան և հարաւային ափերում։ Այստեղ լեռնագօտիները, չորս կողմից պարփակելով լիճը, փոքր ինչ հեռանում են եզերքից և վայրերը ընդունում են աւելի ցած և բնակութեան համար յարմար բնաւորութիւն։ Խիստ, բայց քաջառողջ կլիմայն, ձկան առատութիւնը լճում, մշակութեան ընդունակ երկիրը, լեռնագօտիներով պաշտպանուած թշնամեաց յարձակումներից և բարձր դիրքով հասած մինչև ձիւնային գծերին, վերջապէս լճի փառահեղ գեղեցկութիւնը, իւր յեղյեղուկ, կապուտակ և սիրուն կոհակներով և բարձր, իբր թմբրած ափերով — այս ամենը հրաւիրում է բնակիչներին տօթ հովիտներից այս՝ ոչ այնքան ճոխ՝ բայց զովարար և առողջ տեղերը։ Արձանագրութիւնների թուին ու նոցա նշանակութեանը նայելով, կարելի է ենթադրել, որ Գեօկ-չայի հարաւ-արևմտեան և հարաւային եզերքը աւելի շէն էին և բնակիչներով հարուստ, քան թէ այժմ են, և այնտեղ գոյացած անկախ գաւառները քաղաքական տեսակէտից ոչ աննշան դեր էին կատարում Ուրարտեան ժամանակը։ Հաւանական է, որ Վանի թագաւորները՝ Սարդուրի Բը և Ռուսա առաջինը միջամուխ եղան Գեօկ-չայի այս եզերեայ գաւառները ոչ այն ճանապարհաւ, որով Արգիշտի հասաւ հիւսիս-արևմուտքը լճի, այսինքն է Հրբագզանի ձորով, այդ ճանապարհը շատ երկար է և դժուար Իւչ-Թեփելերի վրայից։ Նոքա կարող էին ընտրել աւելի ուղիղ ճանապարհ Երևանի տափարակից դէպ ի Մանըզարի հովիտը, ուր գտնւում է Սարդուրի Բրդի յիշատակարանը։ Պ. Իվանովսկու վկայութեամբ, այն իսկ ձորը Երևանի մօտ, որի մուտքում գտնւում է մեր տեսած Գանըլը-Թափա բլուրը, ուր գտնուեցաւ բևեռագիր արձանագրութիւն, անընդհատ ձգւում է դէպ ի արևելք, հասնում է Իւչ-Թեփելերի կատարը և ապա վերելքի միջնորդութեամբ հաղորդակցւում է մի ուրիշ ձորի հետ, որ տանում է մինչև Մանըզարի հովիտը։ Արգիշտի թագաւորը, որ շինել է Գանըլը-Թափայի բերդ և արձանագրութիւն է թողել այնտեղ, ակներև է, որ ունէր Գեօկ-չայի դոների բանալին և թեթևացրել է իւր յաջորդների համար Գեօկ-չայի նուաճումն, թէպէտ և ինքն հնարաւորութիւն ունեցած չէ տարածել իւր տիրապետութիւնը մինչև լճի եզերքը։ Սարդուրի Բրդը, նորա յաջորդը՝ առաջինն էր, որ հասել էր Մանըզարի հովիտը, ուր և թողեց արձանագրութիւն, որ գտնուեցաւ Ադամխան գիւղի մօտ

և այժմ փոխադրուած է ի Կովկասեան թանգարան Թիֆլիզում։

Ա. Իվանովսկի գալով Ադամխան, տեղեկութիւններ է ժողովել արձանագրութեան քարի տեղի մասին։ Ծերունիք ցոյց են տուել նորան մի կոյտ քարեր, ուր եղել է մի ժամանակ արձանագրութեան քարն, որ աւելի մեծ քարի կտոր է։ Տեղի պայմանները նոյն են, ինչ որ տեսանք Դաշպուռունում։ Ադամխանի արձանագրութեան ուսումնասիրութիւնը բուն իւր տեղում, ինձ միջոց տուաւ հաստատելու պրոֆ. Լեմանի ընթերցանութիւնը այն Սարդուրիի հօր անուան, որին պատկանում է արձանագրութիւնը, այսինքն Ar-gis-te-ḫi-ni-še և դորանով հերքել Սէյսի կարծիքը, թէ այս արձանագրութեան մէջ յիշուած աշխարհակալը իբր թէ չէր պատկանում Վանեան հարստութեան, այլ տեղական թագաւորներիցն էր։ Այդ թիւրիմացութիւնը ծագեցաւ արձանագրութեան փորագրելու անսովոր եղանակից, որ խուսափում է թագաւորների յատուկ անունները ընդունուած ձևով գրելուց, տարբեր են գաղափարները ու ձայնական նշանները։ Ցամենայն դէպս կասկած չկայ, որ այստեղ մենք հանդիպում ենք մեզ յայտնի Սարդուրի Բ-րդին, որդուն Արգիշտիի, որ մի քանի արձանագրութիւններ է թողել Արմաւիրում։ Արգիշտին, ինչպէս տեսանք նախընթաց գլուխներում, իւր արշաւանքները ուղղում էր դէպ ի հիւսիս, և մենք չգիտենք ինչն հարկադրեց նորան կանգնել մի կողմից Ալեքսանդրապոլի դաշտի առաջ, միւսից Բամբակի լեռների մօտ. գուցէ, նորա յառաջ խաղալն աւելորդ էր, ըստ որում փոքր Կովկասը նորա պետութեան բնական սահմանն էր, կամ կարելի է նա բաւական էր համարում տիրել Մեծ Կովկասի գլխաւոր անցքերին, յաջորդներին թողնելով իւրեանց զէնքն աւելի հեռու տանել։ Բայց նորա յաջորդները ակներև է, որ ստիպուած էին հանգամանքների բերմամբ շարժել, ոչ թէ դէպ ի հիւսիս, որ նոքա ապահով էին կարծում Արգիշտիի տիրապետութեան շնորհիւ, այլ դէպ ի արևելք։ Դորա պատճառը, դուցէ, պէտք է որոնել այն ժամանակի քաղաքական յեղափոխութեան մէջ Առաջաւոր Ասիայում։ Տիգլաթ—Պիլեսեր Գ-րդի արշաւանքները դէպ ի Ուրարտու, այս աշխարհի մայրաքաղաք Տուշպայի աւերումն, միով բանիւ Ուրարտուի պարտութիւնը Արգիշտիի փառաւոր յաղթութիւններից յետոյ, ընդ միշտ սահման դրին Ուրարտեան թագաւորների յաղթական արշաւանքներին դէպ ի հիւսիս։ Սակայն այս ձախորդութիւնները ոչ միայն չհարկադրեցին Սարդուրիին և նորա յաջորդին հրաժարուել աշխարհակալութիւններից իւրեանց այս հիւսիսային նահանգում, այլ ընդհակառակն այդ աշխարհակալութիւնները սովորական եղանակով շարունակւում էին Երասխի հովտում. անհնարին էր տիրել վերջնոյս, առանց նուաճելու այս լեռնային գաւառները, որոնք ի բնէ ամուր և բարգաւաճեալ դրութեան մէջ էին։

Ադամխանի արձանագրութեան բովանդակութիւնը տալիս է հետաքրքիր աշխարհագրական և պատմական տեղեկութիւններ։ Նա աւանդում է, թէ Սարդուրի Բ-րդը նուաճել է Տուլիհունի քաղաքը, որ այստեղ կոչւում է մայրաքաղաք տեղական թագաւորի Սինալիբի, որդու Լուերիի և Վանի միապետը գերի բռնելով յիշեալ Սինալիբի թագաւորին իւր բոլոր տնով, արանց ու կանանց հետ դուրս է տարել երկրից։ Քաղաքի մայրաքաղաք կոչիլն (գաղափարագիրը կարդացւում է «արքայական քաղաք, արքայանիստ»), պատահում է միանգամ Դաշպուռունի արձանագրութեան մէջ, ուր Լուհիունինի քաղաքը նոյնպէս կոչւում է մայրաքաղաք։ Գուցէ պատահական բան պէտք է համարել, որ միւս քաղաքները, նուաճուած Երասխի հովտում, չեն կոչւում մայրաքաղաք, թէ և դոքա այդ նշանակութիւնը ունէին. ինչ և իցէ, այստեղ մենք հանդիպում ենք մի փոքր պետութեան, որ նոյնքան անկախ էր, որքան Էրիտուահի Դաշպուռունի մօտ։ Այս արձանագրութեան մէջ մենք գտնում ենք նաև բուն երկրի անունը, որին պատկանում էր յիշեալ մայրաքաղաքը, այն է՝ Էգուրիետինի։ Երկիրն նուաճելով զրկեցաւ իւր անկախութիւնից և ազգային հարստութիւնից։ Դա կրկին առաջին դէպքն է, որ Անդրկով-

կառի սահմաններում գրաւուած երկիրներում Վանի Թագաւորները զինուորական բանութիւններ են գործ դնում։ Ուշուրինարինի երկրի տարածութիւնը մեծ չէր. դա ձգւում էր Մանըշարի հովտով դէպի հարաւ, հագիւ մինչև Աղիեաման գետը, ըստ որում զորանից յետոյ մենք տեսնում ենք ուրիշ իշխանութիւններ Գեօկ–չայի հարաւային եզերքում։ Այդ փաստերը առիթ են տալիս մեզ ենթադրելու, թէ Ուրարտեան ժամանակը հարաւ–արևմտեան եզերքը Գեօկ–չայի ունէին խիտ ազգաբնակութիւն և կազմում էին անկախ, ուրոյն գաւառներ։

Ագամխանի արձանագրութիւնը [N. XIV]

1. Ագատ Խալդիացւոց
2. Սարդուրի, որդի Արգիշտիի,
3. առում է՝ քաղաքը Տուլիհունի, քաղաք արքայական,
4. Սինալիբիի, որդու Լուեբիի,
5. իբր աւար նուաճեցի. Սինալիբի
6. Թագաւորի, արանց կանանց ես հանեցի,
7. բաժանեցի երկրից Ուշուրինարինի։

ԳԼՈՒԽ Ժ

ՋԱՂԱԼՈՒ

(Arḳuḳini, Urtaini)

Սարդուրի Բ՛ արձանագրութիւնն, Ջաղալու գիւղի մօտ, գտնըւում է հարաւային, կամ աւելի ճիշդ Գեօկ–չայի հարաւ–արևմտեան ափերում։ Ա. Իվանովսկի հանեց բաւականին յաջող էստամպաժ այս վերին աստիճանի հետաքրքիր արձանագրութիւնից։ Ըստ հետազօտութեան պ. Իվանովսկու, լճի հարաւային ափերի մի մասն Գօլանը–Գռանը գիւղից մինչև Ջաղալու, բաղկացած է հրաբղխային բաղադրութիւնից, և միայն Ջաղալուից գետինը ընդունում է դաշտավայրի տեսքը։ Այստեղ սկսվում է Մազրայի հովիտը, որ գոյացել է Մազրա գետի հոսանքից, որ բղխում է Սիւնեաց լեռներից (Ղարապաղի լեռ)։ Անկասկած, այստեղ հարաւում և հարաւ–արևելքում գըտնըւում էր այն երկիրը Արկուկինի, որի նուաճման մասին խօսւում է Ջաղալուի արձանագրութեան մէջ։ Ուշադրութեան առնըլու է այն հանգամանքը, որ այս արձանագրութեան մէջ չէ խօսւում այդ երկրի գլխաւոր քաղաքի մասին, և բացի Արկուկինին էլ մի այլ *Urtaḫini* երկրի մասն է երևում, որից Սարդուրի Բը զատել է դորան։ Այստեղ մենք առաջին անգամն ենք հանդիպում *Urartu* երկրի Ուրարտեան անուանը, որ մինչև այժմ յայտնի էր միայն Ասորեստանեան աղբիւրներից։ Ակներև է, որ դա չունէր այն ընդարձակ նշանակութիւնը, որ վայելում էր Ասորեստանի արձանագրութիւններում, այսինքն՝ չէր նշանակում ամբողջ Վանեան պետութիւն, այլ նորա իմաստը շատ սահմանափակ էր։ Տարաբաղդաբար այնքան համառօտ ու կցկտուր են Վանի արձանագրութիւնների տուած աշխարհագրական տեղեկութիւնները, որ մենք ոչ միշտ կարող ենք քաղել նոցանից փոքր ի շատէ հաստատուն տեղեկութիւններ։ Ո՞րտեղ էր *Urtaḫini* երկրի կենդրոնը, ո՞րչափ հեռու և ի՞նչ ուղղութեամբ էր տարածւում դա Գեօկ–չայի հարաւային ափերից — ահա խնդիրներ, որ չափազանց մեծ նշանակութիւն ունեն Ուրարտուի պատմութեան համար։ Բայց յամենայն դէպս *Urtaḫini* երկրի (= *Urartu*) գտնուիլն Անդրկովկասի սահմաններում, Երասխի հովտում միանգամայն հաստատում է իմ արտայայտած կարծիքը, (*«Клинообразныя надписи Ванскихъ Царей», Труды Восточной Коммиссіи, Т. I, вып. III.* էջ 400–401), թէ հին աշխարհս Ուրարտու՝ համապատասխանում է յետին ժամանակների Այրարատեան աշխարհին, և թէ նորա կենդրոնի փոխադրութիւնը հիւսիսից հարաւ, Վան քաղաքը, յետոյ տեղի ունեցաւ՝ քաղաքական և ռազմագիտական նպատակներից։ Բայց Ասորեստանի տարեգրերը, որ արձանագրում էին իւրեանց էջերում Ասորեստանեայց Թագաւորների պատերազմները Ուրարտուի դէմ դեռ այն ժա֊

մանակը, երբ այս պետութիւնը տակաւին Երասխի հովտումն էր գտնըւում (Սալմանասար Բ.), յետոյ էլ գործ էին ածում հին անունը, կոչելով Վանի (Տուշպա) թագաւորներին ոչ թէ Բիայնայի թագաւորներ, ինչպէս նոքա ինքն իրանց անուանում էին, այլ Ուրարտուի թագաւորներ։ Յուսանք, որ ապագայ գիւտերը մեր առջև աւելի կը պարզեն այն դերը, որ կատարում էր Urtaḫini երկիր՝ Ուրարտուի յետին և հնագոյն ժամանակներում։ Մեր ձեռքի տակ եղած տեղեկութիւններից երևում է, որ Urtaḫini-ն ազատ երկիր էր այն միջոցին, երբ Սարդուրին տիրապետելով Գեօկ—չայի հարաւային ափերին, կտրեց միայն նորանից Arkukini գաւառը։ Արդ՝ որովհետև Երևանի ամբողջ տափարակը արդէն նուաճուած էր, ուստի կարելի է կարծել, թէ Urtaḫini-ն գտնըւում էր լեռնային կողմերում Երևանից դէպ ի արևելք։

Զաղալուի արձանագրութիւնը [N. XV]

1. Խալդիուն ես աղօթում էի, հզօր տիրոջ,
2. որ տուաւ Արքուքինի (Արկուկինի) երկիրը,
3. Սարդուրի ասում է՝ մօտենալով (?)
4. ես նուաճեցի Արքուքինի երկիրը,
5. բաժանեցի երկրից Ուրտահինի
6. Խալդիացւոց մեծաց
7. Սարդուրի, որդի Արգիշտիի
8. արքային հզօրի, արքային մեծի, արքային երկիրների, արքային արքայից,
9. որ բնակւում է քաղաքումն Տուշպա։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԳՕԼԱՆԸ-ԳՌԱՆԸ

Վանի թագաւորների Գեօկ—չայում կատարած աշխարհակալութեանց ամենանշանաւոր յիշատակարանը, որպէս և համայն Անդրկովկասում, այն արձանագրութիւնն է, որ փորագրուած է Ջրի եզերքի մի ժայռի վրայ, Սևանայ լճի հարաւային ափի մէջտեղում։ Այստեղ, ոչ հեռու Թաթարաց Գօլանը—Գռանը (Келаны-Кирланы և Հայոց Ալաչալու (Алучалу)) գիւղերից, դէպ ի լիճը դուրս է ցցուած փոքր լեռնագօտու մի հրուանդան։ Ժայռի պատի վերին ճակատին կայ մի ընդարձակ բևեռագիր արձանագրութիւն, բաղկացած 19 տողերից։ Արձանագրութիւնը յայտնի էր դեռ 1862 թ. Մեսրովբ արքեպիսկոպոսը ընդօրինակելով զայն, լոյս էր ընծայել « Համբաւաբեր Ռուսիոյ » հանդիսում 1863* թուականին։ Պրոֆ. Սէյսը, իւր Վանի արձանագրութիւնների հետազօտութեան մէջ, այսպիսի կարծիք է յայտնում այս արձանագրութեան մասին. Unfortunately his copy, published in le Nouvellist russe, is so hopelessly bad that hardly a word in it is recognizable։ Որովհետև Ազամխանի և Զաղալուի արձանագրութիւնները պատկանում են Սարդուրի Բ-ին, նա (Սէյսը) ենթադրում է, թէ այս արձանագրութիւնն էլ Սարդուրինն է։ Վերջին ժամանակներս շատ փորձեր եղան ընդօրինակելու այս արձանագրութիւնը, որ գրաւում էր իւր վրայ ուսումնականների ուշադրութիւնը իւր բացառիկ դիրքով Կովկասեան այլ յիշատակարանների մէջ, իւր անսովոր ընդարձակութեամբ և երկրի այս գաղափարագրի յաճախակի կրկնութեամբ։ Վերջին հանգամանքը յոյս էր տալիս կարծելու, թէ արձանագրութեան մէջ շատ կարևոր աշխարհագրական տեղեկութիւններ կան։ Բայց 30 տարուայ ընթացքում անհնարին եղաւ ի մօտոյ հետազօտելու արձանագրութիւնը, վասն զի բոլոր ջանքերն ընդօրինակելու զայն՝ ի զուր անցան. նա այնքան բարձր է ջրի մակերևութից, որ անկարելի է հասնել նորան առանց երկար գերաններ անկելու ու նոցա վրայ տախտակամած շինելու, որ դժուարին գործ է Գեօկ—չայի նման մի տեղում։ Պրոֆ. Սէյսը Մոսկվայի Կայսերական Հնագիտական ընկերու-

* Համբաւաբեր Ռուսիոյ հանդէսի հրատ. էր Ջ. Մսերեանց.։ Ծան. Թարգ.։

թեան նամակներում յոյս է տածում, թէ ռուս գիտութիւնը կը հոգայ այդ մասին և կ'աշխատէ լուսանկարել տալ յիշեալ արձանագրութիւնը։ 1889 թ. գերմանացի ուսումնական Վալդեմար Բելկը շատ աշխատեցաւ այդ նպատակին հասնելու համար՝ նա, երեք ժամ ջրի մէջ կանգնած մինչև գօտին, հազիւ կարողացաւ օրինակել արձանագրութեան $1/6$ (այսինքն՝ 3 տող 19—ից)։ Ընդօրինակած մասն, նորա խօսքով, ճիշդ ցուցանում է, որ իբր թէ արձանագրութիւնը պատկանում է Սարդուրի երկրորդին, ինչպէս ենթադրում էր Սէյսը։ Մի և նոյն ժամանակ նա պնդում էր, թէ արձանագրութեան լուսանկարը կամ էստամպաժը ոչինչ նշանակութիւն չեն կարող ունենալ հրատարակութեան համար և միայն բնագրի ուշադրութեամբ ուսումնասիրելուց կարելի է վերծանել այն։

Հասկանալի բան է, որ մեր գիտնական ճանապարհորդութեան գլխաւոր նպատակներից մէկն էլ էր, գոհացուցիչ կերպով ընդօրինակել Գօլանը—Գառնի արձանագրութիւնը, և այդ դժուար գործը մեծ յաջողութեամբ գլուխ բերեց իմ ճանապարհորդակից ընկեր Գ. Իվանովսկին. դորանից լուսագրյնը անկարելի է յուսալ։ Արձանագրութեան ստորին մասն միայն քայքայուած է, Ճաքեցեալն չնայելով 3000 տարուայ հնութեան, բաւարար կերպով պահպանուած է։ Վերջապէս մեր ջանքերը պսակվեցան փառօք և մենք կարող ենք հաղորդել մեր ուսումնասիրութեան արդիւնքը։ Արձանագրութիւնը պատկանում է ոչ թէ Սարդուրի Բ՛ն, այլ Ռուսա Բ՛ն, այն հռչակաւոր ժամանակակիցն Ասորեստանի թագաւոր Սարգոնի (722—705), որ բոլոր հիւսիսային ազգերի գլուխ անցնելով, մահու ու կենաց պատերազմ էր մղում վերջինիս դէմ։

Սարգոնի թագաւորութեան տարեգրերը լի են այս ահեղ պատերազմների նկարագրութեամբ, ուր դոցա դիւցազնը ըստ մեծի մասին կոչւում է ոչ թէ Ռուսա, այլ Ուրսա (Ուրծա), թէև առաջին անունն էլ պատահում է։ Ռուսա առաջինից և առհասարակ նորա յաջորդներից մինչև Ռուսա Բ՛ն (ժամանակակիցն Աշուրբանիպալի (668—626), որ 100 տարի ուշ ապրեցաւ, մինչև ցայսօր գտնուած չէր և ոչ մի արձանագրութիւն։ Սէյսը մինչև անգամ կարծում էր, թէ Ուրարտու քաղաքական դրութիւնը պատերազմի ժամանակ և պարտութիւնից յետոյ Սարգոնի օրերում, չէր նպաստում մեծ յիշատակարաններ կանգնելու, այս ուրեմն նոցա որոնելն էլ աւելորդ է։ Ռուսա երկրորդը արձանագրութիւնների մէջ կոչւում է որդի Էրիմէնի, իսկ Ռուսա առաջինը մեր արձանագրութեան մէջ — որդի Սարդուրիի։ Այսպէս լուծւում է խնդիրն Ասորեստանեայց արձանագրութիւնների Ուրսայի յարաբերութեան մասին Սարդուրի Բ՛ վերաբերութեամբ։ Բնական էր ենթադրել, յենելով ժամանակագրական հիմանց վրայ, թէ Ուրսա՝ որդին էր Սարդուրիի. բայց միայն այժմ գա ապացուցուած պատմական իրողութիւն է դառնում և Վանեան հարստութեան 5 թագաւորների վրայ, որոնք հօրից որդի յաջորդաբար թագաւորելով Վանում, թողել են մեզ բեւեռագիր արձանագրութիւններ, մենք պիտի աւելացնենք վեցերորդը, որ ամենանշանաւոր դերը կատարեց Ասորեստանի պատմութեան մէջ։ Այս արձանագրութիւնից նախ և յառաջ երևում է, որ Ուրսա առաջինը, չնայելով իւր ալէկոծ և ողբերգական կերպով վերջացած թագաւորութեան, զօրաւոր պատերազմներ մղելով Ասորեստանի դէմ ժամանակ է գտնում շարունակելու անընդհատ գործը իւր հօր Սարդուրի Բ-րդի հիւսիսային նահանգում և յատկապէս Գեօկ—չայի ափերում։ Մենք տեսանք, որ Սարդուրի Բ՛ իւր աշխարհակալութիւնները կենդրոնացնում էր բացառապէս Գեօկ—չայի մօտիկ երկիրներում. նորա յաջորդ Ռուսա առաջինը, նոյնպէս գործում էր այստեղ, և այս թագաւորից մնացած միակ յիշատակարանը վկայում է այն մեծ եռանդի և յաջողութիւնների մասին, որով նա նուաճել է այս հին Ուրարտուն։ Դորա մէջ Ռուսա աւանդում է 23 երկիրների նուաճման մասին, որոնց անունները յիշւում են արձանագրութեան մէջ։ Կովկասի ժայռերի վրայ գտնուած արձանագրու-

Թւականներից և ոչ մէկի մէջ մենք չենք տեսնում այդքան երկար ցուցակ նուաճեալ աշխարհների. դոքա բոլորը յիշատակարաններ են ուրոյն տիրապետութեան, յատկապէս այն երկրի ու քաղաքի, որոնց սահմաններում կանգնած էր յիշատակարանը։ Մեր արձանագրութիւնը չունի բնաւ այդ բնաւորութիւնը, այլ յիշատակարան է Ռուսայի համայն գործունէութեան և բոլոր աշխարհակալութիւնների Ուրարտուի մէջ և ամփոփում է նորա յաղթութիւնների արգասիքը։

Ահա ինչու արձանագրութեանս աշխարհագրական ակնարկները, չնայելով իւրեանց մանրամասնութեան, չէ կարելի ճշդութեամբ յատկացնել որոշ վայրերին։ Կարելի է միայն գուշակել, որ Սևանայ լիճը և յատկապէս նորա հարաւային ափը այն կէտն էր, ուստի նա սկսեց իւր արշաւանքները դէպ ի ուրիշ կողմեր։ Չենք կարծում, որ լճի սահմանակից երկիրները կարողանային երկար զբաղեցնել այս թագաւորին. ըստ արձանագրութեանց Սարդուրի Բ, Գեօկ—չայի բոլոր մարդաբնակ տեղերը արդէն նորա իշխանութեան ներքոյ էին. երկիրն Ուդուրիեաինի՝ Ցուլիհունի քաղաքով հարաւ—արևմտքում, Արքուքինի երկիրը հարաւում արդէն նուաճուած էին։ Միթէ այս անձուկ տարածութեան վրայ պիտի որոնենք միւս երկիրները, որ մնում էին նորա յաջորդին տիրապետելու։ Դա անհնարին է, միանգամայն և մենք կարծում ենք, որ արձանագրութիւնը բովանդակում է իւր մէջ և այն երկիրների անունները, որոնք հեռու են Գեօկ—չայից, թէ և յիշատակում է նաև Գեօկ—չայի մօտիկ գաւառը, որի սահմաններում դա կանգնած է։ Մեզ թւում է, որ այդ գաւառը կամ երկիրը Արքուքինի է, որի նուաճման մասին աւանդում է Սարդուրի Բը Ջաղալուի արձանագրութեան մէջ։ Սակայն այդ նուաճումն կատարեալ չէր. մենք վերը նկատեցինք, որ Սարդուրի Բը Ջաղալուի արձանագրութեան մէջ խօսում է՝ միայն երկրի նուաճման և նորա անջատման մասին Ուրտահինի երկրից, բայց չէ յիշում գլխաւոր քաղաքի առման մասին, ինչպէս մենք տեսանք կովկասեան ժայռերի միւս արձանագրութիւնների մէջ։ Այս իրողութիւնը մեզ առիթ է տալիս ենթադրելու, թէ այդ քաղաքը նուաճուած չէր, ուրեմն երկրի վերջնական և կատարեալ նուաճումն պատկանում էր նորա յաջորդին։ Եւ արդարև Գօլանը—Գաանը գիւղի արձանագրութեան մէջ նուաճեալ երկիրների թւում առաջին տեղում յիշւում է Արքուքինի։ Նա չէ յիշւում ոչ *Kiehuni* երկիրը (Օրդակլու), ոչ Ուդուրիեաինի (Ադամխան), որոնք, ակներև է, որ նուաճուած էին առաջ, մէկը Արգիշտիի ժամանակ, միւսն Սարդուրիի, այլ յիշւում է միայն Արքուքինի, որի նուաճումն սկսել էր նորա հայրը, և վերջացրել ինքն։ Ուրիշ երկիրներ Գեօկ—չայի մօտ դժուար էր սպասել ի նկատի առնելով լճի անձուկ ափերը և նորա ֆիզիքական պայմանները։ Բայց հաւանական է այն ենթադրութիւնը, թէ Գօլանը—Գաանի արձանագրութիւնը գտնւում է այն իսկ տեղում, ուր էր կամ Արքուքինի երկրի մայրաքաղաքը և կամ դորա նշանաւոր բերդերից մէկն։ Տարաբաղդաբար մենք չունինք այդ տեղի Ուրարտեան անունը, որ կորել է։ Արձանագրութեան կէսն և վերջին տողերը մասամբ ջնջուած են ալիքների կոծումից, որոնք ուժգին ալէկոծութեան ժամանակ հասնում են մինչև արձանագրութիւնն. բայց այնտեղ խօսւում է պալատների, տաճարների շինութեան մասին և այդ պատճառաւ սպասելի է նաև այն տեղի անունը, ուր դոքա (շէնքերը), կառուցուած էին։ Հիմք ունինք կարծելու, թէ այդ տեղը՝ այստեղ Գեօկ—չայի ափումն էր, արձանագրութեան մօտ. ըստ որում դորա մասին վկայում է բառացի իմաստն արձանագրութեան (այս պալատը ես նորոգեցի) և այն հետաքրքիր հանգամանքը, որ դորա մէջ երկիցս յիշւում է Թէիշբաա աստուածի անունը, որ երկրորդ տեղն է բռնում Ուրարտեան երրորդութեան մէջ (Խալդի, Թէիշբաա, Արդինի)։ Թէիշբայի գաղափարագիրը նման է Ասորեստանի աստուած Ռամմանի գաղափարագրին, որ մթնոլորտի, որոտման, կայծակի և առհասարակ ջրային տարերց աստուածն էր։ Տարակոյս չկայ, որ Թէիշբայի և Ռամմանի

բնաւորութիւնը մէկ է։ Տաճարն, որի շինութեան մասին խօսում է արձանագրութեան մէջ, ձօնուած էր այս չաստուածին և դա շատ հաւանական է. վասն զի Սևանայ մեծ լիճը նորա խոժոռ ժայռերով, հողմերով և ալէկոծութեամբ, գեղեցիկ կապուտակ կոհակներով, կենդանեաց ճոխութեամբ, կարող էր համարուիլ իբրև բնակութեան տեղի ջրային տարերց չաստուածի։ Շատ կարելի է, որ վայրի ժայռոտ հրուանդանը Գօլանը—Գառանը գիւղի մօտ բովանդակում էր իւր մէջ Ուրարտու բերդերից մէկն, որ հիմնուած կամ նորոգուած էր Ռուսա Բե ձեռքով։ Նման իւր պապ Արգիշտի առաջնին, որ իւր քաղաքական կենդրոնը հիմնել էր Արմաւրում. իսկ վերջնիս հայրը Մենուան Դաշպուռունում (Լոհերունինի—Մենուահինիլի), Ռուսա առաջինը երրորդ ամրութիւնը հիմնեց Գեօկ—չայում, որ գուցէ, կոչւում էր Ռուսահինիլի։ Մենք գիտենք, որ Վանի մօտ կայ բերդի աւերակներ, որ կոչւում էր Ռուսահինիլի, որ հաւանական է, թէ պատկանում է Ռուսա առաջնին։

Այսպէս Ռուսա առաջինը կնքեց Գեօկ—չայի տիրապետութիւնը, որ սկսել էին նորա նախնիքը։ Խնդիր է, թէ որտե՞ղ պէտք է որոնել մնացեալ 22 աշխարհների դիրքը, որոնք յիշւում են արձանագրութեան մէջ։ Նախ և յառաջ նկատելու է որ բոլոր 23 երկիրները բաժանւում են երկու դասի, առաջին դասին վերաբերւում են 4 երկիր (Adaḫuni, Uelida, Kumeruḫi, և Arḳuḳini), որոնք մի հասարակ անուամբ կոչւում են Suinia, եթէ միայն մեր ընթերցանութիւնը ճիշդ է. երկրորդ դասին պատկանում են միւս 19 երկիրները (Ubimeni, Sanatuaini, Teriuišaini, Rišuaini, Zuaini, Akuaini, Amanini, Irḳimaini, Elaini, Erieltuaini, Aidamaniuni, Guriaini, Alzirani, Piruaini, Melaini, Ušeduini, Aṭazaini, Eriaiṃini, Azameruini), որոնք հասարակ անուամբ կոչւում են Riduaini.

Ցաւալի է, որ առաջին երկու նշանների ընթերցանութիւնը այնքան էլ հաստատուն չէ, բայց այնու ամենայնիւ հաւանական է երևում և հնարաւորութիւն է տալիս քանի մի խորհրդածութիւններ անելու։ *Suinia* կոչումն սկզբնական հասարակ անուն է «լիճ, աւազան», բայց յետոյ կարող էր յատուկ անուն նշանակել և յատկապէս «լիճ Գեօկ--չայի»։ Այս կոչումն *Suinia* միանգամայն ծածկւում է Հայոց Սիւնիք անուամբ, որ պատկանում էր Հայոց հին նահանգին. վերջինս ընդգրկում էր բոլոր Գեօկ—չայի և այն գաւառները, որոնք գտնըւում էին սորա արևելեան և հարաւային կողմերում։ Որովհետև այս *Suinia* նահանգի մասն էր Արքուքինի գաւառը, որ, անկասկած, Գեօկ—չայի հարաւային ափերումն էր, ուստի *Suinia* անունը ոչ թէ միայն ձայնական այլ և աշխարհագրական նշանակութեամբ համապատասխանում է Սիւնիք անուան, որովհետև գոնէ մէկն Գեօկ—չայի գաւառներից դորան էր պատկանում։ Գուցէ միւս գաւառներն էլ նորա մասն էին կազմում, սակայն յիշուած չեն, վասն զի նոցա նուաճումն չէր կատարուած Ռուսա առաջինի ձեռքով։ Իսկ ինչ որ վերաբերւում է մնացեալ երեք երկիրներին, բնական է կարծել, որ դոքա Գեօկ—չայի արևելեան և հարաւ—արևելեան կողմերումն էին Ղարապաղի լեռների և Շահ—սաղի սահմաններից դուրս։ Գ. Խլանովսկու վկայութեամբ յիշեալ լեռների ձորերը և ճանապարհները նոցա վրայից անցանելի են և անցքեր են բացում դէպ ի գետերի հովիտները, որոնք բղխում են փոքր Կովկասի արևելեան կողմերից, արդի Գանձակի նահանգի սահմաններում։ Այս նահանգն հնագիտական տեսակէտից տակաւին ուսումնասիրուած չէ և այնտեղ էլ կարելի է յուսալ, որ բևեռագրեր գտնուին։

Գալով մնացեալ 19 երկիրներին, որոնց միաւորիչ կենդրոնն էր *Riduani* (Ռիդուանի), պէտք է որոնել դոցա Երասխի հովտում և լեռնային անցքերում, որոնք տանում են Երասխից դէպ ի Գեօկ—չայ։ Յօգուտ այս ենթադրութեան վկայում է այն հանգամանքը, որ դոցա թւումն է և *Eriaini* երկիրն, որ մենք նմանացրինք Երևանին։ Մենք գիտենք, որ այս երկրի սահմաններում արդէն եղել է Արգիշտի և կառուցել է Գանլը—Թափայում մի յիշատակարան

(բևեռագիր արձանագրութիւն). բայց ոչ նա ինքն, ոչ էլ նորա հայրը չէ վերջացրել գործը նուաճումն. հաւանական է, որ այս երկրումն էին լեռնային անցքերը Երևանի տափարակի արևմտքից և հարաւ—արևմտքից դէպ ի Գեօկ—չայի աւազանը, որոնց տիրելն վիճակեցաւ Ռուսա առաջինին։ Իմ էջմիածնական բարեկամ, գիտնական աբեղայ Գալուստ Տէր—Մկրտչեանը իմ խնդիրքով ուղարկեց ինձ իւր դիտողութիւնները Գուլանը—Գառնի արձանագրութեան աշխարհագրական անունների մասին։ Մեզ մանաւանդ շատ յաջող է երևում *Guriaini* երկրի անուան բաղդատութիւնը *Garni* այսինքն՝ այս գետի արդի ձորի հետ, ըստ որում այս ձորը ամենայարմար և կարճ ճանապարհ է Երասխի հովտից դէպ ի Գեօկ—չայ և հին ժամանակներից նշանաւոր էր Հայոց պատմութեան մէջ. այդ տեղումն էին Հայաստանի երևելի մայրաքաղաքները Արտաշատ, Դուին։ Նոյնպէս զուրկ չէ հիմունքից *Aidamaniuni* երկրի անուան համեմատութիւնը Աղեաման գետի անուան հետ, որ Թաթարացն է և յօրինուած է հին Ուրարտական անունից։ Պակաս հաւանական են երևում հետևեալ համեմատութիւնները՝ *Piruaini* = Ապարան, *Melaini* = Մողնի, Ušeduini = Օշական, որ մեզ փոխադրում են Գեօկ—չայից դէպ ի Արագածի լեռնային սիստեմը։ Բայց սոյն դէպքումն էլ չէ կարելի անպայման հերքել այս երկիրների Գեօկ—չայի աւազանից դուրս գանուելու հնարաւորութիւնը։ Մենք դժուարանում ենք ըմբռնելու, թէ ինչպէս այս փոքր և բնակութեան անյարմար տարածութեան վրայ, ինչպէս Գեօկ—չայն է՝ իւր լեռներով ու ձորերով, կարող էին գտնեղուիլ այսքան բազմաթիւ անկախ պետութիւններ, որոնց իւրաքանչիւրն ունէր անկախ կառավարիչներ թագաւորի անուամբ. ուստի տրամադիր ենք ենթադրելու, որ արձանագրութեանս աշխարհագրական հորիզոնը աւելի լայն էր, քան թէ Գեօկ—չայն է իւր լեռներով։ Երասխի հովիտը հարաւ—արևելեան ուղղութեամբ դէպ ի Նախիջևանը կարող էր մեծ ասպարէզ ներկայացնել աշխարհակալութեան համար, այնպէս և ընդարձակ Արագած չէր կարող նուաճուած լինել մի թագաւորի օրերում և Արգիշտիի գործը այստեղ էլ, ինչպէս Գեօկ—չայում կարող էր շարունակել ու վերջացնել նորա թոռն Ռուսա առաջինը։ Եթէ մեր ընթերցանութիւնը *Riduani* անուան ճիշդ է, շատ հաւանական է նորա յարընչութիւնը *Eriduahi* երկրի անուան հետ, որ Երասխի հովտումն էր և կենդրոնն Լուհիունինի (Դաշտպուռուն) էր։ Արդեօք *Riduani*—ն փոփոխուած ձևն չէ՞ր *Eriduaḫi* կամ *Eriduaḫini*, ըստ որում մասնիկն *ḫi* նշանակում է սեպհականութիւն, պատկանելն (որդի). իսկ *e* կարող էր մի կերպ զեղչիլ։ Յամենայն դէպս *Riduani* երկիրը պէտք է որոնել Գեօկ—չայից դուրս, որ Սիւնեաց աշխարհումն էր, այլ շուտով Երասխի հովտում. ուստի աշխարհագրական տեսակէտից *Riduani*—ի համեմատութիւնը *Eriduaḫini*—ի հետ շատ հաւանական է թւում մեզ։

Դիտելով Վանի թագաւորների աշխարհակալութիւնները Սևանայ լճի ափերում, մենք տեսնում ենք, որ այդ աշխարհակալութիւնները կատարվեցան Երասխի աջ և ձախ ափերի հովտի նուաճումից յետոյ՝ Երևանի տափարակում։ Բաց ի Դաշտպուռունի մօտ եղած Լուհիունինի քաղաքից, Արմաւրում—Արգիշտիհինիլուց, որոնք կենդրոններ էին Մենուայի և Արգիշտիի օրերում, Գեօկ—չայում Ռուսա առաջնի ժամանակ մենք գտնում ենք նոր կենդրոն, որ կոչեցինք Ռուսահինիլի։

Այստեղ դարձեալ մենք չենք կարող լռութեամբ անցնել Հայոց աւանդական աշխարհակալութեանց ընթացքը, որ նկարագրուած է Մ. Խորենացւոյ առաջին գրքի ԺԲ գլխում, այլ պիտի համեմատենք այն Ուրարտեան աշխարհակալութեանց ճշմարիտ ընթացքի հետ։ Մենք արդէն ցոյց տուինք ԱՐԱԳԱԾ, գլխում թէ որչափ Մ. Խորենացւոյ աւանդութիւնը Արմաւրի, Արագածի, Շիրակի և Ցոլակերտի մասին հաստատուն հիմք ունի այն մութ յիշատակութիւնների մէջ, որոնք վերաբերում են այս վայրերի պատմութեան Ուրարտեան ժամանակաշրջանին։ Բայց աւանդութիւնը՝ Երևանի տափա-

բակի նուաճումն և նորա կենդրոնում Արմաւրի շինութիւնը պատմելուց յետոյ, փոխադրում է մեզ ուղղակի Գեօկ—չայի ափերը։ Դա պատահեցաւ Արմաւրի շինող Արմայիսի թոռն Գեղամի ժամանակ։ «Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր. և թողեալ զՀարմայ յԱրմաւիր՝ հանդերձ որովք բնակէրն, և ինքն գնաց զմիւս լերամբն արեւելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ։ Շինէ զեզրն ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ, և զշէնսն՝ Գեղաքունի, որով կոչի և ծովն»։ Արձանագրութիւններից մենք գիտենք, որ արդարև Արգիշտի Արմաւրից (Արգիշտիհինիլի) գնաց դէպ ի հիւսիս—արևելք Գեօկ—չայի մօտ և տիրեց այնտեղ երկրին Kieḫuni (= Գեղաքունի), ապա, նորա յաջորդները Սարդուրի Բ և Ռուսա Ա նուաճեցին այս լճի բոլոր ափերը։ Գեղամի որդի Սիսակի անուամբ բոլոր տեղերը լճի մօտ կոչուեցան Սիւնիք։ Գեօկ—չայի երկու բևեռագիր արձանագրութիւնների մէջ Օրդակլու և Գոլանը—Գառանը գիւղերում մենք գտնում ենք Suinia անունը, որ նշանակում է լիճ, աւազան։ Այդ անունը չէր կարող արդեօք Գեօկ—չայի և բոլոր նահանգի յատուկ անունը դառնալ, նահանգի, որ Գեօկ—չայի աւազանումն էր գտնուում։

Բաղդատելով այս ամենը վերը յիշածների հետ, մենք դարձեալ մատնացոյց ենք լինում մեր նկատած այն իրողութեան վերայ, թէ Հայոց աւանդութիւնը՝ Հայերի ձեռքով Երասխի հովտի նուաճելու՝ մասին, արձագանգ է Ուրարտեան աշխարհակալութեանց։ Այդ աւանդական աշխարհակալութեանց ընթացքը միանգամայն համապատասխանում է Մենուայի, Արգիշտիի, Սարդուրի Բ-ի և Ռուսա առաջնի իրօք կատարած աշխարհակալութեանց կարգին։

Գոլանը—Գառանի արձանագրութիւնը [N. XVIII]։

1. խալդիացւոց ողորմածաց . . . Ռուսա,
2. Որդի Սարդուրիի ես, երբ այս երկիրը
3. մի վարչութեան (°) . . . . . ենթարկվեցաւ,
4. երկիրն Ադահունի, երկիրն Ուէլիկա, երկիրն Կամերուհի,
5. երկիրն Արքուքինի 4 թագաւորներ աշխարհին, որ կոչւում է «լճային»,
6. երկիրն Ուպիմենի, երկիրն Ծանատուաինի, երկիրն Տէրիուխշաինի,
7. երկիրն Ռիշուաինի, երկիրն Ջուաինի, երկիրն Ակուանի, երկիրն Ամանինի,
8. երկիրն Իրկիմաինի, երկիրն Էլաինի, երկիրն Լաիէլտուաինի,
9. երկիրն Ախդամանիունի, երկիրն Գուրիաինի, երկիրն Ալգիրանի
10. երկիրն Գիրուաինի, երկիրն Մելաինի, երկիրն Ուշեդուինի
11. երկիրն Ատագայնի, երկիրն Էրիաինի, երկիրն Ազամերունինի,
12. 19 թագաւորներ աշխարհին, որ կոչւում է Ուիդուանի, հեռաւոր երկրի,
13. հարկատու ընդ ամենը 23 թագաւոր միասին ես արի.
14. այր (և) կին Բիայնա երկիրը ես դուրս հանեցի այս տարի
15. . . ես նորոգեցի Ռուսա պալատներ
16. . . . երկիրներ . . . .
17. չաստուածին Տէիշբա այս տաճարը կործանուած ես նորոգեցի
18. չաստուած Տէիշբա . . . .
19. (բոլոր տողը ջնջուած է) . . . .

* * *

Մենք վերջացրինք ռուս ուսումնական Պ. Մ. Նիկոլսկու այս երկի թարգմանութիւնը, համարեա թէ ամբողջութեամբ, բաց թողնելով քանի մի մանրամասնութիւնները, որոնք չեն վնասում բնաւ գրքի լրութեանը։ Պ. Նիկոլսկու այս աշխատութիւնը, որ մի ամիս դորանից առաջ արժանացաւ Ս. Պետերբուրգի Ռուսաց Հնագիտական Ընկերութեան կողմից, ոսկէ մետալի մրցանակին, ամենայն իրաւամբ կարելի է նորա գրուածքների գլուխ գործոց համարել։ Ռուս գիտնական աշխարհը, գոնէ, այսպէս գնահատեց իւր քննքարաւոր անդամակցի գործը։ Վերջինս արժանի է և մեր խորին ուշադրութեան. և ով որ փոքր ի շատէ ծանօթ է

Մ. Խորենացւոյ պատմութեան եւրոպացի քննադատների գրուածքներին, նա անշուշտ, մեծ հաճութեամբ կը կարդայ ռուս ուսումնականի այս երկասիրութիւնը։ Լակրոզից սկսեալ մինչև Կարրիերը, ծերունի Խորենացուն գատափետում էին ոչ պակաս քան քան հինգերորդ դարու տգէտ աբեղաները, որոնք, ըստ Ղազարու Փարպեցւոյ վկայութեան, «զսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի գետ արկանել»։ Այժմ շնորհիւ Գ. Նիկոլսկու գեղեցիկ երկասիրութեան և մի շարք խորիմաստ և սրամիտ ենթադրութիւնների Հայոց Պատմութեան ճշմարտախօս, բարեպաշտ և Թերևս միամիտ հայրն, դարձեալ պիտի արձանանայ իւր բարձր պատուանդանի վրայ, գրաւելով իրան պատշաճ տեղն հայ դպրութեան էջերում։ Զուր տեղը չէր, որ Խորենացուն Հայոց Հերոդոտոս էինք անուանում. Հայաստանի և Հայոց հընագոյն աւանդութիւնները նորա պատմութեան մէջ են ամփոփուած, Հայոց յետագայ դարուց պատմագիրների նախահայրը ու նախատիպն դարձեալ Խորենացին էր. վերջինս իւր պատմութիւնը սկսելով առաջին մարդուց՝ հասցնում է մինչև իւր օրերը. նոյնը անում են առհասարակ և միւս մեր պատմագիրները։ Եթէ Խորենացին ապրած լինէր Ը դարի վերջում կամ Թ–ի սկզբում, կարո՞ղ էր արդեօք նա զանց առնել 100 տարուայ արաբացւոց տիրապետութիւնը Հայաստանում, երբ Հայաստանը տակն ու վրայ էր լինում Արաբիոյ աշխարհակալների երեսից. վերջապէս, ո՞վ կը ներէր Խորենացուն, Ըրդ դարում, նորա յունամոլ բարքը, երբ Բիւզանդիոնի կարճատես քաղաքականութեան տխուր յիշատակը Հայաստանի վերաբերութեամբ չորրորդ տիեզերական ժողովից մինչև այդ ժամանակը շատ թարմ էր մեր նախնեաց մտքում։ Հերակլ կայսեր գործած ճնշումն Եզր կաթողիկոսի վրայ Է դարում յաւիտենական արատ կը մնայ Յունաց պատմութեան վրայ, և Խորենացին եթէ ապրած լինէր Ը դարում, իբր պատմաբան չէր կարող չհասկանալ իւր հայրենակիցների զայրոյթը Յունաց դէմ, ապա ուրեմն, չէր յանդգնիլ հանդէս հանելու իւր յունամոլութիւնը։ Քննադատներից շատերը փոխադրելով Խորենացուն Ե դարուց մինչև Ը կամ Թ դարն, առարկում են թէ նորա պատմութեան մէջ կան ակնարկներ ու իրողութիւններ, որոնք իբր թէ վերաբերւում են Է և Ը դարերին*։ Հայր Գարագաշեանի, Հ. Բարսեղ Սարգսեանի և Գ. Ս. Մալխասեանի ջատագովութիւնը Խորենացւոյ պատմութեան, կարծես, անհերքելի անցան եւրոպացի քննադատների համար։ Բայց ահա ս. Էջմիածնի միաբան Հ. Դալրուսաը, ուսումնասիրելով ս. Էջմիածնի հարուստ մատենադարանում եղած Խորենացու պատմութեան մօտ 28 օրինակ ձեռագիրները, նկատում է, թէ Խորենացու գիրքը հին Հայոց դըպրոցներում դասագիրք էր աշակերտների ձեռքում, և ուսուցիչները դաս աւանդելու միջոցին Խորենացու խրթին դարձուածքները փոխարինում էին լուսանցքներում՝ աւելի հասկանալի ոճերով, որով այլափոխում էին բնագիրը։ Այստեղից արդէն պարզ է, թէ ինչու՞ Խորենացու պատմութեան մէջ պատահում են դարձուածներ, որոնք հինգերորդ դարուց դուրս են և այդքան զէնք են տուել նորա նոր քննադատների ձեռքը։ Այժմ քարերն են սկսում խօսել այդ կրիտիկոսների դէմ իւրեանց բևեռագիր արձանագրութիւններով. գոքա են Խորենացւոյ պատմութեան անկեան վէմերը և շատ պերճախօս են նոքա, որովհետև 3000 տարուայ հնութեան կնիքն են կրում իւրեանց վրայ։ Խորենացին իրաւունք ունէր Մար—Աբասին, իւր աղբիւրներից մէկն ճանաչելու. դա անհարազատ աղբիւր չէր, փոյթ չէ թէ Մար—Աբասը երկու դար Քրիստոսից առաջ, թէ յետոյ էր ապրում. այդ հանգամանքը չէր կարող արգիլել նորան հին աւանդութիւններ հաւաքելու, որոնց վրայ Խորենացին ձևեց Հայկազեանց հարստութեան պատմութիւնը։ Այդ հարստութեան առաջին նահապետների կատարած աշխարհակալութիւնները Հայաստանում հարաւից դէպ ի հիւսիս, ապա հիւսիսային—արևելք դէպ ի Սևանայ լիճը,

* Տե՛ս Գուտշմիդ, Կարրիեր և Գր. Խալաթեանց։

ինչպէս նկատում է Գ. Նիկոլսկին, հեռաւոր ու մթին արձագանգ են Ուրարտացւոց թագաւորների Մենուայի, Արգիշտի Ա՛, Սարդուրի Բ՛ և Ռուսա Ա՛ սխրագործութիւնների. այն բազմաթիւ մանր ու անկախ թագաւորութիւնները ու իշխանութիւնները, որոնց դարերի ընթացքում նուաճում էին Ուրարտուի յիշեալ միապետները, ի՞նչ էին, եթէ ոչ Հայոց նախարարութիւնների նախատիպը: Վաղարշակի հարցին, թէ «ուստի՞ նախարարութիւնքս՝ որ աստ կան» (Խոր. Գիրք Ա գլ. Թ) պատասխանում են բևեռագիր արձանագրութիւնները: Մի շարք Հայոց իշխանական անունների ունի վերջաւորութիւնը ոչինչ կապ չունի ունիմ բայի հետ, ինչպէս մեկնում է Խորենացին, այլ Ուրարտացիներից է մնացել, ինչպէս տեսնում ենք համարեա ամենայն մի բևեռագիր արձանագրութեան մէջ: Խորենացու պատմութեան շատ աշխարհագրական և յատուկ անունները ստուգւում են դարձեալ բևեռագրերից օր. Բիայնա = Վան, Տուշպա = Տոսպ, Ուրարտու = Արարատ, Էրիախինի = Երևան (ըստ Նիկոլսկու) Ահուրիանի = Ախուրեան, Կիեհունի = Գեղաքունի, Սուինիա = Սիւնիք, Գուպիախինի = Գառնի (ըստ Գ. Տէր-Մկրտչեանի), Ուշեգունինի = Ուշական, Օշական, Մենուաշէ = Մանաւազ, Ուրսա = Ուրծ? Ուէլիկա = Ուտի, Ռիշուախինի = Ռշտունի (?), Ատազայնի = Արտազ (?): Վերջապէս շատ երկիրների ու հին քաղաքների դիրքը, ինչպէս տեսանք, ճշդւում են նոյն բևեռագիրներից Արմաւիր, Փառախոտ, Ցոլակերտ, և այլն:

Եթէ այժմ դիմելու լինինք պատմութեան, ակամայ պիտի հարցնենք, թէ արդեօք Խորենացու Արամ քաջ նահապետի անուան տակ չէ՞ ծածկւում դիւցազնական Արամէ թագաւորը, որ, ինչպէս յայտնի է Ասորեստանեայց թագաւոր Սալմանասար Բ՛ (860–825) արձանագրութիւնից, ունէր հզօր թագաւորութիւն Երասխի վրայ. Արամայի՝ այսինքն՝ քաղաք Արամէի) մայրաքաղաքով: Դարձեալ՝ Արամ նահապետի որդի՝ Արայ գեղեցիկը պատերազմ մղելով Ասորեստանի թագուհի Շամիրամի դէմ, քաջութեամբ մեռնում է կռուի դաշտում. այս աւանդութիւնը կրկին յիշեցնում է մեզ Ուրարտացւոց Ռուսա Ա՛ ահեղ պատերազմները Ասորեստանի միապետ Սարգոնի (722–705 Թ.) դէմ և Ռուսայի ողբերգական մահը: Միով բանիւ Հայաստան աշխարհի հնագոյն պատմութեան վերաբերեալ աւանդութիւնները, որոնց խուլ արձագանգները պահպանել է Խորենացին իւր պատմութեան առաջին գրքում, սկսում են կամաց կամաց պարզուել շնորհիւ Վանի բևեռագիր արձանագրութիւնների վերծանութեան: Յուսանք, որ շատ արձանագրութիւններ դեռ կը գտնուին, որոնք նոր լոյս կը սփռեն Մ. Խորենացու պատմութեան մութ կէտերի վրայ: Պարիսի ազգային մատենադարանում նոր գտնուած Մար-Աբասի ձեռագիր գրուածքը զուրկ չէ իւր նշանակութիւնից թէ և այդ գիւտը, ինչպէս երևում է, նոր չէր Գ. Կարրիերի համար, որ հազիւ մի քանի խօսք նուիրեց դորան Ամսօրեայ Հանդէսի էջերում, գլանալով աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդել: Այստեղ կնքում ենք մեր խօսքը, հրաւիրելով հայ ընթերցողին անձամբ կարդալ և ուսումնասիրել Գ. Նիկոլսկու գիտնական երկը: